



British Embassy
Yerevan



European Bank
for Reconstruction and Development



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ARMENIA
INVESTMENT COUNCIL



UKaid
from the British people



Իրավիճակի վերլուծության հաշվետվություն

Նախագիծ՝ Կանաչ աճը ՓՄՁ-ների համար Հայաստանում

Իրականացվում է ՎՁԵԲ-ի կողմից, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

Սույն վերլուծությունը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

Մարտ, 2022

Բովանդակություն

1	5	
1.1	Ծրագրի ներկայացում	5
1.2	Ամփոփում	8
2	19	
2.1	ՀՀ սոցիալ-տնտեսական հիմնական պարամետրերը	19
2.2	ՓՄՁ-ները Հայաստանի տնտեսությունում	24
2.3	ՀՀ աճի ռազմավարությունը և ՓՄՁ-ները	35
3	41	
3.1	Ցածր արտանետումներով աճ	46
3.2	Ռեսուրսների արդյունավետություն	47
3.3	Սոցիալական ներառականություն	49
4	51	
4.1	ՀՀ կանաչ տնտեսության հիմնական համեմատական ցուցանիշները	51
4.2	ՀՀ ՓՄՁ-ներում կանաչ տնտեսության սկզբունքների և մեխանիզմների ներառումը	61
4.3	Ոլորտային վերլուծություն	62
5	90	
5.1	Ընթացիկ քաղաքականություն և գործողություններ	91
5.2	Ակնկալվող զարգացումներ	94
5.3	Բացեր և հնարավորություններ	95
	Հավելված Ա – Բացատրական բառացանկ	97

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ի դինամիկան	19
Գծապատկեր 2. ՀՆԱ-ի իրական աճի տեմպի դինամիկան	19
Գծապատկեր 3. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի դինամիկան	20
Գծապատկեր 4. Գյուղատնտեսական արտադրանքի դինամիկան ՀՀ-ում	21
Գծապատկեր 5. Արտահանման և ներմուծման դինամիկան ՀՀ-ում	22
Գծապատկեր 6. Գնաճի դինամիկան ՀՀ-ում	22
Գծապատկեր 7. ՀՀ մշտական բնակչության դինամիկան	23
Գծապատկեր 8. Գործազրկության ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում	24
Գծապատկեր 9. ՀՀ-ում գործող տնտեսվարող սուբյեկտների կառուցվածքը (2018թ)	26
Գծապատկեր 10. Տնտեսվարող սուբյեկտների բաշխումն ըստ ոլորտների (2018թ)	27
Գծապատկեր 11. ՓՄՁ-ների բաշխումն ըստ ոլորտների (2018թ)	27
Գծապատկեր 12. ՓՄՁ-ների տարածքային բաշխումը (2018թ)	28
Գծապատկեր 13. Տնտեսվարողների բաշխումն ըստ Երևանի և ՀՀ մարզերի (2018թ)	28
Գծապատկեր 14. ՓՄՁ-ների հասույթի բաշխումն ըստ ոլորտների (2018թ)	29
Գծապատկեր 15. Տնտեսվարողների շրջանառության կառուցվածքն ըստ ոլորտների (2018թ)	29
Գծապատկեր 16. Վարձու աշխատողների բաշխումն ըստ ոլորտների ու տնտեսվարողների տիպի (2018թ)	30
Գծապատկեր 17. ՓՄՁ-ների վարձու աշխատողների բաշխումն ըստ ոլորտների (2018թ)	31
Գծապատկեր 18. Տնտեսվարողների կողմից ստեղծված ավելացված արժեքի բաշխումն ըստ ոլորտների (2018թ)	31
Գծապատկեր 19. ՓՄՁ-ների կողմից ստեղծված ավելացված արժեքի բաշխումն ըստ ոլորտների (2018թ)	32
Գծապատկեր 20. ՀՆԱ-ի նկատմամբ համախառն ավելացված արժեքի հարաբերակցության բաշխումն ըստ տնտեսվարողների (2018թ)	32
Գծապատկեր 21. ՓՄՁ-ների կողմից ստեղծված ավելացված արժեքի հարաբերակցությունը ՀՆԱ-ի ըստ հիմնական ոլորտների (2018թ)	33
Գծապատկեր 22. CO ₂ ինտենսիվության ցուցանիշները	53
Գծապատկեր 23. Էներգիայի արդյունավետության ցուցանիշները	54
Գծապատկեր 24. Էներգախնայունության ցուցանիշները	54
Գծապատկեր 25. Առաջնային էներգիայի առաջարկի ցուցանիշները	55
Գծապատկեր 26. Վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ցուցանիշները	55
Գծապատկեր 27. Վերականգնվող էներգետիկայի կշիռը Էլեկտրաէներգիայի արտադրությունում	56
Գծապատկեր 28. Բնապահպանական ռիսկի ցուցանիշները	56
Գծապատկեր 29. Բարելավված խմելու ջրի հասանելիության ցուցանիշները	57
Գծապատկեր 30. Մակերեսային ջրերի ցուցանիշները	57
Գծապատկեր 31. Բուսածածկ տարածքների մեծության ցուցանիշը	58
Գծապատկեր 32. Գյուղատնտեսական տարածքների մեծության ցուցանիշները	58

Գծապատկեր 33. Բնապահպանական կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաների մշակման ցուցանիշները	59
Գծապատկեր 34. Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան ՀՀ-ում	70
Գծապատկեր 35. Վնասակար նյութերի մթնոլորտային արտանետումների բաշխումն ըստ տնտեսության ոլորտների	71
Գծապատկեր 36. Թափոնների առաջացման դինամիկան ՀՀ հանքարդյունաբերությունում	72
Գծապատկեր 37. Մնդի արդյունաբերության դինամիկան ՀՀ-ում	73
Գծապատկեր 38. ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման դինամիկան	75
Գծապատկեր 39. Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը 2020թ.	76
Գծապատկեր 40. ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի փաստացի և սկնկավոր հզորությունը	78
Գծապատկեր 41. Շինարարության ծավալի դինամիկան ՀՀ-ում	79
Գծապատկեր 42. Շինարարության ոլորտի թափոնների դինամիկան	80
Գծապատկեր 43. Մարդատար ավտոմեքենաների ներմուծման դինամիկան ՀՀ-ում	83
Գծապատկեր 44. Առևտրի շրջանառության դինամիկան ՀՀ-ում	87
Գծապատկեր 45. ՀՀ ՏՏ ոլորտի ընկերությունների հասույթի դինամիկան	89

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը ՀՀ-ում	9
Աղյուսակ 2. Կանաչ աճի ՀՀ ցուցանիշների ամփոփում	10
Աղյուսակ 3. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը ՀՀ-ում	25
Աղյուսակ 4. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը Եվրոպայում	25
Աղյուսակ 5. ՓՄՁ քաղաքականության համաթվի ցուցանիշները ՀՀ համար (2020թ.)	34
Աղյուսակ 6. ՀՀ ՓՄՁ ոլորտի SWOT վերլուծություն	37
Աղյուսակ 7. Համեմատական վերլուծության համար ընտրված ցուցանիշներ	52
Աղյուսակ 8. Կանաչ աճի ՀՀ ցուցանիշների ամփոփում	59

1 Ծրագրի ներկայացում և ամփոփում

1.1 Ծրագրի ներկայացում


«Կանաչ աճը Հայաստանում ՓՄՁ-ների համար» ծրագիրն իրականացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսավորմամբ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՁԵԲ) աջակցությամբ և Հայաստանի ներդրումային խորհրդի համակարգմամբ:

Հայաստանի ներդրումային խորհուրդը դասվում է 12 ներդրումային խորհուրդների շարքին, որոնք աջակցվում են ՎՁԵԲ-ի կողմից՝ ֆինանսավորվելով Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամ»-ից և կազմելով ՎՁԵԲ-ի «Ներդրումային միջավայրի և կառավարման» նախաձեռնության մի մասը: Ներդրումային խորհուրդները կարևոր դեր ունեն իրենց երկրներում գործարար և ներդրումային միջավայրը բարելավելու մեջ՝ պետություն-մասնավոր երկխոսության հարթակ տրամադրելով կառավարությանը, մասնավոր հատվածին և միջազգային գործընկերներին՝ բացահայտելու բիզնեսի և ներդրողների համար հիմնական մարտահրավերները և ձևավորելու դրանց համար անհրաժեշտ բարեփոխումները:

Ծրագիրը նպատակ է հետապնդում խթանել հայաստանյան ՓՄՁ-ներում կանաչ աճի սկզբունքների ներդրման գործընթացը՝ ներկայացնելով դրանց առավելությունները և տնտեսական հնարավորությունները: Որպես առանձին նպատակներ նշվում են՝

1. Հայկական ՓՄՁ-ների գործունեության մեջ կանաչ աճի մեխանիզմների և սկզբունքների ինտեգրման հնարավորության ուսումնասիրություն:
2. ՀՀ ՓՄՁ-ներում կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման խնդիրների մանրամասն վերլուծություն:
3. Սույն ծրագրի առաջարկությունները ՓՄՁ ռազմավարության մեջ ներդնելու համար ՀՀ կառավարության և դոնորների համագործակցության համակարգում:
4. ՀՀ ՓՄՁ-ներում կանաչ աճի սկզբունքների ներդրման և կանաչ ֆինանսավորման հասանելիության մեծացման համար ճանապարհային քարտեզի մշակում:
5. Ըստ հնարավորության՝ ուսումնասիրության արդյունքների ինտեգրում և գենդերային հավասարության հիմնահարցերի ներառում ՓՄՁ ռազմավարության մեջ:
6. Աջակցություն Էկոնոմիկայի նախարարությանը կանաչ աճի հասանելիության բարձրացման հարցում:
7. ՀՀ յուրաքանչյուր մարզում 50 ՓՄՁ-ների համար դասընթացների իրականացում՝ ներկայացնելով տեղեկություններ կանաչ աճի հնարավորությունների և բիզնեսում դրանց ներդրման վերաբերյալ:

Ծրագիրը բաղկացած է մի քանի փուլերից, որոնք ներառում են իրավիճակի վերլուծություն, հնարավոր քայլերի ճանապարհային քարտեզի կազմում, խորհրդատվությունների տրամադրում և դասընթացներ:



Սույն վերլուծությունն այդ ծրագրի առաջին քայլն է: Դրա նպատակը ՀՀ տնտեսությունում և հատկապես ՓՄՁ-ների շրջանում կանաչ աճի սկզբունքների ներդրման ներկա իրավիճակի ներկայացումն ու առկա հիմնական բացերի հայտնաբերումն է հետևյալ ուղղություններով՝

- 1. Պետական քաղաքականություն ՓՄՁ-ների ոլորտում.** Ճատ կարևոր է հասկանալ, թե պետական մակարդակով ինչ քաղաքականություն է վարվում ՓՄՁ ոլորտի աջակցության և արդյունավետության ապահովման համար: Ել ավելի կարևոր է իմանալ, թե այս համատեքստում ինչ բացեր կան և ինչպիսի հարցեր են դուրս մնացել պետական քաղաքականության շրջանակներում: Այլ կերպ ասած, այս ուղղությունը ենթադրում է պետական մակարդակով ընդունված փաստաթղթերի ուսումնասիրություն և դրանցում առկա բացերի հայտնաբերում:
- 2. Պետական քաղաքականություն կանաչ աճի մասով.** Այս ուղղությունը ենթադրում է կանաչ աճի մասով պետական քաղաքականության մանրամասն ուսումնասիրություն, որի արդյունքում հնարավոր կլինի հասկանալ, թե պետական մակարդակով ինչ է արվում կանաչ աճի սկզբունքների ներդրման խթանման ու խրախուսման նպատակով և բացահայտել այն խնդիրների շրջանակը, որոնց բավարար անդրադարձ չի կատարվում, որոնք սակայն կարող են էական դրական ազդեցություն ունենալ իրավիճակի վրա:
- 3. Պետական և մասնավոր հատվածի կարողություններ.** Կանաչ աճի սկզբունքների ներդրման տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե պետական և մասնավոր հատվածները, ինչ կարողությունների են տիրապետում: Այս առումով կարևոր նշանակություն ունի առանցքային ոլորտների վերլուծությունը՝ կանաչ աճի տեսանկյունից և հատկապես ՓՄՁ-ների վրա շեշտադրումով: Նման վերլուծությունը թույլ կտա հասկանալ առանձին ոլորտներում առկա իրավիճակը, վերհանել բացերը և նշմարել զարգացման հնարավոր ուղղությունները:

4. Փաստացի ցուցանիշներ և արդյունավետություն կանաչ տնտեսության մասով.

և վերջապես, իրավիճակի համապարփակ և ամբողջական գնահատման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն փաստացի ցուցանիշները: Սա ենթադրում է կանաչ աճը և ՓՄՁ-ների գործունեությունը լավագույնս բնութագրող ցուցանիշների համեմատական վերլուծություն, ինչը թույլ կտա հասկանալ ոչ միայն ներկա իրավիճակը, այլ նաև պատկերացում կազմել կատարվող գործողությունների արդյունավետության վերաբերյալ: Նման վերլուծությունը նաև հնարավորություն կընձեռի հասկանալ բարելավումների ներուժ ունեցող ուղղությունները:

Իրավիճակի վերլուծությունն իրականացնելիս կիրառվել են մի քանի մեթոդաբանական մոտեցումներ: Նախ և առաջ իրականացվել է **քանակական տվյալների վրա հիմնված հետազոտություն**, որի միջոցով հավաքագրվել են մի շարք վիճակագրական տվյալներ, որոնք բնութագրում են ՀՀ սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը, ՓՄՁ-ների դերը ՀՀ տնտեսության մեջ, ՀՀ տնտեսության առանձին ոլորտների գործունեությունը, ինչպես նաև կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման գործընթացի արդյունավետությունը: Այլ կերպ ասած, հիմք է ստեղծվել քանակական, ինչպես նաև որակական գնահատականների համար: Ընդ որում, տվյալները հավաքագրվել են, ինչպես ՀՀ-ի, այնպես էլ մի շարք այլ համադրելի երկրների համար:

Արդյունքում իրականացվել է նաև համեմատական վերլուծություն, որի շրջանակներում գնահատվել է ՀՀ դիրքը կանաչ աճի սկզբունքների ներդրման տեսանկյունից: Բացի այդ, իրականացվել է նաև ոլորտային վերլուծություն ՀՀ տնտեսության համար, որի նպատակը համապատասխան ոլորտներում՝ հատկապես ՓՄՁ-ներում, կանաչ աճի սկզբունքների ներդրման արդյունավետությունը բացահայտելն էր:

Հետազոտության տվյալների աղբյուր են հանդիսացել.

1. ՀՀ վիճակագրական կոմիտեն,
2. ՀՀ Կենտրոնական բանկը,
3. Համաշխարհային բանկը,
4. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, և
5. Մի շարք այլ կազմակերպություններ և տվյալների բազաներ:

Բացի այդ ուսումնասիրվել են կանաչ աճի սկզբունքների մեթոդաբանական հիմունքները, ինչպես նաև ՓՄՁ-ներին և կանաչ աճին վերաբերող ՀՀ հիմնական պետական փաստաթղթերն ու ծրագրերը: Այս մեթոդը հնարավորություն է տվել պատկերացում կազմել կանաչ տնտեսության և աճի սկզբունքների էության, ինչպես նաև այդ ոլորտում ՀՀ պետական քաղաքականության վերաբերյալ: Արդյունքում վեր են հանվել պետական քաղաքականության մասով առկա այն խնդիրները, որոնց լուծումը դրական կանոնադաշտնաբեր իրավիճակի հետագա զարգացման վրա: Այս մասով ավելի շատ տրվել են որակական գնահատականները: Վերլուծությունը նաև հաշվի է առել ՓՄՁ ոլորտում գենդերային հավասարության խնդիրները կանաչ տնտեսություն ձևավորելու տեսանկյունից:

1.2 Ամփոփում

Վերլուծության արդյունքում արվել են հետևյալ հիմնական եզրահանգումները:

1.2.1 Հայաստանի տնտեսությունը և ՓՄՁ-ները

Տնտեսական հիմնական ցուցանիշները	Հիմնական դիտարկումներ
ՀՆԱ	<ul style="list-style-type: none"> 2020թ.-ի ճգնաժամային տարում գրանցվեց 7.4% տնտեսական անկում, որի արդյունքում անվանական ՀՆԱ-ն 6.5 տրլն դրամից (2019թ.) նվազեց մինչև 6.2 տրլն դրամի (2020թ.): 2021 թվականը ևս բավական դժվար ստացվեց՝ պատերազմի հետևանքների և շարունակվող համաճարակի պատճառով, սակայն տնտեսությունը վերադարձավ դրական աճի գոտի և աճը կազմեց 5.7%:
Բնակչություն	<ul style="list-style-type: none"> 2021 թվականի սկզբին ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 2.96 մլն. մարդ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 0.12%-ով: Բնակչության գերակշիռ մասը կազմել է քաղաքային բնակչությունը՝ 1.89 մլն. մարդ, ընդ որում 1.09 մլն. մարդ բնակվել է մայրաքաղաք Երևանում:¹
Գնաճ	<ul style="list-style-type: none"> 2021թ. արձանագրվեց 7.2% գնաճ: ՀՀ կենտրոնական բանկը վերաֆինանսավորման դրույքը բարձրացրեց մինչև 7.75%: Եվս 0.25 տոկոսային կետ ավելացվեց արդեն 2022 թվականի փետրվարին, ինչի արդյունքում վերաֆինանսավորման դրույքը դարձավ 8%:
Արտաքին առևտուր	<ul style="list-style-type: none"> 2021թ. արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 17.7%-ով՝ կազմելով 8.4 մլրդ դոլար: Արտահանումն ավելացել է 19.1%-ով՝ կազմելով 3.0 մլրդ դոլար, մինչդեռ ներմուծման ծավալն աճել է 16.9%-ով՝ կազմելով 5.4 մլրդ դոլար:
Ոլորտների աճը	<ul style="list-style-type: none"> 2021թ. առևտրի ծավալը աճել է 7.6%-ով, նախորդ տարվա 11.7% անկումից հետո: Տարվա կտրվածքով առևտրի շրջանառության ծավալը կազմել է շուրջ 780 մլրդ. ՀՀ դրամ: 2021թ. ծառայությունների ծավալն աճել է 7.8%-ով, մինչդեռ 2020թ. արձանագրվել էր 14.7% անկում: 2021թ. շինարարության ոլորտը աճել է 2.6%-ով՝ կազմելով 457 մլրդ. դրամ: Արդյունաբերությունը 2021թ. աճել է ընդամենը 4.2%-ով: 2021թ. ՀՀ է այցելել ավելի քան 870 հազար մարդ, որը կազմում է 2019թ. 46% -ը: 2021թ. 1.4% անկում արձանագրվեց գյուղատնտեսությունում՝ ընդհանուր կազմելով 776 մլրդ դրամ:

ՓՄՁ-ները Հայաստանում դասակարգվում են ըստ ստորև բերված չափանիշների՝

¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե:

Աղյուսակ 1. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը ՀՀ-ում

Կատեգորիա	Աշխատողների միջին ցուցակային թիվ	Հատույթ (մլն դրամ)	կամ	Ակտիվների հաշվեկշռային արժեք (մլն դրամ)
Գերփոքր	մինչև 9	մինչև 100		մինչև 100
Փոքր	10-49	100-500		100-500
Միջին	50-249	500-1,500		500-1,000

Աղբյուր՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենք

- ՓՄՁ-ները առանցքային դեր են խաղում ՀՀ տնտեսական կյանքում: Մասնավորապես, ՀՀ բոլոր տնտեսվարողների 99.8%-ը ՓՄՁ-ներ են: Հենց ՓՄՁ-ներն են գեներացնում բոլոր տնտեսվարող սուբյեկտների շրջանառության 58%-ը:
- ՓՄՁ-ներից 51.9%-ը գործունեություն են ծավալում մայրաքաղաք Երևանում:
- ՓՄՁ-ների ըստ շրջանառությամբ գրեթե 58%-ը գործում են առևտրի ոլորտում, որին հաջորդում է մշակող արդյունաբերությունը՝ ՓՄՁ-ների 13%-ը:
- ՓՄՁ քաղաքականության համաթվի կանաչ տնտեսության ցուցանիշով ՀՀ-ն զիջում է Արևելյան գործընկերության գրեթե բոլոր երկրներին՝ բացի Ադրբեջանից և 2016թ. ի վեր ամենափոքր առաջընթաց արձանագրած երկիրն է:

1.2.2 ՀՀ աճի ռազմավարությունը և ՓՄՁ-ները

ՓՄՁ ոլորտին վերաբերվող երկու հիմնական պետական քաղաքականությունը որոշող փաստաթղթերն են՝

- ՓՄՁ պետական աջակցության մասին ՀՀ օրենքը,
- ՓՄՁ զարգացման ռազմավարությունը, որը նախատեսված է 2020-2024թթ. համար:

Համապատասխան վերը նշված փաստաթղթերի ՓՄՁ-ների աջակցության և դրանց արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ-ում գոյություն ունի աջակցության լայն գործիքակազմ, որոնցով շեշտը դրվում է իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավման, ֆինանսական և այլ աջակցության վրա:

Համապատասխան ռազմավարությունը սահմանում է հետևյալ թիրախները՝

- Արտադրողականության աճ՝ տարեկան 6%,
- ՓՄՁ-ում զբաղվածների աճ՝ տարեկան 3.2%,
- Գլոբալ ձեռնարկատիրության ցուցիչ (Global entrepreneurship index)՝ 40 (միավոր):

Ակնկալվում է, որ ռազմավարության շնորհիվ ՓՄՁ-ներում մեկ զբաղվածի կողմից ստեղծված ավելացված արժեքի ցուցանիշը կկազմի 12 մլն դրամ՝ 2018 թվականի 6.7 մլն դրամի համեմատ:

ՓՄՁ զարգացման ռազմավարության մեջ չկան կանաչ թիրախներ և կանաչ աճին, ինչպես նաև այս ոլորտում գեոէներաժիև հավասարության ապահովման ուղղված գործողություններ:

1.2.3 Կանաչ տնտեսության սկզբունքները և կանաչ աճի մոդելները

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը սահմանում է կանաչ տնտեսությունը որպես մարդու բարեկեցության և սոցիալական հավասարության արդյունքներից մեկը, որը զուգորդված է բնապահպանական ռիսկերի նշանակալի կրճատումով:²

Կանաչ տնտեսությունն ունի երեք հիմնական բնութագրիչ կամ բաղադրիչ.

1. **Արտանետումների ցածր մակարդակ.** ցածր արտանետումներով աճը ենթադրում է այնպիսի ռազմավարությունների մշակում և կիրառություն, որոնք կնպաստեն կայուն տնտեսական աճին, որը կունենա հնարավորինս ցածր արտանետումներ:
2. **Ռեսուրսարդյունավետություն.** ռեսուրսարդյունավետությունը ենթադրում է այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք նպաստում են ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը՝ արդյունքում երկարացնելով դրանց կյանքը և նվազեցնելով դրանց ամբողջ կենսացիկլի հետ կապված բնապահպանական ազդեցությունը:
3. **Սոցիալական ներառականություն.** ներառականությունը ենթադրում է հասարակության խոցելի խավերի համար կանաչ տնտեսության զարգացման գործընթացներին մասնակցելու և դրանց վրա ազդեցություն ունենալու հնարավորությունների ստեղծում:

1.2.4 ԶԶ կանաչ տնտեսության հիմնական համեմատական ցուցանիշները և ԶԶ ՓՄՁ-ներում կանաչ աճի սկզբունքների ներդրումը

ԶԶ ցուցանիշների համեմատական վերլուծության համար վերցվել են Արևելյան Եվրոպայի երկրների (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Հունգարիա), Վրաստանի, Բելառուսի, ինչպես նաև ԵՄ միջինացված ցուցանիշները: Տվյալները հիմնականում 2019թ. համար են: Բացառություն են ջրային մակերեսների և բնապահպանական կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաների տվյալները, որոնք վերաբերում են համապատասխանաբար 2015 և 2018թթ.:³

Աղյուսակ 2. Կանաչ աճի ԶԶ ցուցանիշների ամփոփում

Ցուցանիշ	ԶԶ-ում իրավիճակը	ՓՄՁ-ների դերը
ՀՆԱ –ի CO2 ինտենսիվություն	ԶԶ-ում այս ցուցանիշը կազմել է 0.16 կգ CO ₂ / ԱՄՆ դոլար, ինչը	ՓՄՁ-ները կարող են սահմանափակ ազդեցություն ունենալ այս ցուցանիշի բարելավման վրա:

² UNEP, 2011, Towards a Green Economy: Pathways to Sustainable Development and Poverty Eradication – A Synthesis for Policy Makers, www.unep.org/greeneconomy

³ https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=GREEN_GROWTH

Ցուցանիշ	ՀՀ-ում իրավիճակը	ՓՄՁ-ների դերը
	միջին ցուցանիշ է համադրելի երկրների հետ համեմատելիս:	
ՀՆԱ-ի Էներգաարդյունավետություն	ՀՀ-ի ցուցանիշը կազմել է 10,458 դոլար, որով այն իր խմբում վերջին տեղերից մեկն է զբաղեցնում, իսկ ԵՄ միջինին ցուցանիշին զիջում է մոտ 30%-ով:	ՓՄՁ-ները բավական մեծ դեր կարող են ունենալ այս ցուցանիշի բարելավման վրա՝ հաշվի առնելով նրանց ընդհանուր դերը տնտեսության մեջ և այդ դերը մեծացնելու կառավարության նպատակը:
Էներգահնտենսիվություն, առաջնային Էներգիայի առաջարկ մեկ շնչի հաշվով	ՀՀ-ի ցուցանիշը կազմել է 1.15 տ Նհ, որով երկիրն իր խմբում վերջին տեղում է:	ՓՄՁ-ները կարող են սահմանափակ ազդեցություն ունենալ այս ցուցանիշի բարելավման վրա:
Առաջնային Էներգիայի առաջարկ	Այս ցուցանիշով ևս ՀՀ-ն խմբում վերջին տեղում է՝ 3.40 մլն տ Նհ արժեքով:	ՓՄՁ-ները կարող են սահմանափակ ազդեցություն ունենալ այս ցուցանիշի բարելավման վրա:
Վերականգնվող Էներգիայի մասնաբաժին	Այս ցուցանիշով ՀՀ-ն դարձյալ ցածր դիրքեր ունի՝ ընդամենը 9%:	Արևային Էներգետիկայի փոքր կայանների զարգացման հետ ՓՄՁ-ների դերը հնարավոր է որոշակի չափով ավելանա այս ցուցանիշով, սակայն հիմնական ազդեցությունը կլինի խոշոր կայանների հիմնման արդյունքում, որոնք արդեն պլանավորված են:
Վերականգնվող էլեկտրաէներգիայի կշիռը էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում	ՀՀ ցուցանիշը կազմել է 32%, որը շատ մոտ է ԵՄ միջինին:	Արևային Էներգետիկայի փոքր կայանների զարգացման հետ ՓՄՁ-ների դերը հնարավոր է որոշակի չափով ավելանա այս ցուցանիշով, սակայն հիմնական ազդեցությունը կլինի խոշոր կայանների հիմնման արդյունքում, որոնք արդեն պլանավորված են:
Բնապահպանական ռիսկ	PM2.5 ռիսկը ՀՀ-ում գնահատվում է 34.24 միկրոգրամ 1 խմ հաշվով: Սա վատագույն ցուցանիշն է խմբում:	Այս ռիսկի աղբյուր են հանդիսանում տարբեր ոլորտներ, որոնց թվում են արդյունաբերությունը, տրանսպորտը, Էներգետիկան և այլն: Եթե Էներգետիկայի մասով ՓՄՁ-ների դերը փոքր է, ապա մյուս երկուսի կտրվածքով նրանք ունեն բավական զգալի դեր:
Բարելավված խմելու ջրի հասանելիություն	ՀՀ-ում ցուցանիշի մեծությունը կազմում է 86%, որով ՀՀ-ն գերազանցում է միայն Վրաստանին:	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է:
Մակերևույթային ջրեր	Մշտական մակերեսային ջրերը կազմում են ՀՀ տարածքի	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է;

Ցուցանիշ	ՀՀ-ում իրավիճակը	ՓՄՁ-ների դերը
	4.51%-ը: Այս ցուցանիշով ՀՀ-ն իր խմբում զիջում է միայն Էստոնիային:	
Բուսածածկ տարածքներ	Բուսածածկ տարածքները կազմում են ՀՀ ընդհանուր տարածքի 35.95%-ը և այս ցուցանիշով ՀՀ-ն գերազանցում է միայն Չոնգարիային:	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է:
Գյուղատնտեսական տարածքներ	ՀՀ-ում գյուղատնտեսական տարածքները կազմում են ընդհանուր տարածքի 55.95%-ը, ինչը բավական բարձր ցուցանիշ է համադրելի երկրների շարքում:	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է:
Բնապահպանական տեխնոլոգիաների մշակում	Այս ցուցանիշը ՀՀ-ում կազմել է 10.26%, ինչը բավական մոտ է ԵՄ ցուցանիշին, սակայն զիջում է համադրելի երկրներից շատերին:	Այս ցուցանիշի բարելավման առումով ՓՄՁ-ների դերը ահռելի է, քանի որ դրանք են շատ տեխնոլոգիաների առաջին կիրառողը:

- Պետք է նշել, որ ՀՀ համար բացակայում են կանաչ տնտեսության որոշ ցուցանիշներ, ինչը խոսում է հաշվետվողականության խնդիրների մասին:
- Չնայած ՓՄՁ-ներում կանաչ աճի սկզբունքների ներդրումը խթանող գործիքների առկայությանը, այդ սկզբունքների ներդրումը դեռևս մնում է ոչ բավարար մակարդակի վրա և ունի նաև գենդերային ուղղորդման կարիք:

1.2.5 ՀՀ տնտեսության ոլորտների վերլուծություն

Ոլորտային վերլուծությունը առանձնացրել է առավել կարևոր տեղեկությունն ըստ կանաչ աճի բաղադրիչների՝ ռեսուրսների արդյունավետություն, բնական ակտիվների պահպանում, կյանքի որակի էկոլոգիական բաղադրիչի վրա ազդեցություն, տնտեսական հնարավորություններ և քաղաքականություն:

Ոլորտ	Աճի հնարավորությունները	Կանաչ աճի բաղադրիչները
Գյուղատնտեսություն	<ul style="list-style-type: none"> • 2021թ. ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կազմել է 775 մլրդ դրամ: • Չնայած վերջին տարիներին գրանցված անկման միտմանը, ոլորտն ունի աճի մեծ հնարավորություններ: 	<ul style="list-style-type: none"> • Ռեսուրսարդյունավետությունը բավական ցածր մակարդակի վրա է գյուղատնտեսության ոլորտում, մասնավորապես ջրօգտագործման և հողօգտագործման արդյունավետությունը: • Գյուղատնտեսությունում ինտենսիվորեն օգտագործվում է ազոտական պարարտանյութ և պեստիցիդներ, որը հանգեցնում է հողի մեջ պեստիցիդների մնացորդային քանակի կուտակմանը: • Պարարտանյութերի և թունաքիմիկատների ինտենսիվ օգտագործումը բացասական ազդեցություն է ունենում էկոլոգիական բաղադրիչի վրա: • Սոցիալական ներառականության տեսանկյունից ոլորտում արկա են բազմաթիվ գենդերային խնդիրներ և խտրականություն, հիմնականում պայմանավորված հողի սեփականության, ջրի օգտագործման, գյուղտեխնիկայի և տրանսպորտային միջոցների մատչելիության հետ: • Կանաչ աճի հնարավորությունները շատ մեծ են նոր տեխնոլոգիաների և նորարարությունների օգտագործման մասով:
Չբուսաշրջություն	<ul style="list-style-type: none"> • Չնայած COVID-19 համաճարակի խիստ բացասական ազդեցությանը ոլորտը ունի աճի մեծ հնարավորություններ: • Համաձայն զբոսաշրջության զարգացման ռազմավարության իրատեսական սցենարի նախատեսվում է 4.3 մլն այցելու, 85 հազար 	<ul style="list-style-type: none"> • Էներգաարդյունավետության տեսանկյունից մեծ կարևորություն ունեն հյուրանոցներում և կացարաններում խելացի լուծումները՝ լուսավորության, ջրամատակարարման, օդափոխության, հովացման համակարգերում և այլն: Նույնը վերաբերում է նաև հանրային սննդի օբյեկտներին: • Համաձայն ռազմավարության, առաջարկվող բոլոր զբոսաշրջային նախագծերում մի քանի այլ սկզբունքների հետ միաժամանակ պետք է ապահովվի շրջական միջավայրի վրա ազդեցության մեղմումը:

Ոլորտ	Աճի հնարավորությունները	Կանաչ աճի բաղադրիչները
	աշխատատեղ և 3.4 մլրդ դոլար արդյունք 2025թ.:	<ul style="list-style-type: none"> • Նաև ռազմավարությունը չի ներառում ոլորտում 60 և ավելի տոկոս զբաղվածություն ունեցող կանանց հիմնախնդիրներն ու հատուկ կարիքները, և դրանից բխող աճի հնարավորությունները: • Չբուսաշրջային տնտեսվարողները գեներացնում են զգալի ծավալով թափոններ՝ մի մասը կոշտ թափոնների, մյուս մասը սննդային թափոնների տեսքով: • Կանաչ աճի հնարավորությունները շատ մեծ են նոր տեխնոլոգիաների և նորարարությունների օգտագործման մասով:
Սննդի վերամշակում	<ul style="list-style-type: none"> • Սննդի արդյունաբերությունը ՀՀ տնտեսության մշակող արդյունաբերության կարևորագույն ենթաօլորտներից է՝ 549 մլրդ դրամ (2020թ.) ծավալով, ինչը կազմում է տարվա ՀՆԱ-ի մոտ 9%-ը: • Ոլորտը ունի աճի մեծ հնարավորություններ: 	<ul style="list-style-type: none"> • Էներգոարդյունավետ սարքավորումները, բնապահպանական տեսակետից ընդունելի փաթեթավորման նյութերը, թափոնների կառավարման համակարգերը, վերամշակված հումքի օգտագործումը արդյունավետության կարևոր ուղղություններն են: • Թափոնների կառավարման համակարգերը կարևոր են նաև բնական ակտիվների պահպանման համատեքստում: • Կարևոր է արտադրության ամբողջ շղթան, այդ թվում նաև Էկոլոգիապես մաքուր հումքը, այդ հումքի մշակման ու վերամշակման իրականացումը ժամանակակից և արդյունավետ մոտեցումներով: • Կանաչ աճի հնարավորությունները շատ մեծ են նոր տեխնոլոգիաների և նորարարությունների օգտագործման մասով:
Արդյունաբերություն	<ul style="list-style-type: none"> • Արդյունաբերությանը բաժին է ընկնում ՀՀ տնտեսության մոտ 34%-ը՝ 2,101 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանքի ծավալով⁴: Վերջինի 2/3-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, ևս 20% ունեցել է հանքարդյունաբերությանը: 	<ul style="list-style-type: none"> • Արդյունաբերությունից է մթնոլորտ արտանետվում վնասակար նյութերի 26%-ը: • Հանքարդյունաբերության ոլորտը բացասական ազդեցություն ունի բնական կապիտալի վրա, մասնավորապես հողային և ջրային ռեսուրսների: • Այս ոլորտին է բաժին ընկնում թափոնների 99%-ից ավելին՝ հիմնականում հանքարդյունաբերությանը:

⁴ Ներառյալ մշակող արդյունաբերությունը, որը ներառում է սննդի արդյունաբերությունը

Ոլորտ	Աճի հնարավորությունները	Կանաչ աճի բաղադրիչները
	<ul style="list-style-type: none"> Ոլորտի աճի հնարավորությունները միջինից բարձր են: 	<ul style="list-style-type: none"> Բարելավման հնարավորություններ կան տեխնոլոգիաների և նորարարությունների, Էկոլոգիական ապրանքների և ծառայությունների, բնապահպանական հարկերի և լավ կառավարման մասով:
Էներգետիկա	<ul style="list-style-type: none"> 2020թ. արտադրվել է 7,759 մլն կՎտ/ժ Էլեկտրաէներգիա⁵, որտեղ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիան Էական մասնաբաժին ունի: Մեծ են արևային կայանների զարգացման հնարավորությունները: 	<ul style="list-style-type: none"> Ոլորտին Է բաժին ընկնում ամբողջ երկրի մթնոլորտ արտանետումների 22%-ը: Փոքր հիդրոէլեկտրակայանների ոլորտը բացասական ազդեցություն ունի ջրային ռեսուրսների վրա: Թափոնների մասով ոլորտը բավական քիչ ազդեցություն ունի: Բարելավման հնարավորություններ կան վերականգնվող էներգետիկայի զարգացման մասով:
Շինարարություն	<ul style="list-style-type: none"> 2021 և 2020թթ. շինարարության ծավալը կազմել է 457 մլրդ դրամ և 430 մլրդ դրամ համապատասխանաբար: Ոլորտը ունի աճի հնարավորություն և՛ բնակելի շինարարության մասով, և՛ ենթակառուցվածքների շինարարության մասով: 	<ul style="list-style-type: none"> ՀՀ-ում ամբողջական հաշվառում չկա էներգաարդյունավետ կառույցների մասով, և դժվար է գնահատական տալ, սակայն խնդիրը առավել քան կարևոր է: Շինարարությունը գեներացնում է առեղծվածի քանակի շինարարական աղբ: Մասնավորապես, 2020թ. գեներացվել է 17.2 հազար տոննա թափոն կամ 5.7 կգ մեկ շնչի հաշվով: Ռեսուրսարդյունավետությունը նույնպես շատ կարևոր խնդիր է, թափոնների կրճատման նպատակով: Կանաչ աճի հնարավորությունները շատ մեծ են նոր տեխնոլոգիաների և նորարարությունների օգտագործման մասով:
Տրանսպորտ և սպասարկում	<ul style="list-style-type: none"> 2021թ. նախնական տվյալներով ուղևորաշրջանառությունը կազմել է 1,620 մլն ուղևոր-կմ: 2021թ. ընդհանուր օգտագործման տրանսպորտով տեղափոխվել է 107.7 մլն ուղևոր (2019թ. կազմել է 194.6 մլն ուղևոր): 2021թ. նախնական տվյալներով բեռնաշրջանառությունը կազմել է 5,087 	<ul style="list-style-type: none"> Անձնական օգտագործման մեքենաների մեծ մասը որպես հիմնական վառելիք օգտագործում է Էկոլոգիապես պակաս վնասակար սեղմված կամ հեղուկ գազ՝ բենզինի և դիզելի փոխարեն: Սեղմված գազով են աշխատում նաև հասարակական տրանսպորտում ներգրավված փոխադրամիջոցները: ՀՀ-ում Էլեկտրատրանսպորտային ցանց գոյություն ունի միայն Երևանում, որը ներառում է տրոլեյբուսային պարկն ու մետրոպոլիտենը:

⁵ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրության կոմիտե

Ոլորտ	Աճի հնարավորությունները	Կանաչ աճի բաղադրիչները
	<p>մլն տոննա-կմ: Բեռնափոխադրումների ծավալը 2021թ. կազմել է 17,2 մլն տոննա: Եկաթուղու փոխադրումները կազմել են 3,1 մլն տոննա:</p>	<ul style="list-style-type: none"> • Երկաթուղին Եական դեր ունի բեռնափոխադրումների ծավալում, սակայն ուղևորափոխադրումներում աննշան է երկաթուղու դերը: • Երկրում շահագործվող մեքենաների մեծ մասը բավական հին է, ինչը նշանակում է, որ դրանք չեն համապատասխանում ժամանակակից բնապահպանական չափանիշներին: • Ոլորտը աճի հնարավորություններ ունի, առավել ևս հոսքերի վերաբաշխման հնարավորությունները դեպի ավելի կանաչ տրանսպորտ:
Անտառային տնտեսություն	<ul style="list-style-type: none"> • Հայաստանի անտառածածկը կազմում է երկրի մակերեսի ընդամենը 11 տոկոսից մի փոքր ավել,⁶ (331,331.0 հա): Անտառների 70%-ը գտնվում է դեգրադացված վիճակում: 	<ul style="list-style-type: none"> • ՀՀ-ն Փարիզյան համաձայնագրի ներքո հանձն է առել մինչև 2050թ. անտառածածկը հասցնել 20.1 տոկոսի,⁷ ինչը կպահանջի մոտ 265 հազար հեկտար լրացուցիչ անտառածածկի ստեղծում: • Աճի հնարավորությունը պետք է դիտարկել ոչ թե տնտեսական, այլ բնապահպանական տեսանկյունից:
Առևտուր	<ul style="list-style-type: none"> • 2020թ. առևտրի շրջանառությունը (մեծածախ, մանրածախ, ավտոմեքենաներ) կազմել է 2,919 մլրդ դրամ, ինչը տարվա ՀՆԱ-ի ավելի քան 47%-ն է⁸: 	<ul style="list-style-type: none"> • Կարևորվում է փաթեթավորման նյութերի բնապահպանական ազդեցությունը (արգելվել է մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի վաճառքն ու իրացումը, սակայն այդ որոշումը խնդիրը ամբողջությամբ դեռ չի լուծել): • Հաջորդ խնդիրն առնչվում է թափոնների կառավարմանը, որը նույնպես կարևոր խնդիր է: • Էներգաարդյունավետության հետ կապված հարցերը նույնպես առաջնային են՝ հատկապես սառնարանային պահեստներում:
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	<ul style="list-style-type: none"> • ՀՀ-ում տնտեսության ամենաարագ աճող ոլորտներից մեկն է: 	<ul style="list-style-type: none"> • ՀՀ ՏՏ ընկերությունները սահմանափակ ներգրավվածություն ունեն կանաչ տնտեսության խնդիրների լուծման մասով:

⁶ <https://data.worldbank.org/indicator/AG.LND.FRST.ZS?locations=AM>

⁷ Intended Nationally Determined Contributions of the Republic of Armenia under the UN Framework Convention on Climate Change, <https://www4.unfccc.int/sites/ndcstaging/PublishedDocuments/Armenia%20First/INDC-Armenia.pdf>

⁸ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե

Ոլորտ	Աճի հնարավորությունները	Կանաչ աճի բաղադրիչները
	<ul style="list-style-type: none"> Միայն 2020թ. տվյալներով ոլորտի ընկերություններն արձանագրել են մոտ 300 մլն դոլարի հասույթ: 	<ul style="list-style-type: none"> Ոլորտը ազդեցություն կարող է ունենալ էներգաարդյունավետ գրասենյակների և տվյալների մշակման համար կիրառվող սերվերների էներգախնայողության մասով: SS ոլորտը բավական լավ դիրքեր է ունի ներառականության՝ հատկապես գեոդերային հավասարության տեսանկյունից:

1.2.6 ՀՀ կառավարության քաղաքականությունը և ռազմավարությունը

- ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2022թ. սեպտեմբերի վերջ մշակել կանաչ և կայուն տնտեսության զարգացման ռազմավարություն, որտեղ պետք է հստակ արտացոլված լինեն կանաչ և կայուն տնտեսության զարգացման ուղղությունները և նախատեսվող գործողությունների շրջանակը, ինչպես նաև կանաչ տնտեսության խթանման և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների իրագործման մեխանիզմները:
- 2021թ. ապրիլին հաստատված Ազգային մակարդակով սահմանված գործողությունների համաձայն ՀՀ-ն հանձն է առել մինչև 2030թ. ապահովել ջերմոցային գազերի 40% նվազեցում՝ 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ:
- Երկրում առկա է կանաչ աճի սկզբունքների և դրանց տնտեսական օգուտների վերաբերյալ հանրային իրազեկման պահանջ: Բացի այդ, կարիք կա համապատասխան ծրագրերի մշակման գործընթացում ակտիվացնել ՓՄՁ-ների ներգրավումը:


2 ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը

2.1 ՀՀ սոցիալ-տնտեսական հիմնական պարամետրերը

ՀՀ տնտեսությունը նախքան COVID-19 համաճարակի բռնկումը աչքի էր ընկնում դինամիկ աճով: Մասնավորապես 2017-19թթ. ՀՆԱ-ի իրական աճի միջին տեմպը կազմել է 6.8%, որը բավական բարձր ցուցանիշ է տարածաշրջանային կտրվածքով: Ավելին, 2020թ. առաջին երկու ամիսներին ՀՀ տնտեսությունն աճում էր էլ ավելի բարձր տեմպերով՝ շուրջ 10%-ով, և ակնհայտ էր, որ հանգամանքների դրական զարգացման դեպքում տարին կեզրափակվեր երկնիշ տնտեսական աճով:


Սակայն, տարվա ընթացքում ՀՀ տնտեսությունը զգալի վնասներ կրեց՝ սկզբում կորոնավիրուսային համաճարակի, իսկ տարվա վերջում նաև երկրորդ արցախյան պատերազմի պատճառով: Արդյունքում, երկնիշ տնտեսական աճի փոխարեն արձանագրվեց 7.4% տնտեսական անկում, որի արդյունքում անվանական ՀՆԱ-ն 6.5 տրլն դրամից նվազեց մինչև 6.2 տրլն դրամի⁹:

Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ի դինամիկան



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ, ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. ՀՆԱ-ի իրական աճի տեմպի դինամիկան



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ, ՀՀ վիճակագրական կոմիտե

⁹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե: ՀՀ ԿԲ վիճակագրություն:

2021թ. ևս բավական դժվար ստացվեց տնտեսության համար՝ պատերազմի հետևանքների և շարունակվող համաճարակի պատճառով: Այդուհանդերձ, հաջողվեց տնտեսությունը վերադարձնել դրական աճի գոտի, ինչի արդյունքում նախնական տվյալներով տնտեսական աճը կազմեց 5.7%: Նման աճն ապահովվել է հիմնական երեք ոլորտների՝ առևտրի, ծառայությունների և շինարարության հաշվին: Մասնավորապես, առևտրի ծավալը դիտարկվող ժամանակաշրջանում աճել է 7.6%-ով, նախորդ տարվա 11.7% անկումից հետո: Տարվա կտրվածքով առևտրի շրջանառության ծավալը կազմել է շուրջ 780 մլրդ. ՀՀ դրամ:


Ծառայությունների ծավալն աճել է 7.8%-ով, մինչդեռ 2020թ.-ին արձանագրվել էր 14.7% անկում: Եթե ծառայությունների ծավալին գումարենք նաև առևտրի ծավալները, ապա կստացվի, որ այս երկու ոլորտներին բաժին է ընկել ՀՆԱ-ի կեսից ավելին:

Դիտարկվող ժամանակահատվածում 2.6% աճ է գրանցվել շինարարության ոլորտում, որը նախորդ տարի համեմատաբար նվազ կորուստներ էր կրել՝ 6.6% անկում: Այս ոլորտի ընդհանուր ծավալը 2021թ. ընթացքում կազմել է շուրջ 457 մլրդ. դրամ, կամ ՀՆԱ-ի մոտ 6.5%-ը¹⁰:

Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, 2021թ. այն աճել է ընդամենը 4.2%-ով: Հարկ է ընդգծել, որ այս ոլորտը ամենաքիչ կորուստներն էր կրել 2020թ.՝ ընդամենը 1.5% անկում:

2020թ. կտրուկ նվազումից հետո, 2021թ. աշխուժություն սկսեց նկատվել նաև զբոսաշրջության ոլորտում: Մասնավորապես, 2019թ. ՀՀ էր եկել շուրջ 1.9 մլն. այցելու, մինչդեռ 2020թ. ընդամենը 375 հազար: 2021թ. արդեն ՀՀ է այցելել ավելի քան 870 հազար մարդ¹¹:

Գծապատկեր 3. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի դինամիկան



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Նախորդ տարիների նման 2021թ. ևս անկում արձանագրվեց տնտեսության ամենակարևոր ոլորտներից մեկում՝ գյուղատնտեսությունում՝ 1.4%: Ընդհանուր գյուղատնտեսական արդյունքի ծավալը նախնական ցուցանիշների համաձայն կազմել է մոտ 776 մլրդ դրամ: Պետք

¹⁰ 2021թ. ՀՆԱ-ի եռամսյակային և տարեկան նախնական տվյալները, ՀՀ վիճակագրական կոմիտե

¹¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե:

Է կշեղ, որ ոլորտում անկում է արձանագրվում չորրորդ տարին անընդմեջ: 2021թ. արդյունքներով ևս ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում կգերազանցի 10%-ը: Նաև հարկ է ընդգծել, որ անվանական առումով ոլորտի ծավալն աճել է Նախորդ տարվա համեմատ, սակայն իրական ցուցանիշների տեսանկյունից ունենք անկում:

Գծապատկեր 4. Գյուղատնտեսական արտադրանքի դինամիկան ՀՀ-ում




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ, ՀՀ վիճակագրական կոմիտե

Դիտարկվող ժամանակահատվածում տպավորիչ աճ է արձանագրվել արտաքին առևտրի առումով: Մասնավորապես արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 17.7%-ով՝ կազմելով 8.4 մլրդ դոլար: Արտահանումն ավելացել է 19.1%-ով՝ կազմելով 3.0 մլրդ դոլար, մինչդեռ ներմուծման ծավալն աճել է 16.9%-ով՝ կազմելով 5.4 մլրդ դոլար:¹²

¹² ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե:


Գծապատկեր 5. Արտահանման և ներմուծման դինամիկան ԶԶ-ում



Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

Նախորդ տարի մակրոտնտեսական կայունության պահպանման տեսանկյունից գլխավոր խնդիրը բարձր գնաճային ֆոնն էր՝ արձանագրվեց 7.2% գնաճ¹³: Նման պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը ստիպված էր իրականացնել զսպող մակրոտնտեսական քաղաքականություն, որի արդյունքում վերաֆինանսավորման դրույքը բարձրացվեց մինչև 7.75%: Եվս 0.25 տոկոսային կետ ավելացվեց արդեն 2022թ. փետրվարին, ինչի արդյունքում վերաֆինանսավորման դրույքը դարձավ 8%:

Գծապատկեր 6. Գնաճի դինամիկան ԶԶ-ում




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

¹³ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ հաջողվեց կարգավորել արտարժութային շուկայում տարվա սկզբին նկատվող խնդիրները, երբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը հասել էր գրեթե 540 դրամի, մինչդեռ տարվա վերջում այն կայունացավ 480-485 դրամի շրջակայքում:

Անդրադառնալով սոցիալական ցուցանիշներին, պետք է նշել, որ 2021թ. սկզբին ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 2.96 մլն. մարդ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 0.12%-ով: Այդ բնակչության գերակշիռ մասը կազմել է քաղաքային բնակչությունը՝ 1.89 մլն. մարդ, ընդ որում 1.09 մլն. մարդ բնակվել է մայրաքաղաք Երևանում:¹⁴

Գծապատկեր 7. ՀՀ մշտական բնակչության դինամիկան




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2021թ. 3-րդ եռամսյակի դրությամբ գործազրկության ցուցանիշը երկրում կազմել է 15%, ինչը նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ պակաս է 3.2 տոկոսային կետով: Իսկ ինչ վերաբերում է միջին անվանական աշխատավարձին, ապա տարվա ընթացքում այն աճել է 7.6%-ով՝ կազմելով 204,048 դրամ:¹⁵

¹⁴ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե:

¹⁵ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե:

Գծապատկեր 8. Գործազրկության ցուցանիշի դինամիկան ԶՀ-ում



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ըստ 2019 թ. Մարդկային զարգացման զեկուլյի Հայաստանում կանանց և տղամարդկանց գործազրկության տարբերությունը 1.02 է: Գործազրկության մակարդակը Հայաստանում ամենաբարձրն է ԱՊՀ երկրներից¹⁶. կանանց շրջանում այն 21% է, իսկ տղամարդկանց շրջանում 20,1% է կազմում: Դրա հետ մեկտեղ կան Էական գենդերային տարբերություններ գործազրկության տևողության և չափաատելու պատճառների մեջ: պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում երկարատև գործազրկության մակարդակը հատկապես բարձր է կանանց շրջանում՝ կազմելով գործազուրկ կանանց 54%-ը, իսկ տղամարդկանց շրջանում այ կազմում է 43%.¹⁷

2.2 ՓՄՁ-ները Հայաստանի տնտեսությունում

Համաձայն <<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենքի, ՓՄՁ սուբյեկտները ՀՀ ունեն հետևյալ դասակարգումը.¹⁸

- գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.
- փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.

¹⁶ <http://www.cisstat.com/>

¹⁷ Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ, 2021 https://armstat.am/file/article/gender_2021.pdf

¹⁸ Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենք

- միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1,500 մլն դրամը և 1,000 մլն դրամը:

Վերը թվարկածի ամփոփ ներկայացումը տրված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 3. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը ՀՀ-ում

Կատեգորիա	Աշխատողների միջին ցուցակային թիվ	Հասույթ (մլն դրամ)	կամ	Ակտիվների հաշվեկշռային արժեք (մլն դրամ)
Գերփոքր	մինչև 10	մինչև 100		մինչև 100
Փոքր	10-49	100-500		100-500
Միջին	50-249	500-1,500		500-1,000

Աղբյուր՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենք

Իսկ ինչ վերաբերում է ՓՄՁ-ների եվրոպական դասակարգմանը, ապա համաձայն դրա առանձնացվում են միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ: Դարձյալ, տարանջատման հիմք են ծառայում նույն ցուցանիշները՝ աշխատողների միջին ցուցակային թիվը, հասույթը և ակտիվների հաշվեկշռային արժեքը:¹⁹ Պետք է ընդգծել, որ 2011թ. սկսած ՓՄՁ-ների սահմանումը ՀՀ-ում համապատասխանեցվել է եվրոպականին:

Դասակարգումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը Եվրոպայում

Կատեգորիա	Աշխատողների միջին ցուցակային թիվ	Հասույթ (մլն եվրո)	կամ	Ակտիվների հաշվեկշռային արժեք (մլն եվրո)
Գերփոքր	մինչև 10	մինչև 2		մինչև 2
Փոքր	10-49	2-10		2-10
Միջին	50-249	10-50		10-43

Աղբյուր՝ Եվրոպական հանձնաժողով


ՀՀ տնտեսության վրա ՓՄՁ-ների ազդեցությունը լավագույնս հասկանալու համար բավարար է դիտարկել ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների դասակարգումը: Հարկ է ընդգծել, որ ՓՄՁ-ների վերաբերյալ վերջին համապարփակ վերլուծությունն իրականացվել է 2019թ., որում արտացոլված են մինչև 2018թ. ցուցանիշները:

¹⁹Եվրոպական հանձնաժողով - https://ec.europa.eu/growth/smes/sme-definition_en
https://ec.europa.eu/growth/smes/sme-definition_en

Սակայն, ավելի թարմ տվյալների բացակայության պատճառով այդ հետազոտությունը դիտարկվել է որպես ելակետային:

Եվ այսպես, 2018թ. ՀՀ-ում գործունեություն իրականացրած 68,780 տնտեսվարող սուբյեկտներից 68,654-ը եղել են ՓՄՁ-ներ, ինչը կազմում է ամբողջի 99.8%-ը: Ընդ որում, առավել մեծ մասնաբաժին են ունեցել գերփոքր ձեռնարկությունները՝ 64,344 կամ ամբողջի 93.6%-ը:²⁰

Գծապատկեր 9. ՀՀ-ում գործող տնտեսվարող սուբյեկտների կառուցվածքը (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Եթե դիտարկենք տնտեսվարողների գործունեությունն ըստ առանձին ոլորտների, ապա դրանց 64.1%-ը ներգրավված է եղել մեծածախ և մանրածախ առևտրում: Տրամաբանորեն, այս ոլորտում է կենտրոնացած եղել նաև ՓՄՁ-ների գերակշիռ մասը՝ 44,071 կամ բոլոր ՓՄՁ-ների 64.2%-ը: Հարկ է ընդգծել, որ այդ 44,071 ՓՄՁ-ների մեջ հիմնական մասը պատկանել է գերփոքր տնտեսվարողներին՝ 42,940: Բավական մեծ տարբերությամբ, երկրորդ տեղում մշակող արդյունաբերությունն է, որտեղ ներգրավված է եղել ՓՄՁ-ների 9.7%-ը՝ 6,695 ՓՄՁ:

Փոխարենը, ամենափոքր թվով ՓՄՁ-ները ներկայացված են եղել ջրամատակարարման ոլորտում՝ ընդամենը 80: Համեմատաբար փոքր է եղել նաև էլեկտրաէներգիայի մատակարարման և հանքարդյունաբերության մեջ ներգրավված ՓՄՁ-ների քանակը՝ 243 և 307, համապատասխանաբար:²¹

²⁰ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե


²¹ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 10. Տնտեսվարող սուբյեկտների բաշխումն ըստ ոլորտների (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 11. ՓՄՁ-ների բաշխումն ըստ ոլորտների (2018թ)




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՓՄՁ-ներից 35,662-ը գործունեություն են ծավալել մայրաքաղաք Երևանում, ինչը կազմում է բոլոր ՓՄՁ-ների 51.9%-ը: Բացարձակ թվով Երևանին հաջորդում է Կոտայքի մարզը, որտեղ գործունեություն են ծավալել թվով 5,890 ՓՄՁ: Ամենաքիչ քանակով ՓՄՁ-ները ներկայացված են եղել Վայոց ձորի մարզում՝ 1,227: Սակայն հարկ է ընդգծել, որ այդ մարզում առհասարակ գործունեություն են ծավալել 1,228 տնտեսվարող:

Երևանում գերփոքր տնտեսվարողներն ունեցել են ամենափոքր մասնաբաժինը՝ գրեթե 92%, մինչդեռ Տավուշում ամենամեծը՝ 97%:²²


²² Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 12. ՓՄՁ-ների տարածքային բաշխումը (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 13. Տնտեսվարողների բաշխումն ըստ Երևանի և ՀՀ մարզերի (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Եթե դիտարկենք ՓՄՁ-ների տնտեսական գործունեության արդյունքները, ապա պետք է նշել, որ 2018թ. նրանց կողմից արտադրված ապրանքների և մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 3.9 տրլն դրամ, ինչը կազմել է բոլոր տնտեսվարողների շրջանառության շուրջ 63%-ը: Ընդ որում, այդ ծավալը բավական համամասնորեն է բաշխվել գերփոքր, փոքր և միջին տնտեսվարողների միջև՝ 1.4 տրլն, 1.2 տրլն և 1.3 տրլն, համապատասխանաբար:

Այդ շրջանառության հիմնական մասն ապահովվել է առևտրով զբաղվող ՓՄՁ-ների կողմից՝ 2.3 տրլն. դրամ կամ ամբողջ շրջանառության գրեթե 58%-ը: Ընդ որում, գերփոքր տնտեսվարողների շրջանառությունը կազմել է 1 տրլն դրամ:

Առևտրին հաջորդել է մշակող արդյունաբերությունը, որտեղ գործունեություն ծավալած ՓՄՁ-ները գեներացրել են ավելի քան 510 մլրդ դրամ շրջանառություն, ինչը կազմել է ՓՄՁ-ների ամբողջ շրջանառության 13%-ը:


ՓՄՁ-ները փոքր շրջանառություն են ունեցել հանքարդյունաբերության ոլորտում՝ ընդամենը 0.4% կամ 17 մլրդ. դրամ: Համեմատաբար ցածր մասնաբաժին են ունեցել նաև էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ոլորտներում՝ 3.6% և 0.1%, համապատասխանաբար:²³

Գծապատկեր 14. ՓՄՁ-ների հասույթի բաշխումն ըստ ոլորտների (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 15. Տնտեսվարողների շրջանառության կառուցվածքն ըստ ոլորտների (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

²³ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե


Անդրադառնալով ՓՄՁ-ներում ներգրավված վարձու աշխատողների թվաքանակին, պետք է նշել, որ ամբողջ երկրի մասշտաբով վարձու աշխատողների թվաքանակը կազմել է 312,005, որոնցից 212,963 ներգրավված են եղել ՓՄՁ-ներում՝ շուրջ 68%-ը: Չբաղվածների հիմնական մասը՝ 67,379 մարդ զբաղված է եղել առևտրային ՓՄՁ-ներում: Եվս 44,010 աշխատող ներգրավված է եղել մշակող արդյունաբերությունում:

Հանքարդյունաբերության, էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ոլորտներում, ընդհակառակը, հիմնական զբաղվածությունը բաժին է ընկել խոշոր ձեռնարկություններին:²⁴

Հարկ ենք համարում ընդգծել, որ 2021թ. հոկտեմբերի տվյալներով ՀՀ-ում պաշտոնապես գրանցված աշխատողների թվաքանակը կազմել է 667,217 մարդ: Նման կտրուկ աճը պայմանավորված է աշխատաշուկայի թափանցիկության բարձրացմամբ:

Այդուհանդերձ, ստիպված ենք դիտարկել 2019թ. հետազոտությունը, որպես վերջին հասանելի փաստաթուղթ, որում ներկայացված է ՓՄՁ –ների մասնաբաժինը աշխատաշուկայում: Միևնույն ժամանակ, ենթադրում ենք, որ զբաղվածների բաշխման համամասնությունն էական փոփոխություններ չի կրել:


Գծապատկեր 16. Վարձու աշխատողների բաշխումն ըստ ոլորտների ու տնտեսվարողների տիպի (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

²⁴ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե


Գծապատկեր 17. ՓՄՁ-ների վարձու աշխատողների բաշխումն ըստ ոլորտների (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Խոսելով ՓՄՁ-ների կողմից ստեղծված համախառն հավելյալ արժեքի մասին, պետք է նշել, որ 2018թ. դրանց կողմից ստեղծվել է շուրջ 1.4 տրլն դրամի ավելացված արժեք, ինչը կազմում է բոլոր տնտեսվարողների կողմից ստեղծված ավելացված արժեքի 58%-ը:²⁵


Գծապատկեր 18. Տնտեսվարողների կողմից ստեղծված ավելացված արժեքի բաշխումն ըստ ոլորտների (2018թ)



²⁵ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Գծապատկեր 19. ՓՄՁ-ների կողմից ստեղծված ավելացված արժեքի բաշխումն ըստ ոլորտների (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Վերջապես, ՓՄՁ-ների կողմից ստեղծված համախառն հավելյալ արժեքը կազմել է ՀՆԱ-ի շուրջ 24%-ը: Ծառայությունների ոլորտի ՓՄՁ-ների ստեղծած ավելացված արժեքը կազմել է ՀՆԱ-ի 7.5%-ը, առևտրինը՝ 7.4%, արդյունաբերությանը 5.4%, իսկ շինարարությանը 3.3%²⁶:


Գծապատկեր 20. ՀՆԱ-ի նկատմամբ համախառն ավելացված արժեքի հարաբերակցության բաշխումն ըստ տնտեսվարողների (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

²⁶ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 21. ՓՄՁ-ների կողմից ստեղծված ավելացված արժեքի հարաբերակցությունը ՀՆԱ-ի ըստ հիմնական ոլորտների (2018թ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՀ-ում ՓՄՁ քաղաքականության վերաբերյալ որակական և քանակական գնահատական է տալիս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հաշվարկվող ՓՄՁ քաղաքականության համաթիվը (SME policy index), որը բաղկացած է 12 ցուցանիշներից՝ տարանջատված ըստ 5 հիմնական հենասյուների՝ արձագանքող կառավարություն (հենասյուն Ա), ձեռնարկատիրական մարդկային կապիտալ (հենասյուն Բ), ֆինանսավորման հասանելիություն (հենասյուն Գ), մուտքը շուկա (հենասյուն Դ) և աջակցություն նորարարությանը և գործարարությանը (հենասյուն Ե):

Յուրաքանչյուր ցուցանիշի համար տրվում է 1-5 գնահատական, որտեղ 5-ը համարվում է ամենաբարձր գնահատականը: Տվյալների հավաքագրում իրականացվում է զուգահեռ գնահատման հիման վրա՝ կառավարությունների կողմից գնահատում (self-assessment) և անկախ գնահատում ՏՀԶԿ-ի և իր գործընկերների կողմից: Վերջնական գնահատականները այս երկու գնահատումների համախմբումն են:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համաթիվի ՀՀ ցուցանիշները 2020թ. համար: ՀՀ դիրքը դիտարկվել է ԵՄ Արևելյան գործընկերության երկրների համատեքստում (ՀՀ-ից բացի այդ երկրների թվին են դասվում Բելառուսը, Ուկրաինան, Վրաստանը, Մոլդովան և Ադրբեջանը):²⁷

²⁷ ՓՄՁ քաղաքականության համաթիվ. Արևելյան գործընկերության երկրներ 2020

Աղյուսակ 5. ՓՄՁ քաղաքականության համաթվի ցուցանիշները ՀՀ համար (2020թ.)

Հենասյուն	Ցուցանիշ	ՀՀ 2020	ՀՀ 2016	ԱԳ 6 միջին միավորը
Ա	Ինստիտուցիոնալ և կարգավորման դաշտ	3.76	3.38	3.74
	Գործառնական միջավայր	3.55	4.05	3.92
	Սնանկացում և երկրորդ հնարավորություն	2.40	3.16	2.85
Բ	Ձեռնարկատիրության ուսումնասիրություն/ Կանանց ձեռներեցություն	2.84	2.63	3.58
	ՓՄՁ հմտություններ	3.26	2.67	3.36
Գ	Ֆինանսավորման հասանելիություն	3.81	3.53	3.57
Դ	Պետական գնումներ	3.61	3.42	3.49
	Ստանդարտներ և կանոնակարգեր	2.66	3.33	3.43
	Միջազգայնացում	2.86	3.37	2.96
Ե	Գործարարության զարգացման ծառայություններ	4.00	3.93	3.53
	Նորարարության քաղաքականություն	2.96	2.91	2.92
	Կանաչ տնտեսություն	2.40	2.39	2.77

Աղբյուր՝ ՓՄՁ քաղաքականության համաթիվ. Արևելյան գործընկերության երկրներ 2020

Ինչպես երևում է աղյուսակից ՀՀ-ն դիտարկվող երկրների միջին ցուցանիշից բարձր ցուցանիշ ունի ինստիտուցիոնալ և կարգավորման դաշտի, ֆինանսական հասանելիության, պետական գնումների, գործարարության զարգացման ծառայությունների և նորարարության քաղաքականության գծով: Եթե 2020թ. ցուցանիշները համեմատենք 2016թ. համապատասխան ցուցանիշների հետ, ապա կտեսնենք, որ 12 ցուցանիշներից ՀՀ առաջընթաց չի արձանագրել գործառնական միջավայրի, ՓՄՁ հմտությունների, ստանդարտների և կանոնակարգերի, ինչպես նաև միջազգայնացման կտրվածքով:

Իսկ ինչ վերաբերում է կանաչ տնտեսության ցուցանիշին, ապա դրա մեծությունը կազմել է 2.40, ինչը զիջում է խմբային միջինին: 2016թ. համեմատ այս ցուցանիշի մասով չնչին առաջխաղացում կա: Ընդ որում, դիտարկվող 6 երկրների շարքում ՀՀ-ն ունեցել է ամենափոքր առաջընթացը և գերազանցում է միայն Ադրբեջանին:

Այսպիսով, ամփոփելով վերը ներկայացվածը, կարող ենք նշել, որ ՓՄՁ-ները առանցքային դեր են խաղում ՀՀ տնտեսական կյանքում: Մասնավորապես, ՀՀ բոլոր տնտեսվարողների 99.8%-ը ՓՄՁ-ներ են: Դրանց 64.2%-ը ներգրավված է առևտրի ոլորտում: Հենց ՓՄՁ-ներն են գեներացնում բոլոր տնտեսվարող սուբյեկտների շրջանառության 58%-ը:

Խնդիրների շարքում կարող ենք նշել այն հանգամանքը, որ ՓՄՁ-ներին վերաբերող վերջին համապարփակ ուսումնասիրությունը՝ համապատասխան վիճակագրական տվյալներով իրականացվել է 2019թ.: Այսինքն, կա ավելի թարմ ուսումնասիրության կարիք:

2016թ. համեմատ ՀՀ-ին հաջողվել է որոշակի առաջընթաց արձանագրել ՓՄՁ քաղաքականության համաթվի հիմնական բաղադրիչների մասով: Կանաչ տնտեսության մասով ՀՀ-ն դեռևս զիջում է Արևելյան գործընկերության երկրների միջին ցուցանիշին:

2.3 ՀՀ աճի ռազմավարությունը և ՓՄՁ-ները

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության մեջ ՓՄՁ-ների կարևորությունը, պետական մակարդակով պարբերաբար իրականացվում են դրանց աջակցության և զարգացման ծրագրեր, ինչպես նաև մշակվում են համապատասխան փաստաթղթեր: Նախ և առաջ, պետք է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000թ. ընդունվել է **ՓՄՁ պետական աջակցության մասին ՀՀ օրենքը**, որով սահմանվում են ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղությունները: Դրանց թվում են՝²⁸

- Իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը,
- Ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,
- աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանը ու զարգացմանը նպաստելը,
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,
- արտաքին տնտեսական գործունեության խթանումը,
- Նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը,
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,
- կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,
- վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը,
- պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը:

ՓՄՁ ոլորտին վերաբերող մեկ այլ կարևոր փաստաթուղթ է **ՓՄՁ զարգացման ռազմավարությունը, որը նախատեսված է 2020-2024 թթ. համար**:²⁹ Այդ ռազմավարության առաքելությունն այնպիսի միջավայրի ստեղծումն է, որը կնպաստի նորարարական և մրցունակ ՓՄՁ-ների ստեղծմանն ու աճին:

Ռազմավարության նպատակն է միջնաժամկետ կտրվածքով նպաստել Հայաստանում ձեռներեցության զարգացմանը, ՓՄՁ-ների արտադրողականության բարձրացմանը, դրանց մրցունակության աճին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Ռազմավարության համար որոշվել են հետևյալ թիրախները՝

- **Արտադրողականության աճ՝ տարեկան 6%,**
- **ՓՄՁ-ում զբաղվածների աճ՝ տարեկան 3.2%,**
- **Գլոբալ ձեռնարկատիրության ցուցիչ (Global entrepreneurship index)՝ 40 (միավոր):**

Ակնկալվում է, որ ռազմավարության շնորհիվ ՓՄՁ-ներում մեկ զբաղվածի կողմից ստեղծված ավելացված արժեքի ցուցանիշը կկազմի 12 մլն դրամ՝ 2018թ. 6.7 մլն դրամի համեմատ:

Հիմնական ռազմավարական ուղղություններն են՝

1. **Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում**
Այս համատեքստում կարևորվում են հետևյալ գործողությունները՝

²⁸ ՓՄՁ պետական աջակցության մասին ՀՀ օրենք

²⁹ ՀՀ ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարություն

- ՓՄՁ պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթի ընդլայնում,
- Անշարժ գույքին այլընտրանքային գրավի կիրառությանը առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի զարգացում,
- Ֆինանսական գրագիտության բարձրացում և թափանցիկ գործարարության մշակույթի զարգացում,
- Ֆինանսական շուկայի դիվերսիֆիկացիայի համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ ներդրումային/վենչուրային հիմնադրամներ, բիզնես-հրեշտակներ, այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ,
- Սնանկության համակարգի բարեփոխում:

2. ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում

Այս ուղղության շրջանակներում նախատեսվում են հետևյալ գործողությունները՝

- Նորարարության ներդրում և կիրառում թիրախային աջակցության գործիքի մշակում և ներդրում պետական աջակցության կառույցների միջոցով,
- ՓՄՁ ոլորտում գործող հանրային կառույցների և բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում՝ ՓՄՁ-ում կարողությունների բացը լրացնելու ուղղությամբ,
- Ձեռնարկատերերի և ՓՄՁ-ում զբաղվածների որակավորման բարձրացմանն ուղղված միջավայրի կայացում,
- ՓՄՁ-ի կողմից գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնոլոգիական լուծումների նկատմամբ պահանջարկի խրախուսման ծրագրի մշակում և իրագործում,
- Ձեռնարկատիրական մշակույթի զարգացում,
- Սոցիալական ձեռնարկատիրության տեսանելիության բարձրացում:

3. ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում

Հիմնական գործողություններն են՝

- ՓՄՁ-ներին նոր շուկաներ մուտք գործելիս շարունակական աջակցություն,
- Արտաքին շուկաներում ՓՄՁ-ների տեսանելիության բարձրացում՝ առևտրի և ներդրումների խթանման նպատակով,
- Թիրախային շուկաների պահանջներին համապատասխանեցման գործընթացի տեխնիկական աջակցություն,
- Լոգիստիկ/պահեստային տնտեսությունների կայացում,
- Էլեկտրոնային առևտրի ընդլայնման համար նպաստավոր միջավայրի ձևավորում,
- Պետական գնումներին ՓՄՁ-ների մասնակցության խթանում,
- Նպաստում խոշոր ձեռնարկությունների արժեշղթաներում ՓՄՁ-ների ինտեգրմանը,

4. ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում

Ներառում է հետևյալ գործողությունները՝

- Մասնավոր-պետություն երկխոսության մեխանիզմների կայացում և կիրառություն,

- Պետական աջակցության կառույցների կարողությունների զարգացում և նրանց գործունեության արդյունավետության և թափանցիկության բարձրացում՝ կորպորատիվ կառավարման, հաշվետվողականության մեխանիզմների ներդրմամբ,
- Վիճակագրության բարելավում,
- ՓՄՁ-ի աջակցության ոլորտում ծրագրեր իրականացնող դոնորների աշխատանքի համակարգում,
- ՓՄՁ ազդեցության գնահատման մեխանիզմների մշակում և գործադրում,
- Հարկային/մաքսային/այլ վարչարարական բեռի գնահատում և պարզեցում ՓՄՁ-ների համար:

Պետք է նշել, որ ռազմավարության փաստաթղթում ներկայացված է նաև ՀՀ ՓՄՁ ոլորտի SWOT վերլուծություն, որն ամփոփված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 6. ՀՀ ՓՄՁ ոլորտի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Կազմակերպություն գրանցելու արագ ընթացակարգ • ՓՄՁ-ների կարգավորման բարենպաստ դաշտ • Կառավարության կողմից ՓՄՁ աջակցության գործիքակազմի առկայություն • Կապի և ինտերնետի զարգացած ենթակառուցվածք և բարձր որակ, նորարարական և կապի տեխնոլոգիաների հասանելիություն • Մի շարք էլեկտրոնային հարթակների առկայություն (e-draft, e-gov) և շարունակական ընդլայնում • Չարգացած Այ-Թի ոլորտ • ՓՄՁ-ի համար պարզ հարկային ռեժիմի առկայություն 	<ul style="list-style-type: none"> • Գործարար կարողությունների ցածր մակարդակ և փորձի պակաս • Թույլ զարգացած ենթակառուցվածքներ, հատկապես մարզերում • Ցածր արտադրողականություն • Ֆինանսների ցածր հասանելիություն • Հարկային և մաքսային վարչարարություն • Որակյալ կադրերի սակավություն, աշխատուժի հետ իրավական հարաբերությունների բարդություն • Արտաքին շուկաների վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակ • Լոգիստիկ խնդիրներով պայմանավորված արտահանման/ներմուծման բարդություններ • Խորհրդատվական ծառայությունների բարձր գին ՓՄՁ-ների համար • Ձեռնարկության փակման ընթացակարգի բարդություն • ՓՄՁ-ների կենտրոնացում Երևանում • Ընկերությունների մասնկության գործընթացի անարդյունավետություն • Աջակցության գործիքակազմի վերաբերյալ տնտեսվարողների տեղեկացվածության ցածր մակարդակ
Հնարավորություններ	Ռիսկեր
<ul style="list-style-type: none"> • Այլընտրանքային ֆինանսավորման մեխանիզմների զարգացում • Առկա բարենպաստ առևտրային ռեժիմների արդյունավետ օգտագործում, կառույցների առկայություն 	<ul style="list-style-type: none"> • Արտաքին անբարենպաստ պայմանների ի հայտ գալը (ֆինանսական ճգնաժամ, հիմնական գործընկեր երկրներում աճի դանդաղում, արտարժույթային ռիսկեր և այլ)

<ul style="list-style-type: none"> • ՓՄՁ-ների համար խորհրդատվական ծառայությունների և աջակցող կառույցների առկայություն • Էլեկտրոնային առևտրի զարգացում • Պետություն-մասնավոր հատված երկխոսության կայացում • Կրթական համակարգի շուկայի պահանջներին համապատասխանեցում • Տեխնոլոգիաների և նորարար գաղափարների ներմուծում • Օժանդակող ենթակառուցվածքների/գործիքների արդյունավետ շահագործում • Անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների դերի բարձրացումը • ԵԱՏՄ և ԵՄ շուկաների բարձր հասանելիություն, ազատ առևտրի համաձայնագրեր • GSP+ և REX համակարգերին անդամակցություն, օն-լայն հայտարարագրման համակարգ 	<ul style="list-style-type: none"> • Լրացուցիչ լոգիստիկ խնդիրներով պայմանավորված մրցունակության անկում • Տարածաշրջանում աշխարհաքաղաքական անկայունություն • ՓՄՁ-ների կողմից արտահանման և տեխնոլոգիաների ընդունման և ներդրման անբավարար մակարդակ • Արտագաղթի հետևանքով կրճատվող աշխատուժ • Նորարարությանը դիմադրող բիզնես միջավայր
--	---

Աղբյուր՝ ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարություն

Թույլ կողմերի թվում, կարելի է նշել նաև կանաչ տեխնոլոգիաների կիրառման ոլորտում դրսևորվող պասիվությունը, ինչպես նաև Էներգակիրների գնից բարձր կախվածությունը: Իսկ հնարավորությունների մասով կարելի է ավելացնել կանաչ աճի ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև միջազգային միտումները՝ դրա հետագա առաջխաղացման ուղղությամբ:

Պետք է նաև նշել, որ հնարավորությունների շարքում ներկայացված GSP+ համակարգին ՀՀ անդամակցությունը դադարեցվել է 2022թ. հունվարի մեկից, քանի որ Համաշխարհային Բանկի կողմից 3 հաջորդական տարի անընդմեջ դասակարգվել է որպես բարձր եկամուտ կամ միջինից բարձր եկամուտ ունեցող տնտեսություն:

ՓՄՁ զարգացման ռազմավարությունը միտված է վերնում ներկայացված ուժեղ կողմերի ամրապնդմանը և թույլ կողմերի և ռիսկերի չեզոքացմանը:

ՓՄՁ-ների զարգացմանը կարևոր տեղ է հատկացված նաև **ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրում**,³⁰ որով նախատեսվում է 2026թ. ՀՆԱ-ում ՓՄՁ-ների մասնաբաժինը հասցնել 55%-ի: Ծրագրում ֆինանսական ռեսուրսների հասանելիության շրջանակներում դիտարկվում է ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի ստեղծում, որի արդյունքում տարեկան 3,000 ՓՄՁ կստանա աջակցություն: Նախատեսվում է նաև սկսնակ ՓՄՁ-ների աջակցության ծրագիր, որով ֆինանսական աջակցություն կտրամադրվի տարեկան 2,000 ՓՄՁ-ի:

³⁰ ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր

ՓՄՁ-ների բիզնես ներուժի խթանման և զարգացման նպատակով նախատեսվում է Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, որն ուղղված կլինի խորհրդատվական և կրթական ծրագրերի իրականացմանը: Հայեցակարգի շրջանակներում նախատեսվում է ամեն մարզում 1 Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի վերազինում, ինչը հնարավորություն կընձեռնի տարեկան իրականացնել 150 վերապատրաստում, 10 նոր ռեզիդենտ ընկերության գրանցում, 10 գյուտի առևտրայնացում կամ տեղայնացում:

Բացի այդ, տարեկան 500 ձեռներեց կդառնա ՓՄՁ ինկուբացիոն ծրագրի շահառու, կիրականացվի 500 ՓՄՁ սուբյեկտի աջակցություն, որոնցից առնվազն 20-ը կլինեն գիտատար պրոդուկտ զարգացնող: Ընդ որում հիմնական շեշտադրումն արվելու է մարզային ՓՄՁ-ների վրա:

ՓՄՁ-ներին առնչվող հարցերով է զբաղվում նաև **ՓՄՁ խորհուրդը**, որը ստեղծվել է 2011թ.³¹ ՅՐ Կառավարության և ՎՁԵԲ-ի համատեղ նախաձեռնությամբ: Այն քաղաքականության շուրջ կառուցողական երկխոսության եզակի պետական-մասնավոր հարթակ է, որը հնարավորություն է ընձեռում ՓՄՁ-ների խնդիրները բարձրացնելու և լուծումները քննարկելու ուղղակիորեն ՅՐ կառավարության հետ:

Խորհրդի հետ փոխկապակցված է նաև Հայաստանի ներդրումային խորհուրդը, որը հիմնադրվել է դարձյալ ՎՁԵԲ-ի աջակցությամբ: Գրասենյակն իրականացնում է բիզնեսի զարգացմանն ուղղված բազում ծրագրեր, որոնք առնչվում են նաև ՓՄՁ-ների գործունեությանը: Գրասենյակը հանձն է առել նաև աջակցել ՓՄՁ խորհրդի աշխատանքների գեներացիային ուղղորդմանը:

Բացի ներկայացված նախաձեռնություններից, ՅՐ-ում պարբերաբար իրականացվել են և շարունակում են իրականացվել ՓՄՁ-ների աջակցության տարբեր պետական և մասնավոր ծրագրեր: Մասնավորապես, այս առումով զգալի ավանդ ունի **Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը**: Վերջինիս գործունեության արդյունքում ստեղծվել է 355 ՓՄՁ և 426 աշխատատեղ: Տրամադրվել է 1,248 ֆինանսական աջակցություն: Կենտրոնի կողմից տրվող աջակցությունը ունի հետևյալ ուղղվածությունները՝ կարողությունների զարգացում, ֆինանսների հասանելիություն, բիզնեսի միջազգայնացում և միջազգային ծրագրեր³¹:

Մասնավորապես, կենտրոնի կողմից կազմակերպվում են կրթական ծրագրեր և խորհրդատվություններ, որոնք նպատակ են հետապնդում ամրապնդել ձեռնարկատերերի բիզնես կարողությունները: Բացի այդ, կենտրոնի երաշխավորությամբ վերջիններս հնարավորություն ունեն ստանալ արտոնյալ պայմաններով վարկեր, ինչը զգալիորեն բարձրացնում է ֆինանսական միջոցների հասանելիությունը:³²

Ամփոփելով այս բաժինը, պետք է նշել հետևյալ հիմնական նկատառումները՝

³¹ Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն <http://smednc.am/hy>

³² Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն

- ՓՄՁ-ները առանցքային դեր են խաղում ՀՀ տնտեսական կյանքում: Մասնավորապես, ՀՀ բոլոր տնտեսվարողների 99.8%-ը ՓՄՁ-ներ են: Դրանց 64.2%-ը ներգրավված է առևտրի ոլորտում: ՓՄՁ-ները գեներացնում են բոլոր տնտեսվարող սուբյեկտների շրջանառության 58%-ը:
- ՓՄՁ քաղաքականության համաթվի կանաչ տնտեսության ցուցանիշով ՀՀ-ն ցածր դիրք է գրավում համեմատական երկրների շարքում՝ 2.40 գնահատականով: Համեմատության համար, Արևելյան գործընկերության երկրների միջին ցուցանիշը կազմել է 2.77: ՀՀ-ն այս ցուցանիշով համեմատական երկրների խմբում նախավերջին տեղում է:
- ՓՄՁ-ների աջակցության և դրանց արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ-ում մշակվել և ընդունվել են տարբեր ռազմավարական փաստաթղթեր, ինչպես նաև ստեղծվել են համապատասխան պետական մարմիններ ու կազմակերպություններ: Այսինքն, գոյություն ունի աջակցության լայն գործիքակազմ:
- Այնուամենայնիվ, խնդիրը կայանում է նրանում, որ բոլոր այդ ծրագրերում հիմնական շեշտը դրվում է առաջնահերթ խնդիրների լուծման վրա՝ ինստիտուցիոնալ, ֆինանսական և այլ, իսկ կանաչ աճին և գենդերային հավասարության սկզբունքներին հստակ տեղ հատկացված չէ: Մասնավորապես, ՓՄՁ ռազմավարության մեջ չկան կանաչ թիրախներ և գենդերային ուղղորդում:

3 Կանաչ տնտեսության սկզբունքները և կանաչ աճի մոդելները

Չնայած նրան, որ կանաչ տնտեսությունը չունի միասնական սահմանում և տարբեր միջազգային կառույցներ ունեն միմյանցից որոշ հարցերում տարբերվող մոտեցումներ խնդրի առարկայի նկատմամբ, ընդհանուր առմամբ այն ենթադրում է անցում ռեսուրսասպառող տնտեսության մոդելից դեպի կայուն զարգացում: Կանաչ տնտեսության հայեցակարգը ուղղակիորեն կապակցված է Կայուն զարգացման 1-ին, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ նպատակների հետ, այն է՝

- Ոչ աղքատությանը,
- Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ,
- Արդյունաբերություն, Նորարարություն և ենթակառուցվածք,
- Կայուն քաղաքներ և համայնքներ, և
- Պատասխանատու սպառում և արտադրություն:

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը սահմանում է կանաչ տնտեսությունը որպես մարդու բարեկեցության և սոցիալական հավասարության արդյունքներից մեկը, որը զուգորդված է բնապահպանական ռիսկերի նշանակալի կրճատումով: Այլ կերպ ասած, կանաչ տնտեսությունը ենթադրում է³³



Եկամուտների և զբաղվածության աճը պետք է պայմանավորված լինեն այնպիսի հանրային և մասնավոր ներդրումներով, որոնք նպաստում են արտանետումների և աղտոտման կրճատմանը, բարձրացնում են էներգա- և ռեսուրսարդյունավետությունը և կանխարգելում են կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների կորուստը:

³³ UNEP, 2011, Towards a Green Economy: Pathways to Sustainable Development and Poverty Eradication – A Synthesis for Policy Makers, www.unep.org/greeneconomy

Կանաչ տնտեսության առկայության պարագայում զարգացումը պետք է պահպանի, մեծացնի և ըստ անհրաժեշտության վերականգնի բնական կապիտալը, որը հանդիսանում է առանցքային տնտեսական կապիտալ և հանրային բարիքի աղբյուր, հատկապես աղքատների համար, ում բարեկեցությունը և անվտանգությունը կախված են բնությունից:

Ըստ ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի, «կանաչ տնտեսության» հայեցակարգը չի փոխարինում կայուն զարգացումը, սակայն կա ընկալում, որ կայունությունն անհնար է առանց տնտեսության «ճիշտ» մոդելի: Կարևոր է նաև հասկանալ, որ տնտեսությունների «կանաչեցումը» չի նշանակում աճի կրճատում, այլ աճի նոր շարժիչ ուժ է, այն ստեղծում է նոր աշխատատեղեր և հանդիսանում է կարևոր գործոն աղքատության կրճատման համար:³⁴

2008թ. ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի կողմից մեկնարկ է տրվել «Կանաչ տնտեսության նախաձեռնությանը», որի շրջանակներում առանձին երկրների մակարդակում խթանվել է շրջակա միջավայրին ուղղված ներդրումների աջակցությունը քաղաքականություն մշակողների կողմից, իսկ «կանաչ տնտեսությունը՝ կայուն զարգացման և աղքատության վերացման համատեքստում» 2012թ. դարձել է Ռիո+20 օրակարգի մաս և ճանաչվել է կայուն զարգացման հասնելու միջոց:

Կանաչ տնտեսության հետ կապված աշխատանքների արդյունքում նաև առաջ է եկել ներառական կանաչ տնտեսության գաղափարը, որը ենթադրում է ոչ միայն ածխածնի արտանետումների ցածր մակարդակ, արդյունավետ և մաքուր արտադրություն, այլ նաև սպառման և արդյունքների ներառականություն, հիմնված փոխանակման, շրջանաձևության, համագործակցության, համերաշխության, ճկունության, հնարավորության և փոխկախվածության վրա:

Ներառական կանաչ տնտեսությունը կենտրոնացած է թիրախային և պատշաճ ֆիսկալ և սոցիալական պաշտպանության քաղաքականությունների միջոցով ազգային տնտեսությունների համար հնարավորությունների ընդլայնման վրա, և ճանաչում է, որ բնապահպանական կայունությանը հասնելու ուղիները բազմաթիվ են և բազմազան:³⁵

Կանաչ տնտեսության կոալիցիան սահմանում է ներառական կանաչ տնտեսությունը որպես ծաղկող տնտեսություն, որը ստեղծում է Կայուն զարգացման նպատակներով և Փարիզյան համաձայնագրով սահմանված տնտեսական, սոցիալական և բնապահպանական արդյունքները: Դրա հիմքում ընկած են հետևյալ հինգ առանցքային սկզբունքները, ներառյալ.

- (ա) բարեկեցություն,
- (բ) արդարություն,
- (գ) մոլորակի սահմանաչափեր,

³⁴ Նույն տեղում

³⁵ UNEP, 2015, Uncovering Pathways towards an Inclusive Green Economy: a Summary for Leaders, https://wedocs.unep.org/bitstream/handle/20.500.11822/9838/-_Uncovering_Pathways_towards_an_Inclusive_Green_Economy_a_Summary_for_Leaders-2015IGE_NARRATIVE_SUMMARY_Web.pdf.pdf?sequence=3&isAllowed=y%2C%20Portuguese%7C%7Chttps%3A//wedocs.unep.org/bitstream/handl

- (դ) արդյունավետություն և բավարարություն
- (ե) լավ կառավարում:³⁶

Բարեկեցության սկզբունքը ենթադրում է, որ կանաչ տնտեսությունը մարդակենտրոն է և նպատակ ունի նպաստել իրական և ընդհանուր բարգավաճմանը: Վերջինս արտահայտվում է ոչ միայն ֆինանսական բարեկեցությամբ, այլև ստեղծում է մարդկային, սոցիալական, ֆիզիկական և բնական կապիտալներ, առաջնահերթություն տալով բոլոր մարդկանց բարգավաճման համար անհրաժեշտ կայուն բնական կապիտալի, ենթակառուցվածքների, գիտելիքների և կրթության մեջ արվող ներդրումներին և դրանց հասանելիությանը:

Արդարության սկզբունքը վերաբերվում է կանաչ տնտեսության կողմից սերունդների ներսում և դրանց միջև հավասարության խթանմանը: Կանաչ տնտեսությունը պետք է լինի ներառական և ոչ խտրական, որտեղ որոշումների կայացումը, օգուտները և ծախսերը կիսվում են արդարացիորեն, բացակայում է «էլիտար շահը» (elite capture), և հատուկ ուշադրություն է դարձվում կանանց հզորացմանը:

Մոլորակի սահմանաչափերի սկզբունքը ենթադրում է, որ կանաչ տնտեսությունը պաշտպանում և վերականգնում է բնությունը և ներդրումներ է կատարում դրանում, այն ճանաչում և սնում է բնության բազմազան արժեքները, ճանաչում է բնական կապիտալն այլ կապիտալներով փոխարինելիության սահմանափակությունը՝ որդեգրելով նախազգուշական սկզբունքը առանցքային բնական կապիտալի կորստից և էկոլոգիական սահմանաչափերի խախտումից խուսափելու համար:

Համաձայն արդյունավետության և բավարարության սկզբունքի կանաչ տնտեսությունը պետք է օժանդակի կայուն սպառմանը և արտադրությանը, այն ցածր ածխածնային է, ռեսուրսախնայող, բազմազան և շրջանաձև, ներառում է տնտեսական զարգացման նոր մոդելներ, ուղղված մոլորակի սահմանաչափերի ներքո բարեկեցության ստեղծման մարտահրավերի հաղթահարմանը:

Լավ կառավարման սկզբունքը սահմանում է, որ կանաչ տնտեսությունն առաջնորդում են ինտեգրված, հաշվետու և դիմակայուն հաստատություններ, այն հիմնված է ապացույցների վրա, դրա նորմերը և հաստատությունները միջառարկայական են, դրան օժանդակում են ինտեգրված, համագործակցող և համակարգված հաստատություններ: Այն պահանջում է հանրային մասնակցություն, թափանցիկություն, սոցիալական երկխոսություն, ժողովրդավարական հաշվետվողականություն և մասնավոր շահի բացակայություն բոլոր հաստատություններում:

Եվրոպայի շրջակա միջավայրի գործակալության կողմից նշվում է, որ կանաչ տնտեսությունը ենթադրում է, որ քաղաքականությունները և նորարարությունները պետք է

³⁶ Green Economy Initiative, 2020, Principles, priorities and pathways for inclusive green economies: Economic transformation to deliver the SDGs, <https://www.greeneconomycoalition.org/assets/reports/GEC-Reports/Principles-priorities-pathways-inclusive-green-economies-web.pdf>

հնարավորություն տան հասարակությանը տարեց տարի ստեղծել ավելի շատ արժեք, մինևույն ժամանակ պահպանելով բնական համակարգերը:³⁷

Կանաչ տնտեսությունը պահանջում է հատուկ քաղաքականություններ, նվիրված պահանջարկին և առաջարկին, ինչպես ամբողջ տնտեսության, այնպես և առանձին ոլորտների կտրվածքով: Այս առումով կարևոր նշանակություն ունեն նախագգուշական, կանխարգելման, սկզբնաղբյուրում վնասի շտկման և աղտոտողի վճարման սկզբունքները, զուգորդված ամուր ապացուցողական հենքով:

Կանաչ տնտեսությանն անցնելուն գործակալության մոտեցման կարևոր առանձնահատկություններից է հաշվապահական հաշվառման մեջ բնական կապիտալը հաշվի առնելու անհրաժեշտության ճանաչումը, այդպիսով հրաժարվելով տնտեսական աճը բացառապես ՀՆԱ-ով չափելուց, ինչը հնարավորություն է տալիս ներկայացնել տվյալ հասարակության կենսակերպի ամբողջը գինը, բացահայտելով ապագա սերունդներին փոխանցվող պարտքը:

Միջազգային առևտրային պալատը նշում է, որ ըստ գործարար համայնքի «կանաչ տնտեսություն» արտահայտությունը հանդիսանում է կայուն զարգացման ավելի լայն հայեցակարգի մաս: Այն նկարագրվում է որպես տնտեսություն, որտեղ տնտեսական աճը և բնապահպանական պատասխանատվությունն աշխատում են փոխշահավետ ձևաչափով՝ օժանդակելով սոցիալական զարգացմանը, իսկ գործարար աշխարհն ունի առանցքային դեր կանաչ տնտեսությանն անցում կատարելու համար անհրաժեշտ տնտեսապես կենսունակ ապրանքների, գործընթացների, ծառայությունների և լուծումների ստեղծման գործում:³⁸

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը սահմանում է կանաչ տնտեսությունը որպես շուկայական տնտեսություն, որում հանրային և մասնավոր ներդրումները կատարվում են հատուկ ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության ազդեցության նվազագույնի հասցնելուն, իսկ շուկայի ձախողումներին ի պատասխան մշակվում են բարելավված քաղաքական և իրավական շրջանակներ, ուղղված բնության կողմից մատուցվող ծառայությունների բնորոշ արժեքի համակարգված հաշվառմանը, համապատասխան վտանգների կառավարմանը և նորարարության խթանմանը:³⁹

ՎՉԵԲ-ն աջակցում է անցմանը կանաչ տնտեսության համապատասխանեցնելով իր գործունեությունը միջազգային կլիմայական համաձայնագրերի հետ, որոնցից առանցքային է Փարիզյան համաձայնագիրը, ուժեղացնելով ներգրավվածությունը երկարաժամկետ ցածր ածխածնային ռազմավարությունների մշակմանը և ֆինանսական համակարգերի

³⁷ EEA, 2010. The European environment — state and outlook 2010: synthesis. European Environment Agency, Copenhagen, <https://www.eea.europa.eu/soer/2010/synthesis/synthesis>

³⁸ International Chamber of Commerce, 2012, Green Economy Roadmap: a Guide for Business, Policymakers and Society, https://iccwbo.org/content/uploads/sites/3/2012/08/Green-Economy-Roadmap-a-guide-for-business_-_policy-makers-and-society.pdf

³⁹ European Bank for Reconstruction and Development, 2020, Green Economy Transition Approach for 2021–2025, <https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395293641654&pagename=EBRD%2FContent%2FDownloadDocument>

կանաչեցմանն ուղղված քաղաքականություններում և մեծացնելով ներդրումները՝ կոնկրետ բնապահպանական և կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության թեմատիկ ոլորտներում նորարարությունների իրականացման միջոցով:

Կանաչ տնտեսության զարգացման առումով հատուկ նշանակություն ունեն *փոքր և միջին ձեռնարկությունները*, որոնք մեծ դեր են խաղում գրեթե բոլոր տնտեսություններում, հատկապես զարգացող երկրներում: Աշխարհով մեկ ձեռնարկությունների մոտ 90 տոկոսը փոքր են կամ միջին և դրանք ապահովում են աշխատատեղերի ավելի քան 50 տոկոսը, ընդ որում զարգացող շուկաներում ՓՄՁ-ները ստեղծում են տասն աշխատատեղերից յոթը:⁴⁰

ՓՄՁ-ներն արդեն իսկ հանդես են գալիս սոցիալական, բնապահպանական և տնտեսական մարտահրավերների նորարարական լուծումներով, այդպիսով նպաստելով ներառական և կայուն տնտեսության զարգացմանը և ապահովելով կանաչ տնտեսության անցմանը բոլորի մասնակցությունն՝ աշխատատեղեր ստեղծելով մարզինալացված համայնքների, ընչազուրկ կանանց և գործազուրկ երիտասարդների համար: Բացի այդ, կայուն կերպով արտադրված ապրանքների և ծառայությունների մատուցման միջոցով ՓՄՁ-ները ոչ միայն կանխում են շրջակա միջավայրի դեգրադացիան, այլև մատչելի և շրջակա միջավայրի տեսակետից կայուն ապրանքներն ավելի հասանելի են դարձնում առավել աղքատների համար:⁴¹

Կանաչ ՓՄՁ-ները բաժանվում են երեք տեսակի, ներառյալ.

- Էկո-նորարարները,
- Էկո-ձեռներեցները և
- Էկոլոգիապես մաքուր գործելակերպ որդեգրողները,

ընդ որում այս դերերը չեն բացառում միմյանց, հակառակը՝ Էկո-ձեռներեցները հաճախ Էկո-նորարարներ են:⁴²

Էկո-նորարարությունը սահմանվում է որպես «գործարար պրակտիկայում, աշխատատեղի կազմակերպման կամ արտաքին հարաբերություններում նոր կամ զգալի բարելավված պրոդուկտի (ապրանքի կամ ծառայության) կամ գործընթացի, նոր մարքեթինգային մեթոդի կամ նոր կազմակերպչական մեթոդի ներդրում», որը նպաստում է շրջակա միջավայրի վրա ազդեցության կրճատմանն՝ անկախ նման նպատակ ունենալուց կամ չունենալուց:⁴³

Էկո-ձեռներեցները նման են ավանդական ձեռներեցներին, քանի որ փնտրում են նոր հնարավորություններ, պայմանավորված արժեքների, նախասիրությունների, կարգավորումների կամ խնդիրների փոփոխություններով, արդյունքում մշակելով և շուկա հանելով այդ հնարավորությունների հետ կապված լուծումներ: Միևնույն ժամանակ Էկո-

⁴⁰ <https://www.worldbank.org/en/topic/smefinance>

⁴¹ <https://www.greeneconomycoalition.org/news-and-resources/small-business-is-the-heart-of-the-green-economy>

⁴² OECD, 2018, SMEs: Key Drivers of Green and Inclusive Growth, https://www.oecd.org/greengrowth/GGSD_2018_SME%20Issue%20Paper_WEB.pdf

⁴³ OECD, 2009, Sustainable Manufacturing and Eco-Innovation: Framework, Practices and Measurement, <http://www.oecd.org/innovation/inno/43423689.pdf>

ձեռներեցները տարբերվում են նրանով, որ ունեն այլ նպատակներ և դրդապատճառներ, բնապահպանական կայունությունը սահմանելով որպես գործունեության նպատակներից մեկը:⁴⁴

Վերջապես, Էկոլոգիապես մաքուր գործելակերպ որդեգրողները, որոնք ներկայացնում են ՓՄՁ-ների մեջ մասը, որդեգրում են բնապահպանական տեխնոլոգիաները և կայուն ձեռնարկատիրության սկզբունքները, սակայն ի տարբերություն առաջին երկու խմբերի կայունությունը չի հանդիսանում դրանց հիմնական նպատակը:⁴⁵

3.1 Ցածր արտանետումներով աճ

Ցածր արտանետումներով աճի հայեցակարգի հիմքում ընկած է 1992թ. Ռիոյում ընդունված ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան կլիմայի փոփոխության մասին: Ներկայում այն հիմնականում ներկայացվում է ցածր արտանետումներով զարգացման ռազմավարությունների իմաստով: Տորմալ առումով ընդունված սահմանման բացակայության պայմաններում նշված ռազմավարությունները հիմնականում նշանակում են ապագային միտված ազգային տնտեսական զարգացման ծրագրեր կամ ռազմավարություններ, որոնք ենթադրում են ցածր ածխածնային կամ կլիմայակայուն տնտեսական աճ:⁴⁶

Ցածր արտանետումներով զարգացման ռազմավարությունները հիմնականում միտված են կլիմայի փոփոխության և զարգացման ազգային քաղաքականություններն առավել համակարգված ձևով առաջ մղելուն օժանդակելուն: Դրանք կարող են ծառայել կառավարությունների, մասնավոր հատված, հասարակության և այլ շահառուների բազմաթիվ նպատակների, ինչպիսին է տնտեսության դիվերսիֆիկացումը՝ հանքային վառելիքից հրաժարվելու միջոցով:

Կլիմայի փոփոխության հետ կապված վնասները և վտանգները սահմանափակելու համար պահանջվում է, որպեսզի բոլոր երկրները սկսեն տնտեսական անցում, որն ի թիվս այլոց կունենա հեռահար ազդեցություն ԳՔԱՊՎածության, ֆիսկալ և բյուջետային խնդիրների վրա: Երկարաժամկետ ցածր արտանետումներով զարգացման ռազմավարությունները Փարիզյան համաձայնագրով նախատեսված երկրներին աջակցման միջոցներից են:⁴⁷

Ցածր ածխածնային զարգացումը փոխկապակցված է Կայուն զարգացման 1-ին, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ նպատակների հետ, այն է Ոչ աղքատությանը, Մատչելի և մաքուր էներգիա, Կայուն քաղաքներ և համայնքներ, Պատասխանատու սպառում և արտադրություն, Գործողություն՝ ի նպաստ կլիմայի, Կյանքը ջրի տակ և Կյանքը ցամաքում՝ համապատասխանաբար:

⁴⁴ OECD (2013), Green Entrepreneurship, Eco-Innovation and SMEs.

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ OECD, 2010, Low-Emission Development Strategies (LEDS): Technical, Institutional and Policy Lessons, <http://www.oecd.org/environment/climatechange/46553489.pdf>

⁴⁷ Aguilar Jaber, A., et al., 2020, "Long-term low emissions development strategies: Cross-country experience", OECD Environment Working Papers, No. 160, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/1c1d8005-en>

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ ցածր արտանետումներով աճը ենթադրում է այնպիսի ռազմավարությունների մշակում և կիրառություն, որոնք կնպաստեն կայուն տնտեսական աճին, որը կունենա հնարավորինս ցածր արտանետումներ:

3.2 Ռեսուրսների արդյունավետություն

Ռեսուրսների արդյունավետությունը բազմաշերտ է, քանի որ կապված է արտադրության և կացարանների էներգաարդյունավետության, արտադրության մեջ նյութերի օգտագործման արդյունավետության և թափոնների ավելի լավ կառավարման հետ:⁴⁸

Բնական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման գինը պատմականորեն չի հանդիսացել սահմանափակող գործոն մարդկության համար, քանի որ բնակչության ցածր խտության պայմաններում հնարավոր է եղել գտնել նոր ռեսուրսներ: Սակայն ռեսուրսները սահմանափակ են և պետք է կառավարվեն արդյունավետորեն՝ ելնելով ամբողջ հասարակության շահերից:

Համաձայն 2007թ. ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի ներքո գործող Ռեսուրսների միջազգային պանելի, առաջնային նյութերի պահանջարկն աճել է 7 միլիարդ տոննայից 1900թ. մինչև 90 միլիարդ տոննա 2017թ., և ակնկալվում է, որ մինչև 2050թ. այդ ցուցանիշը կհասնի 186 միլիարդի տոննայի, եթե սպառման ընթացիկ միտումները պահպանվեն: Ռեսուրսների նման պահանջարկն ունի տանգապալի հետևանքներ շրջակա միջավայրի համար, ներառյալ կենսամիջավայրերի կորուստը, բնական ռեսուրսների գերշահագործումը և աղտոտումը, որոնք հանգեցնում են կենսաբազմազանության կրճատման:⁴⁹

Մետաղների և արդյունաբերական հանքանյութերի հանքաքարերի դասերը շարունակաբար իջնում են, իսկ վերամշակման աստիճանը գերազանցում է 50 տոկոսն առկա մետաղի միայն մեկ երրորդի դեպքում, մինչդեռ մասնագիտացված մետաղների պարագայում վերամշակման աստիճանը մեկ տոկոսից պակաս է:⁵⁰ Զոդերի 33 տոկոսը ենթակա է միջին կամ բարձր աստիճանի դեգրադացիայի, ջրատար շերտերի 20 տոկոսը գերշահագործված է, ինչպես նաև «առևտրային» ձկնապաշարի 29 տոկոսը:⁵¹

⁴⁸ UNEP, 2011, Towards a Green Economy: Pathways to Sustainable Development and Poverty Eradication – A Synthesis for Policy Makers, www.unep.org/greeneconomy

⁴⁹ UNEP, 2018, Resource Efficiency for Sustainable Development: Key Messages for the Group of 20, https://www.resourcepanel.org/sites/default/files/documents/document/media/thinkpiece_-_resource_efficiency_-_key_messages_for_the_g20_270818.pdf

⁵⁰ International Trade in Resources: A Biophysical Assessment. M. Fischer-Kowalski, M. Dittrich, and N.Eisenmenger. A report of the International Resource Panel. United Nations Environment Programme. Nairobi, Kenya, https://www.resourcepanel.org/sites/default/files/documents/document/media/-international_trade_in_resources_full_report_english_o.pdf

⁵¹ Food Systems and Natural Resources. Westhoek, H, Ingram J., Van Berkum, S., Ozay, L., and Hajer M. A report of the International Resource Panel. United Nations Environment Programme. Nairobi, Kenya, https://www.resourcepanel.org/sites/default/files/documents/document/media/food_systems_summary_report_english.pdf

Մեկ այլ կարևոր խնդիր է բնական ռեսուրսների բաշխման, հասանելիության և օգտագործման անհավասարության բարձր աստիճանը: Այսպես, բարձր եկամուտ ունեցող երկրները մեկ շնչի հաշվարկով սպառում են տասն անգամ ավելի շատ նյութեր, քան ցածր եկամուտ ունեցող երկրները: Առավել աղքատ 1.2 միլիարդ բնակչությանը բաժին է ընկնում համաշխարհային սպառման 1 տոկոսն, իսկ առավել հարուստ մեկ միլիարդը սպառում է երկրի ռեսուրսների 72 տոկոսը:⁵²

Բնակչության և տնտեսության աճով, ինչպես նաև արտադրության և սպառման գնալով ավելի անկայուն վարքագծով պայմանավորված՝ ճնշումը բնական ռեսուրսների վրա կշարունակի աճել: Ռեսուրսների սպառման ներկա միտումների պահպանման պարագայում մինչև 2030թ. պարենի պահանջարկը կաճի 60 տոկոսով, իսկ ջրի օգտագործումը՝ 40 տոկոսով:⁵³

Այդ խնդիրները հնարավոր է լուծել ռեսուրսների ավելի բարձր արդյունավետության և արտադրողականության միջոցով, ներառյալ.

- **ռեսուրսներին ավելի մեծ արժեքի ավելացումը, այդ արժեքի պահպանումը՝ ռեսուրսներն ավելի երկար օգտագործելու միջոցով,**
- **ինչպես նաև ռեսուրսների ամբողջ կենսացիկլի հետ կապված բնապահպանական ազդեցությունների կրճատումը:**

Ռեսուրսարդյունավետությունն ունի բազմաթիվ օգուտներ, ներառյալ բնական ռեսուրսների սպառման արագության նվազումը: Ռեսուրսների ավելի փոքր ներդրում պահանջող գործունեությունը տնտեսապես նվազ խոցելի է գների տատանման նկատմամբ և սահմանափակում է գյուղատնտեսության, անտառային տնտեսության, հանքարդյունաբերության և այլ ոլորտների հետ կապված բնապահպանական ազդեցությունները: Տրանսպորտի ոլորտում էներգաարդյունավետության բարձրացումը կարող է օգնել բարելավել տնտեսական դիմակայությունը վառելիքի գների տատանումների նկատմամբ:

Ռեսուրսարդյունավետությունն անմիջական ազդեցություն ունի Կայուն զարգացման 4-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ և 17-րդ նպատակների վրա: Սրանք են Որակյալ կրթություն, Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ, Արդյունաբերություն, Նորարարություն և ենթակառուցվածք, Կայուն քաղաքներ և համայնքներ, Պատասխանատու սպառում և արտադրություն, ինչպես նաև Համագործակցություն՝ նպատակների համար, համապատասխանաբար:

Այսպիսով, ռեսուրսարդյունավետությունը ենթադրում է այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք նպաստում են ռեսուրսների օգտագործման

⁵² UNEP, 2018, Resource Efficiency for Sustainable Development: Key Messages for the Group of 20, https://www.resourcepanel.org/sites/default/files/documents/document/media/thinkpiece_-_resource_efficiency_-_key_messages_for_the_g20_270818.pdf

⁵³ Resource Efficiency: Potential and Economic Implications. Ekins, P., Hughes, N., et al. A report of the International Resource Panel. United Nations Environment Programme. Nairobi, Kenya, <https://www.resourcepanel.org/file/441/download?token=3IPv9vDL>

արդյունավետության բարձրացմանը՝ արդյունքում երկարացնելով դրանց կյանքը և նվազեցնելով դրանց բնապահպանական ազդեցությունը:

3.3 Սոցիալական ներառականություն

Չնայած աղքատության կրճատման ուղղությամբ վերջին տասնամյակներին արձանագրված առաջընթացին, այն շարունակում է մնալ լուրջ խնդիր: Մեկ այլ կարևոր խնդիր է եկամուտների անհավասարությունը: Չնայած եկամուտների տարբերությունը երկրների միջև կրճատվում է, դրանց մեծ մասի ներսում հարստությունը գնալով ավելի է կենտրոնանում փոքրաթիվ հարուստների ձեռքերում: Դա իր հերթին հաճախ բերում է տարբերությունների կրթության, առողջապահության և մոբիլության առումներով, ինչն էլ ավելի է խորացնում անհավասարությունները:⁵⁴

Այս առումով կարևոր նշանակություն ունի ներառականությունը: Այն նպաստում է արդյունավետության բարձրացմանը, քանի որ կանաչ տնտեսության զարգացմանն ուղղված լավ կառավարվող գործողությունները կարող են հանգեցնել զգալի տնտեսական և սոցիալական դիմակայունության, մասնավորապես, աղքատների համար: Վերջինների ներգրավումը կանաչ տնտեսության մեջ կարող է խթանել շուկաների մեծացմանը: Բացի այդ, բարձրանում է ապահովության և անվտանգության մակարդակը, քանի որ կանաչ տնտեսության զարգացման արդյունքում կարող են ստեղծվել լրացուցիչ աշխատատեղեր:

Աղքատության և բացառման անտեսման հետ կապված վտանգները ներառում են այն, որ կանաչ տնտեսությունը կարող է դիտարկվել որպես արտաքին պարտադրանք, իսկ առավել վատ դեպքում՝ այն կարող է ունենալ փոքրաթիվ «սեփականատերեր», այդպիսով սնելով սոցիալական լարվածությունը:

Ներառականությունը ենթադրում է աղքատ կանանց և տղամարդկանց, ինչպես նաև բոլոր «բացառվածների» համար հնարավորությունների ստեղծում կանաչ տնտեսության զարգացման գործընթացներին մասնակցելու և դրանց վրա ազդելու համար: «Բացառված» են նրանք, ով մարգինալացված են՝ պայմանավորված աղքատությամբ, սեռով, տարիքով, հաշմանդամությամբ, ազգային պատկանելությամբ և այլն գործոններով:

Նման մարդիկ ոչ միայն սահմանափակ ներկայացվածություն ունեն քաղաքական ոլորտում, այլև ենթակա են իրենց ակտիվներն, իրավունքները և կարիքներն անտեսող քաղաքականությունների ազդեցությանը: Ներառման գործընթացը ենթադրում է ճանաչում, խորհրդակցում, որոշումների կայացում, ներառում արտադրության և սպառման, ինչպես նաև փոփոխությունների հետ կապված ծախսերի, օգուտների և վտանգների հավասար բաշխմանը:⁵⁵

⁵⁴ UNDP (2013) Human development report 2013 – The rise of the South: Human progress in a diverse world, http://hdr.undp.org/sites/default/files/reports/14/hdr2013_en_complete.pdf

⁵⁵ Bass S, Steele P, Toulmin C, Greenfield O, Hopkins C, Chung I and Nielsen T (2016) Pro-poor, inclusive green growth: experience and a new agenda. GGGI, IIED and GEC, <http://gggi.org/pro-poor-inclusive-green-growth-experience-and-a-new-agenda/>

Կանաչ տնտեսությունը մեծ ներուժ ունի աշխատատեղեր ստեղծող տնտեսական աճը շրջակա միջավայրի պաշտպանության և սոցիալական ներառականության հետ զուգորդելու առումով: Սակայն կան նաև ներուժն իրացնելու նշանակալի խոչընդոտներ, որոնք կարող են հաղթահարվել լավ մշակված քաղաքականությունների և թիրախային ներդրումների միջոցով, որոնք թույլ կտան աղքատներին մասնակցել անցմանը կանաչ տնտեսությանը և օգուտներ ստանալ դրանից:

Հատուկ նշանակություն ունի կառավարման և քաղաքականությունների այնպիսի բարեփոխումների իրականացումը, որոնք աղքատներին կտան իրավունքներ կապված իրենց բարեկեցության և կենսակերպի վրա մեծ ազդեցություն ունեցող բնական ակտիվների հետ, ինչպես նաև կերաշխավորեն նրանց ձայնի ավելի լավ լսելիությունն այնպիսի որոշումների կայացման ընթացքում, որոնք ազդում են նման ակտիվների կառավարման վրա: Շրջակա միջավայրի դեգրադացիան ունի կարևոր սոցիալական հետևանքներ, որոնցից են բնական ռեսուրսների գերօգտագործումով պայմանավորված աշխատատեղերի կրճատումը և եկամուտների կորուստը: Եթե զարգացման առկա մոդելը շարունակի գերիշխել, ապա անարդյունավետ արտադրության և սպառման միտումները՝ հողերի շարունակվող դեգրադացիայի, անտառահատումների, գերձկնորսության և կլիմայի փոփոխության հետ միասին կբերեն ջրի ավելի մեծ պակասի, ինչպես նաև պարենի, էներգիայի և այլ ապրանքների գների աճի: Սա իր հերթին կխորացնի աղքատությունը և անհավասարություն, ինչպես նաև թերսնուցումը և սննդի անապահովությունը:⁵⁶ **Այսպիսով, սոցիալական ներառականությունը վերաբերում է այնպիսի տնտեսական կառուցվածքին, որում չկա այս կամ այն չափանիշով մարդկանց որոշ խմբերի բացառում տնտեսական կյանքից: Այդ չափանիշների թվում կարող են լինել սեռը, տարիքը, սոցիալական դիրքը, կրթության մակարդակը և այլն: Հենց ներառականությունն է, որ հնարավորություն է տալիս խուսափել հասարակության բեռնացումից:**

⁵⁶ Working towards sustainable development: opportunities for decent work and social inclusion in a green economy / International Labour Office. – Geneva: ILO, 2012, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_181836.pdf

4 Կանաչ տնտեսությունը ՀՀ-ում և ՓՄՁ-ների դերը

4.1 ՀՀ կանաչ տնտեսության հիմնական համեմատական ցուցանիշները

ՀՀ կանաչ տնտեսության ցուցանիշների համեմատական վերլուծության իրականացման համար հիմք է հանդիսացել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից տրվող կանաչ տնտեսության ցուցանիշների ցանկը: Համաձայն առաջարկվող մեթոդաբանության, համապատասխան ցուցանիշները նախ և առաջ տարանջատվում են ըստ հիմնական չորս խմբերի: Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին ներառում է ենթախմբեր, որոնց մեջ էլ ընդգրկված են ցուցանիշները: Չորս հիմնական խմբերն են՝⁵⁷

- **Ճրջակա միջավայրի և ռեսուրսների արդյունավետություն:** Մատնանշում է, արդյոք տնտեսական աճը դառնում է ավելի կանաչ, թե ոչ՝ բնական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմամբ և հաշվի է առնում արտադրության առանձնահատկությունները:
Այս խումբն իր մեջ ներառում է հետևյալ ենթախմբերը՝ *CO₂ արդյունավետություն, Էներգաարդյունավետություն, ոչ Էներգետիկ նյութերի արդյունավետություն, բազմագործոն արդյունավետություն:*
- **Բնական ակտիվներ:** Մատնանշում է բնական ակտիվների նվազման ռիսկերը, որոնք առաջանում են տնտեսական աճի հետևանքով:
Այս խումբն իր մեջ ներառում է հետևյալ ենթախմբերը՝ *հողային ռեսուրսներ, անտառային ռեսուրսներ, ջրային ռեսուրսներ, կենդանական ռեսուրսներ, մթնոլորտ և կլիմա:*
- **Կյանքի որակի Էկոլոգիական բաղադրիչ:** Ցույց է տալիս, թե ինչպես են Էկոլոգիական պայմանները ազդում մարդկանց կյանքի որակի վրա:
Այս խումբն իր մեջ ներառում է հետևյալ ենթախմբերը՝ *Էկոլոգիական ռիսկերի վտանգ, խմելու ջրի և կոյուղու հասանելիություն:*
- **Տնտեսական հնարավորություններ և քաղաքականություն:** Մատնանշում է կանաչ աճին միտված քաղաքականությունների արդյունավետությունը:
Այս խումբն իր մեջ ներառում է հետևյալ ենթախմբերը՝ *տեխնոլոգիաներ և նորարարություններ, Էկոլոգիական ապրանքներ և ծառայություններ, միջազգային ֆինանսական հոսքեր, բնապահպանական հարկեր, կարգարվորումներ և կառավարում:*

Վերլուծության համար ընտրված ցուցանիշները՝ իրենց չափման միավորներով, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

⁵⁷ OECD Green Growth Indicators. Database Documentation
https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=green_growth
https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=green_growth

Աղյուսակ 7. Համեմատական վերլուծության համար ընտրված ցուցանիշներ

Խումբ	Ենթախումբ	Ցուցանիշ	Չափման միավոր
<i>Շրջակա միջավայրի և ռեսուրսների արդյունավետություն</i>	CO2 արդյունավետություն	ՀՆԱ-ի CO2 ինտենսիվություն, CO2 արտանետումներ միավոր ՀՆԱ-ի հաշվով	կգ CO2/ ԱՄՆ դոլար
	Էներգիայի արդյունավետություն	առաջնային Էներգիայի առաջարկի միավորի հաշվով	ԱՄՆ դոլար
		Էներգաինտենսիվություն, առաջնային Էներգիայի առաջարկ մեկ շնչի հաշվով	Տոննա նավթային համարժեք (տ. նհ)
		Առաջնային Էներգիայի առաջարկ	Մլն տոննա նավթային համարժեք
		Վերականգնվող Էներգիայի առաջարկ, %-ը Էներգիայի ընդհանուր առաջարկում	%
		Վերականգնվող Էլեկտրաէներգիայի, %-ը ընդհանուր արտադրության մեջ	%
Ոչ Էներգետիկ նյութերի արդյունավետություն		ԱՄՆ դոլար մեկ կգ հաշվով	
Բազմագործոն արդյունավետություն	Բազմագործոն արդյունավետության աճ	Տոկոսային կես	
<i>Կյանքի որակի Էկոլոգիական բաղադրիչ</i>	Բնապահպանական ռիսկերի վտանգ	PM2.5 միջին վտանգը բնակչության համար	Միկրոգրամ մեկ խմ հաշվով
	Խմելու ջրի և կոյուղու հասանելիություն	Բարելավված խմելու ջրի հասանելիություն ունեցող բնակչություն, %-ը ընդհանուր բնակչության մեջ	%
<i>Բնական ակտիվներ</i>	Քաղցրահամ ջրի պաշարներ	Վերականգնվող քաղցրահամ ջուր մեկ շնչի հաշվով	խմ մեկ շնչի հաշվով
		Մշտական մակերեսային ջուր, %-ը ընդհանուր տարածքում	%
	Հողային ռեսուրսներ	Բուսածածկ տարածք %-ը ընդհանուր տարածքի մեջ Գյուղատնտեսական հողատարածքներ, %-ը ընդհանուր տարածքի մեջ	% %
<i>Տնտեսական հնարավորություններ</i>	Տեխնոլոգիաներ և նորարարություններ: Պատենտներ	Բնապահպանական տեխնոլոգիաների մշակում, %-ը բոլոր տեխնոլոգիաներում	%


Խումբ	Ենթախումբ	Ցուցանիշ	Չափման միավոր
ր և քաղաքականություն	Տեխնոլոգիաներ և նորարարություններ:	Բնապահպանական պետական հետազոտական ծախսեր, %-ը ընդհանուր պետական հետազոտական ծախսերում	%

Աղբյուր՝ <https://www.oecd.org/greengrowth/green-growth-indicators/>

ՀՀ ցուցանիշների համեմատական վերլուծության համար վերցվել են Արևելյան Եվրոպայի երկրների (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Հունգարիա), Վրաստանի, Բելառուսի, ինչպես նաև ԵՄ միջինացված ցուցանիշները: Տվյալները հիմնականում 2019թ. համար են: Բացառություն են ջրային մակերեսների և բնապահպանական կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաների տվյալները, որոնք վերաբերում են համապատասխանաբար 2015 և 2018 թթ.:⁵⁸

CO₂-ի արդյունավետության ցուցանիշներից, ինչպես երևում է աղյուսակում, դիտարկվել է միայն ՀՆԱ-ի CO₂ ինտենսիվությունը: Դրա մակարդակը ՀՀ-ում կազմել է 0.16, ինչը դիտարկվող երկրների համեմատ միջին ցուցանիշ է: Պետք է նշել, որ ամենացածր ցուցանիշն արձանագրվել է Լիտվայում՝ 0.11, իսկ ամենաբարձրը Բելառուսում՝ 0.31: ՀՀ-ն առաջ է անցել այնպիսի երկրներից, ինչպիսիք են Էստոնիան և Չեխիան:

Գծապատկեր 22. CO₂ ինտենսիվության ցուցանիշները




Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Էներգաարդյունավետության ենթախմբից դիտարկվել են 5 ցուցանիշներ: Էներգաարդյունավետության մեծությունը ՀՀ-ում կազմել է 10,458 ԱՄՆ դոլար: Այս ցուցանիշով ՀՀ-ն գերազանցում է միայն Չեխիային, Էստոնիային և Բելառուսին: Առավել բարձր

⁵⁸ https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=GREEN_GROWTH

մակարդակն արձանագրվել է ԵՄ երկրներում՝ 13,269 ԱՄՆ դոլար: Այս երկրներն Էներգիայի միավորի սպառումից առավել մեծ տնտեսական արդյունք են ապահովում:


Գծապատկեր 23. Էներգիայի արդյունավետության ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Էներգահետնսիվության ցուցանիշով ՀՀ-ն դիտարկվող երկրների շարքում զբաղեցրել է վերջին տեղը՝ 1.15 տ ՆԻ Էներգիա մեկ շնչի հաշվով, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում առկա է մեկ շնչի հաշվով առաջնային Էներգիայի մատակարարման ամենացածր ցուցանիշը: ՀՀ-ից մի փոքր առաջ է Վրաստանը՝ 1.28 տ ՆԻ: Կրկին, առավել բարձր մակարդակն արձանագրվել է ԵՄ-ում՝ 4:


Գծապատկեր 24. Էներգահետնսիվության ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Առաջնային Էներգիայի առաջարկի մեծությամբ ևս ՀՀ-ն վերջին հորիզոնականում է՝ ընդամենը 3.40 մլն տ ՆԻ: Այս ցուցանիշով ՀՀ-ին առավել մոտ է գտնվում Լատվիան՝ 4.49 մլն տ ՆԻ առաջնային Էներգիա: Ինչպես և ակնկալվում էր, առավել բարձրը ԵՄ միջինացված ցուցանիշն է՝ 95.35 մլն տ ՆԻ:


Գծապատկեր 25. Առաջնային էներգիայի առաջարկի ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Հաջորդ ցուցանիշը վերաբերում է վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիային՝ ընդհանուր էներգիայի առաջարկում վերականգնվող էներգետիկային մասնաբաժինը: Այս ցուցանիշով ՀՀ-ն գերազանցում է միայն Բելառուսին: ՀՀ ցուցանիշը կազմել է 9%, մինչդեռ Բելառուսում այն հավասար է եղել 7%-ի: ՀՀ-ից մի փոքր առաջ են Չեխիան և Հունգարիան՝ երկուսն էլ 11%-ով: Առաջատարը Լատվիան է 41%-ով: Իսկ ԵՄ միջինացված ցուցանիշը կազմել է 15%:


Գծապատկեր 26. Վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Իսկ ինչ վերաբերում է էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնին, ապա այս ցուցանիշով ՀՀ-ն բավական բարձր դիրք է զբաղեցնում դիտարկվող երկրների շարքում՝ 32% մասնաբաժնով: Նման մակարդակը հիմնականում ապահովվել է մեծ և փոքր հիդրոէլեկտրակայանների միջոցով: Այս ցուցանիշով ՀՀ-ն գրեթե հավասար է ԵՄ-ին, որի միջինացված ցուցանիշը կազմել է 34%: Առաջատարը Վրաստանն է 76%-ով, իսկ հետնապահը Բելառուսը՝ 3%-ով:


Գծապատկեր 27. Վերականգնվող էներգետիկայի կշիռը էլեկտրաէներգիայի արտադրությունում



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Այժմ անդրադառնանք կյանքի որակի բնապահպանական բաղադրիչին: Այս խմբից երկու ցուցանիշներ են դիտարկվել՝ PM2.5 ռիսկի մեծությունը և բարելավված խմելու ջրին հասանելիությունը:

Գծապատկեր 28. Բնապահպանական ռիսկի ցուցանիշները




Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Առաջին ցուցանիշն արտացոլում է օդում 2.5 միկրոնից փոքր տրամագիծ ունեցող մասնիկների կոնցենտրացիան: Այս ցուցանիշով ՀՀ-ն բացասական առումով կտրուկ տարբերվում է մյուս դիտարկվող երկրներից: Ռիսկի միջին մակարդակը երկրում կազմում է 34.24 միկրոգրամ 1 խմ հաշվով: Համեմատության համար, Սլովակիայում, որը հաջորդում է ՀՀ-ին, այդ ցուցանիշն ընդամենը 18.53 միկրոգրամ է: Լավագույն ցուցանիշն ունի Էստոնիան՝ 5.95 միկրոգրամ: ԵՄ միջին ցուցանիշը 13.48 միկրոգրամ է:

Ինչ վերաբերում է բարելավված խմելու ջրի հասանելիությանը, ապա ՀՀ-ում այն կազմել է 86%: ՀՀ-ին զիջում է միայն Վրաստանը՝ 66%: Մնացած երկրներում այդ ցուցանիշը գերազանցում է 90%-ի շեմը:


Գծապատկեր 29. Բարելավված խմելու ջրի հասանելիության ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Անդրադառնալով բնական աղբյուրներին, որոնցից առանձնացվել են ջրային և հողային պաշարների ենթախմբերը: Առաջինի կազմում է մշտական մակերեսային ջրերի մասնաբաժինը երկրի ընդհանուր տարածքում: Այս ցուցանիշով ՀՀ-ն բավական բարձր դիրք ունի համեմատվող երկրների շարքում՝ 4.51% մշտական մակերեսային ջրերի ցուցանիշով: ԵՄ միջինացված ցուցանիշն ամենաբարձրն է՝ մոտ 6%: ՀՀ-ին գերազանցում է միայն Էստոնիան 5% ցուցանիշով: Նվազագույն մակարդակը Սլովենիայում է, որտեղ երկրի տարածքի միայն 0.2%-ն են կազմում մշտական մակերեսային ջրերը:


Գծապատկեր 30. Մակերեսային ջրերի ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Հողային ռեսուրսների ենթախմբից առանձնացվել են հետևյալ 2 ցուցանիշները՝ բուսածածկ տարածքների մեծությունը և գյուղատնտեսական տարածքների մեծությունը: Բուսածածկ տարածքները տարածքները կազմում են ՀՀ ընդհանուր տարածքի 35.95%-ը: Այս ցուցանիշով ՀՀ-ն գերազանցում է միայն Դոնգարիային: Առավել բարձր ցուցանիշն առկա է Սլովակիայում՝ շուրջ 70%: ԵՄ միջին ցուցանիշը կազմում է 53%:


Գծապատկեր 31. Բուսածածկ տարածքների մեծության ցուցանիշը



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Իսկ ինչ վերաբերում է գյուղատնտեսական տարածքների մեծությանը, ապա այս ցուցանիշով ՀՀ-ն զիջում է միայն Հունգարիային և Լիտվային: ՀՀ տարածքի կեսից ավելին՝ 55.95%-ը պիտանի է գյուղատնտեսական գործունեության համար: Հունգարիայում և Լիտվայում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար 68% և 56%: Ամենացածր ցուցանիշն Էստոնիայում է՝ 26%: ԵՄ միջին ցուցանիշը ևս զիջում է ՀՀ-ին՝ 41%:


Գծապատկեր 32. Գյուղատնտեսական տարածքների մեծության ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Վերջապես, անդրադառնանք տնտեսական հնարավորությունների և քաղաքականության խմբին: Այստեղ դիտարկվել է բնապահպանական տեխնոլոգիաների մշակումը: ՀՀ-ում նման տեխնոլոգիաները կազմել են ընդհանուրի 10.26%-ը: Այս ցուցանիշով ՀՀ-ն գերազանցում է միայն Սլովենիային, Հունգարիային և Լատվիային: Ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Բելառուսում՝ ավելի քան 25%: ՀՀ ցուցանիշը բավական մոտ է ԵՄ միջինին, որը կազմում է մոտ 13%:

Գծապատկեր 33. Բնապահպանական կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաների մշակման ցուցանիշները



Աղբյուր՝ ՏՀԶԿ Կանաչ աճի ցուցանիշներ

Համեմատական վերլուծությունն էլ ավելի ամբողջական կլիներ, եթե հնարավոր լիներ ՀՀ համար ստանալ մի քանի ցուցանիշներ ևս: Մասնավորապես, ոչ էներգետիկ նյութերի արդյունավետությունը, բազմագործոն արդյունավետությունը, վերականգնվող քաղցրահամ ջրի պաշարները և բնապահպանական ուղղվածություն ունեցող պետական հետազոտական ծախսերի մեծությունը: Այս ցուցանիշների առկայությունը թույլ կտար ծածկել հիմնական 4 խմբերի բոլոր ենթախմբերը և ավելի համապարփակ պատկերացում կազմել ՀՀ կանաչ տնտեսության վերաբերյալ:

Աղյուսակ 8. Կանաչ աճի ՀՀ ցուցանիշների ամփոփում

Ցուցանիշ	ՀՀ-ում իրավիճակը	ՓՄՁ-ների դերը
ՀՆԱ –ի CO2 ինտենսիվություն	ՀՀ-ում այս ցուցանիշը կազմել է 0.16 կգ CO2/ ԱՄՆ դոլար, ինչը միջին ցուցանիշ է համադրելի երկրների հետ համեմատելիս	Այս հարցում մեծ է էներգետիկայի ոլորտի դերը, քանի որ հենց նրան է բաժին ընկնում ածխածնային արտանետումների 70%-ը: Այդ իսկ պատճառով ՓՄՁ-ների դերը համեմատաբար փոքր է, քանի որ դրանց մասնաբաժինը ոլորտի շրջանառության մեջ մոտ 24% է: Սակայն ՓՄՁ-ները կարող են սահմանափակ ազդեցություն ունենալ այս ցուցանիշի բարելավման վրա:
ՀՆԱ-ի էներգաարդյունավետություն	ՀՀ-ի ցուցանիշը կազմել է 10,458 դոլար, որով այն իր խմբում վերջին տեղերից մեկն է զբաղեցնում, իսկ ԵՄ միջինին ցուցանիշին զիջում է մոտ 30%-ով	Այս ցուցանիշն արտացոլում է միավոր էներգիայից ստացվող տնտեսական արդյունքի մեծությունը, հետևաբար դրա բարելավումը կախված է ամբողջ տնտեսությունից: Այս առումով, ՓՄՁ-ները բավական մեծ դեր ունեն՝ հաշվի առնելով նրանց

Ցուցանիշ	ՅՅ-ում իրավիճակը	ՓՄՁ-ների դերը
		ընդհանուր դերը տնտեսության մեջ և Կառավարության այդ դերը մեծացնելու նպատակը:
Էներգահետնասիվություն, առաջնային Էներգիայի առաջարկ մեկ շնչի հաշվով	ՅՅ-ի ցուցանիշը կազմել է 1.15 տ Նհ, որով երկիրն իր խմբում վերջին տեղում է	Այս ցուցանիշը ևս կապված է Էներգետիկայի ոլորտի հետ, հետևաբար փոքր է ՓՄՁ-ների դերը:
Առաջնային Էներգիայի առաջարկ	Այս ցուցանիշով ևս ՅՅ-ն խմբում վերջին տեղում է՝ 3.40 մլն տ Նհ արժեքով	Այս ցուցանիշը ևս կապված է Էներգետիկայի ոլորտի հետ, հետևաբար փոքր է ՓՄՁ-ների դերը
Վերականգնվող մասնաբաժին Էներգիայի	Այս ցուցանիշով ՅՅ-ն դարձյալ ցածր դիրքեր ունի՝ ընդամենը 9%:	Այս ցուցանիշը ևս կապված է Էներգետիկայի ոլորտի հետ, հետևաբար փոքր է ՓՄՁ-ների դերը: Պետք է նշել, որ արևային Էներգետիկայի փոքր կայանների զարգացման հետ ՓՄՁ-ների դերը որոշակի չափով հնարավոր է ավելանա այս ցուցանիշով, սակայն հիմնական ազդեցությունը կլինի խոշոր կայանների հիմնման արդյունքում, որոնք արդեն պլանավորված են:
Վերականգնվող էլեկտրաէներգիայի էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում կշիռը	ՅՅ ցուցանիշը կազմել է 32%, որը շատ մոտ է միջինին:	Այս ցուցանիշը ևս կապված է Էներգետիկայի ոլորտի հետ, հետևաբար փոքր է ՓՄՁ-ների դերը: Պետք է նշել, որ արևային Էներգետիկայի փոքր կայանների զարգացման հետ ՓՄՁ-ների դերը որոշակի չափով հնարավոր է ավելանա այս ցուցանիշով, սակայն հիմնական ազդեցությունը կլինի խոշոր կայանների հիմնման արդյունքում, որոնք արդեն պլանավորված են
Բնապահպանական ռիսկ	PM2.5- ռիսկը ՅՅ-ում գնահատվում է 34.24 միկրոգրամ 1 խմ հաշվով: Սա վատագույն ցուցանիշն է խմբում:	Այս ռիսկի աղբյուր են հանդիսանում տարբեր ոլորտներ, որոնց թվում են արդյունաբերությունը, տրանսպորտը, Էներգետիկան և այլն: Եթե Էներգետիկայի մասով ՓՄՁ-ների դերը փոքր է, ապա մյուս երկուսի կտրվածքով նրանք ունեն բավական զգալի դեր:
Բարելավված խմելու ջրի հասանելիություն	ՅՅ-ում ցուցանիշի մեծությունը կազմում է 86%, որով ՅՅ-ն գերազանցում է միայն Վրաստանին	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է
Մակերեսային ջրեր	Մշտական մակերևույթային ջրերը կազմում են ՅՅ	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է

Ցուցանիշ	ՀՀ-ում իրավիճակը	ՓՄՁ-ների դերը
	տարածքի 4.51%-ը: Այս ցուցանիշով ՀՀ-ն իր խմբում զիջում է միայն Էստոնիային	
Բուսածածկ տարածքների մեծություն	Բուսածածկ տարածքները կազմում են ՀՀ ընդհանուր տարածքի 35.95%-ը և այս ցուցանիշով ՀՀ-ն գերազանցում է միայն Յունգարիային	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է
Գյուղատնտեսական տարածքների մեծություն	ՀՀ-ում գյուղատնտեսական տարածքները կազմում են ընդհանուր տարածքի 55.95%-ը, ինչը բավական բարձր ցուցանիշ է համադրելի երկրների շարքում	Այս ցուցանիշի առումով ՓՄՁ-ների դերը փոքր է
Բնապահպանական տեխնոլոգիաների մշակում	Այս ցուցանիշը ՀՀ-ում կազմել է 10.26%, ինչը բավական մոտ է ԵՄ ցուցանիշին, սակայն զիջում է համադրելի երկրներից շատերին	Այս ցուցանիշի բարելավման առումով ահռելի է ՓՄՁ-ների դերը, քանի որ ՓՄՁ-ներն շատ տեխնոլոգիաների առաջին կիրառողը:

Այսպիսով, ամփոփելով վերը ներկայացվածը, կարող ենք նշել, որ կանաչ աճի ցուցանիշների մի զգալի մասով ՀՀ-ն իր հետ համադրելի երկրների շարքում զբաղեցնում է ցածր դիրքեր: Մասնավորապես, ՀՀ-ն վատ ցուցանիշներ ունի Էներգաինտենսիվության և բնապահպանական ռիսկի տեսանկյունից: Պետք է փաստել, որ այդ ցուցանիշների մեծ մասի դեպքում ՓՄՁ-ների դերը սահմանափակ է: Նաև պետք է նշել, որ ավելի համապարփակ գնահատական ունենալու համար, ՀՀ-ի համար բացակայում են մի քանի առանցքային ցուցանիշներ:

4.2 ՀՀ ՓՄՁ-ներում կանաչ տնտեսության սկզբունքների և մեխանիզմների ներառումը

ՀՀ ՓՄՁ-ներում կանաչ տնտեսության **չրջակա միջավայրի և ռեսուրսների օգտագործման արդյունավետության** սկզբունքների ներդրման մասով բավական մեծ ներուժ է առաջարկում երկրի ֆինանսական համակարգը՝ հատկապես ի դեմս բանկային համակարգի: Վերջինի կողմից ՓՄՁ-ներին են առաջարկվում մի շարք վարկային պրոդուկտներ՝ բավական մատչելի պայմաններով, որոնք նպաստում են կանաչ տնտեսության սկզբունքների ներդրմանը:

Հատկապես մեծ տարածում ունի գերմանական Վերականգնման վարկերի բանկի (KfW) և Գերմանահայկական հիմնադրամի (ԳՀՀ) կողմից համատեղ իրականացվող «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» վարկային ծրագիրը, որով ենթադրում է միջոցների տրամադրում Էներգաարդյունավետ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով: Դրանց թվին են դասվում Էներգաարդյունավետ օդափոխության, հովացման և ջեռուցման համակարգերը, արևային Էներգիայի ֆոտովոլտային պանելները, և այլն:

Այս և նմանատիպ այլ ծրագրերի շնորհիվ ՓՄՁ-ները հնարավորություն են ստանում բարձրացնել էներգետիկ ռեսուրսների սպառման արդյունավետությունը և դրական ազդել նաև շրջակա միջավայրի վրա՝ խնայելով զգալի դրամական միջոցներ:

Ռեսուրսների օգտագործման արդյունավետության սկզբունքի տեսանկյունից մեծ կարևորություն ունեն նաև ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերը: Մասնավորապես, այդ ծրագրերով նախատեսվում է ձեռնարկատերերի կողմից արվող այնպիսի ծախսերի փոխհատուցում, որոնք ուղղված են խելացի գյուղատնտեսության սկզբունքների ներդրմանը: Դրանք են կաթիլային ոռոգումը, ինտենսիվ այգիների հիմնումը, խելացի անասնազոմերի կառուցումը և այլն: Ավելին, նախքան աջակցության տրամադրումը կազմակերպվում են վերապատրաստման ծրագրեր և համապատասխան դասընթացներ:

Նման միջոցառումների իրականացման միջոցով գյուղատնտեսական ՓՄՁ-ները կբարձրացնեն ոչ միայն էներգետիկ ռեսուրսների, այլ առաջին հերթին հողային և ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, քանի որ հնարավորություն կունենան նույն մեծության հողատարածքի մշակումից և ջրային ռեսուրսների օգտագործումից ստանալ ավելի մեծ գյուղատնտեսական արդյունք:

Ինչպես տեսնում ենք, ՓՄՁ-ներում կանաչ աճի սկզբունքների ներդրման համար ՀՀ-ում կան մի շարք հնարավորություններ: Սակայն, հարկ է ընդգծել, որ չնայած առկա ծրագրերին և հնարավորություններին, դեռևս հայաստանյան ՓՄՁ-ներում կանաչ աճի սկզբունքների ներդրման գործընթացը դանդաղ է առաջ գնում: Պատճառների թվում կարող ենք նշել տեղեկացվածության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև ֆինանսական միջոցների ոչ բավարար ծավալը:

4.3 Ոլորտային վերլուծություն

4.3.1 Գյուղատնտեսություն

Ինչպես արդեն նշվել է վերևում, նախնական տվյալներով 2021թ. ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կազմել է 775 մլրդ դրամ: 2020թ. այդ ցուցանիշը եղել է 693 մլրդ դրամ: Ընդ որում, եթե դիտարկենք արտադրանքի կառուցվածքը, ապա դրա մոտ 48%-ը բաժին է ընկել բուսաբուծությանը, իսկ 52%-ը՝ անասնաբուծությանը:

Բնակչության տնտեսությունները կազմել են գյուղատնտեսական տնտեսությունների գերակշիռ մասը՝ 94.1%:

Ցանքատարածությունների մեծությունը 2020թ. կազմել է 222.7 հազար հա: Այդ տարածքների հիմնական մասը կազմել են հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 54.6%: Կերային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են ամբողջի 24.1%-ը:⁵⁹

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության» **ՀՀ կառավարության առաջիկա տասը տարիների տեսլականն է**

⁵⁹ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե

ուՆԵՆԱԿ ԿԱՅՈՒՆ ԳԱՐԳԱԳՈՂ, ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ, ԲԱՐԾՐ ԱՎԵԼԱԳՎԱԾ ԱՐԺԵՔ ՍՈՒԵԾՈՂ, ԲՆԱԿԱՆ ԿԱՉԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈԳԱՏԱՐ և շՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՏՈՆԵՐՊԱՇՆԱԿ, ԷԿՈԼՈԳԻԱԿԵՍ ՄԱՔՈՐ ԱՐՈՏԱՊՐԱՆՔ ՍՈՒԵԾՈՂ և ԳՅՈՒԼՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԵԾՈՒԹՅՈՒՆՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ԳՅՈՒԼԱՏՆՈՒՏՈՒԹՅՈՒՆ:⁶⁰

Ներկայում գյուղատնտեսությունը ամերեսվում է մի շարք մարտահրավերների, որոնք Էական բացասական ազդեցություն են ունենում անասնապահության, հողագործության և այգեգործության վրա: Չգալիորեն նվազել է հողի բերրիությունը և արոտավայրերի արտադրողականությունը, իսկ հողային ռեսուրսների 82%-ը, ներառյալ՝ վարելահողերը, գտնվում է անապատացման և էրոզիայի վտանգի տակ:⁶¹

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագրի, Հայաստանում անապատացման հետ առավել սերտ առնչվող տնտեսության ճյուղերից մեկն է գյուղատնտեսությունը, որի դեպքում շրջակա միջավայրին առնչվող խնդիրներն են ոռոգման անարդյունավետության հետևանքով առաջացող ջրի կորուստները, հողի աղակալումը, էրոզիան, գյուղատնտեսական թափոններով աղտոտումը: Վերջինները հանգեցնում են՝ Էկոհամակարգերի դեգրադացիայի, կենսաբազմազանության փոփոխության և կորուստի, ինչն ի վերջո արտահայտվում է Էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական խորը փոփոխություններով:⁶²

Գյուղատնտեսության ոլորտը շատ զգայուն է կլիմայի փոփոխության նկատմամբ, որի ամբողջական ռիսկերը և հնարավոր հետևանքները դեռ գնահատվում են:

Գյուղատնտեսության ոլորտի կանաչ աճի իրավիճակի վերլուծությունն իրականացվել է ըստ գյուղատնտեսության գործունեության ոլորտների՝ հետևյալ խմբավորումներով.

- Կարտոֆիլի, հացահատիկի և հատիկընդեղենի մշակություն,
- Բանջարաբուստանային կուլտուրաների մշակություն,
- Այգեգործություն, ներառյալ մրգերի, խաղողի և հատապտղի մշակությունը,
- Խոշոր եղջերավոր անասնապահություն,
- Մանր եղջերավոր անասնապահություն,
- Խոզաբուծություն,
- Թռչնաբուծություն,
- Ձկնաբուծություն,

⁶⁰ Հավելված 1, ՀՀ Կառավարության 2019թ. դեկտեմբերի 19ի N 1886 Լ որոշման, «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության»

⁶¹ ԵՄ/ՄԱԶԾ ծրագիր 00085981: Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման եւ հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով անտառների եւ արոտավայրերի կայուն կառավարում Հայաստանում: https://www.undp.org/content/dam/armenia/docs/CE_ProDoc_Arm_Final.pdf

⁶² Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր

- Մեղվաբուծություն:

Յոթագործություն՝ կարտոֆիլի, հացահատիկի և հատիկընդեղենի մշակություն

Հայաստանում կարտոֆիլի, հացահատիկի և հատիկընդեղենի մշակությունն իրականացվում է հողի ինտենսիվ մշակությամբ և ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ հողի խորը վար, սերմնացանը, պարարտացումները, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումները և այլ: Նշված բոլոր միջոցառումները իրականացվում են գյուղատնտեսական տեխնիկայի, մասնավորապես թրթուրավոր և անիվավոր տրակտորների օգտագործմամբ, ինչը հանգեցնում է մթնոլորտի աղտոտման տրակտորների աշխատանքի հետևանքով առաջացող ծխով, ինչպես նաև հողի մշակության հետևանքով առաջացող փոշով:

Մասնավորապես հացահատիկի մշակության համար հատկանշական է բերքահավաքից հետո դաշտերի այրումը, ինչը հանգեցնում է մի շարք բացասական բնապահպանական հետևանքների, ինչպիսիք են մթնոլորտի աղտոտումը ծխով, ջերմոցային գազերի արտանետումները, հողի բերրի շերտի մեջ առկա ազոտի կորուստը: Դաշտերի այրումը մեծ վնաս է հասցնում նաև կենդանական աշխարհին, մասնավորապես դաշտերում բնադրած թռչուններին:

Հացահատիկի, հատիկընդեղենի և կարտոֆիլի մշակության համար սովորաբար չի կիրառվում ցանքաշրջանառություն և մշակաբույսերի հերթափոխային մշակություն: Հողի ամենամյա խորը վարը և մոնոկուլտուրաների մշակությունը բացասաբար է ազդում նաև հողի որակի վրա՝ հանգեցնելով հողի կառուցվածքի քայքայմանը և էրոզիայի առաջացմանը:

Հացահատիկի, հատիկընդեղենի և կարտոֆիլի մշակության համար ինտենսիվորեն օգտագործվում է ազոտական պարարտանյութ: Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների համար ինտենսիվորեն օգտագործվում են պեստիցիդներ: Այս ամենը հանգեցնում է հողի մեջ պեստիցիդների մնացորդային քանակի կուտակմանը: Հանքային պարարտանյութերի, պեստիցիդների և հերբիցիդների ինտենսիվ օգտագործումը նաև բացասաբար է ազդում կենսաբազմազանության և կենդանական աշխարհի վրա:

Յոթագործություն՝ բանջարաբուստանային կուլտուրաների մշակություն:

Բանջարաբուստանային կուլտուրաների մշակությունը հիմնականում իրականացվում է ոչ մեծ հողակտորների վրա, հաճախ՝ տնամերձ հողամասերում: Թե բաց գրունտի վրա, թե ջերմոցային պայմաններում բանջարաբուստանային կուլտուրաների մշակությունը հաճախ իրականացվում է մշակաբույսերի հերթափոխային մշակությամբ, սակայն միաժամանակ մշակվող մշակաբույսերի համակեցության, ինչպես նաև մշակության հերթափոխների ճիշտ ընտրությունը կարող է զգալիորեն բարձրացնել բերքատվությունը, ինչպես նաև նպաստել պարարտանյութերի և ջրի օգտագործման նվազեցմանը:

Բանջարաբուստանային մշակաբույսերի մշակությանը բնորոշ է օրգանական թափոնների մեծ ծավալը, որը կարող է օգտագործվել կոմպոստի արտադրության և հանքային պարարտանյութերի արդյունավետորեն փոխարինման համար:

Այգեգործություն, ներառյալ հատապտուղների, խաղողի և մրգերի աճեցում

Այգեգործության համար բնորոշ է ոռոգման ջրի, պարարտանյութերի և թունաքիմիկատների ինտենսիվ օգտագործումը: Թունաքիմիկատներով ինտենսիվ սրսկումների հետևանքով աղտոտվում է մթնոլորտը, իսկ հանքային պարարտանյութերի ինտենսիվ օգտագործման

հետևանքով հողում կարող են կուտակվել նիտրատներ ու ծանր մետաղներ, որոնք հանդիսանում են վտանգավոր աղտոտիչներ:

Անասնապահություն

խոշոր եղջերավոր անասնապահություն

խոշոր եղջերավոր անասնապահության ոլորտում բնապահական խնդիրները հիմնականում կապված են բնական կերհանդակների, արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հետ: Այս առումով մեծ կարևորություն ունի արոտավայրերի հերթափոխային կառավարումը, ինչը հիմնականում չի իրականացվում: Հաճախ հեռագնա արոտավայրերը չեն շահագործվում՝ համապատասխան ենթակառուցվածքների բացակայության, ինչպես նաև նախընտրյալ ճանապարհների ոչ բարվոք վիճակի պատճառով: Համայնքամերձ արոտավայրերի գերարածեցումը հանգեցնում է բնական բուսական ծածկույթի տեսակային կազմի կրճատմանը ու քանակական նվազմանը, ինչն էլ հանգեցնում է արոտների դեգրադացմանը:

Արածեցման համար գյուղատնտեսական կենդանիներն ամեն օր նույն ճանապարհով տարվում են արոտավայրեր, ինչը հանգեցնում է բնական բուսական ծածկույթի քայքայմանը և հողի էրոզիայի առաջացմանը: Ջրային էրոզիայի հետևանքով բուսականությունից զուրկ հողաշերտը լվացվում է՝ լանջերը դարձնելով քարքարոտ: Բուսականությունից զուրկ ճանապարհներով խոշոր եղջերավոր կենդանիների ամենօրյա տեղաշարժը պատճառ է հանդիսանում նաև փոշու առաջացման և մթնոլորտի աղտոտման: Օդի աղտոտման պատճառ է հանդիսանում նաև գոմաղբի ոչ ճիշտ պահպանումն ու օգտագործումը, ինչը պատճառ է հանդիսանում մարդու և բնության համար վնասակար գազերի արտանետումների համար: Ջերմոցային գազերի արտանետումների առումով խոշոր եղջերավոր անասնապահությունը նաև զգալի բացասական ազդեցություն ունի կլիմայի փոփոխության վրա:

Մանր եղջերավոր անասնապահություն

Մանր եղջերավոր անասնապահությունը հատկապես մեծ վնաս է հասցնում կենսաբազմազանությանը և հողային ծածկույթին: Գյուղատնտեսական մանր եղջերավոր կենդանիներն արածելու ընթացքում արմատախիլ են անում բուսականությունը: Մանր եղջերավոր գյուղատնտեսական կենդանիների արածեցումը հաճախ սկսվում է վաղ գարնանը, երբ հողի մեջ բարձր է խոնավության աստիճանը, այն փոխար է և գյուղատնտեսական կենդանիներն այն կճղակներով տրորելով նպաստում են հողի էրոզիայի առաջացմանը և լանջերի դեգրադացմանը:

Մանր և խոշոր եղջերավոր գյուղատնտեսական կենդանիների տեղաշարժը բացասական ազդեցություն է ունենում նաև ջրային ավազանի վրա: Կենդանիները հաճախ անցնում են դաշտերով հոսող առվակների և գետակների միջով, որոնք աղտոտվում են կենդանիների կճղակների հետ եկող ցեխից և հատկապես կենդանիների արտաթորանքներից: Խնդիրն առավել զգայուն է դարձնում այն փաստը, որ գյուղական բնակավայրերում կենցաղային նպատակներով օգտագործվում է հենց այն նույն ջուրը, որը դաշտերով բաց հոսելով հասնում է բնակավայրեր և չի ենթարկվում մեխանիկական մաքրման:

Համաձայն Հայաստանում կլիմայի փոփոխության սցենարների (ՄԱԿ ԿՓՇԿ-ի ներքո չորրորդ ազգային հաղորդագրություն), երկրում հնարավոր են լեռնային հանդակների և, համապատասխանաբար, արտադրողականության մակարդակների հսկայական

փոփոխություններ: Յետևաբար, սպասվում է, որ 4-10%-ով կկրճատվեն արոտավայրային ընդհանուր տարածքները և դրանց արտադրողականությունը: Առավել որոշակիորեն՝ սպասվում է, որ 21%-ով կկրճատվի ենթաալպիական գոտու և 22%-ով՝ ալպիական գոտու ամենաարժեքավոր ու բարձր արտադրողականություն ունեցող արոտավայրերի մակերեսը, ինչպես նաև՝ տեղի կունենա լեռնային հանդակների արտադրողականության նվազում 7-10%-ով: Սպասվում է, որ տեղի կունենա արոտավայրերի բուսականության կառուցվածքում թունավոր, փշոտ բույսերի և մուխխոտերի մասնաբաժնի մեծացում, արոտավայրերի արտադրողականության անկում և խոտի, որպես անասնակերի, որակի նվազում: Ի հետևանք, կգրանցվի անասնազխաբանակի կրճատում 30%-ով և կաթնատու անասունների արտադրության ծավալների նվազում 28-33%-ով:⁶³⁶⁴

Թռչնաբուծությունը, խոզաբուծությունը և ճագարաբուծությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն են ունենում հիմնականում արտաթորանքների առատ արտադրության առումով:

Ձկնաբուծությունը ջրօգտագործման տեսանկյունից շատ մեծ խնդիր է հատկապես Արարատյան դաշտավայրում: Ջրօգտագործման արդյունավետությունը բարձրացնելը միաժամանակ ոլորտի մրցունակությունը պահպանելը կարևորագույն խնդիրներից է:

Ոլորտում կան նաև սոցիալական հավասարության խնդիրներ: Մասնավորապես, համաձայն ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության «Գենդերը, գյուղատնտեսությունը եւ գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում» 2017թ իրականացված հետազոտության գյուղատնտեսության ոլորտում հայտնաբերվել են հետևյալ գենդերային խնդիրները.

- Կանայք գերներկայացված են ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում, ընտանեկան ֆերմաներում չվճարվող աշխատանքներում, եւ տնային գործերում,
- Գրանցվել է կանանց համար գյուղատնտեսության վերաբերյալ տեխնիկական գիտելիքների անբավարար հասանելիություն, ներառյալ տեղեկությունների հասու լինելու եւ օժանդակ ծառայություններից ու վերապատրաստման դասընթացներից օգտվելու հետ կապված դժվարությունները,
- Հողերի մեծ մասը գրանցված է եւ կառավարվում է տղամարդկանց կողմից, իսկ կանանց կողմից հողի սեփականության նկատմամբ իրենց իրավունքների դե ֆակտո իրացումը բախվում է խոչընդոտների,
- Կանայք սահմանափակ հասանելիություն ունեն վարկերի և ձեռներեցության, շուկաների, շարժունակության և գյուղատնտեսական ներդրումների նկատմամբ:

⁶³ ԵՄ/ՄԱԶԾ ծրագիր 00085981: Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման եւ հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով անտառների եւ արոտավայրերի կայուն կառավարում Հայաստանում:

https://www.undp.org/content/dam/armenia/docs/CE_ProDoc_Arm_Final.pdf

⁶⁴ UNFCCC Fourth National Communication on Climate Change, 2020

4.3.2 Չբոսաշրջություն

Ինչպես ներկայացված է վերևում, զբոսաշրջությունը ՀՀ տնտեսության կարևոր և դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է: Հիշեցնենք, որ մինչև COVID-19 համաճարակի բռնկումը ՀՀ զբոսաշրջային այցելությունների թիվը կայուն կերպով աճում էր՝ 2019թ. կազմելով շուրջ 1.9 մլն մարդ, մինչդեռ 2021թ. նախնական տվյալներով ՀՀ է այցելել 870 հազար մարդ⁶⁵:

Պետք է ընդգծել, որ միջին հաշվով յուրաքանչյուր զբոսաշրջիկ ՀՀ-ում ծախսում է մոտ 820 ԱՄՆ դոլար, ինչը նշանակում է, որ 2021թ. կտրվածքով զբոսաշրջության համախառն արդյունքը կլինի մոտ 715 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ զբոսաշրջային 2020-2030թթ. ռազմավարության տեսլականն է մինչև 2030թ. ունենալ աշխարհում ճանաչելի, հասանելի, որակապես կայուն և առաջարկների բազմազանությամբ հարուստ զբոսաշրջային նպատակակետ, որտեղ այցելուները կզգան և կմասնակցեն Հայաստանի հնագույն մշակույթի, պահպանված բնության և կենսակերպի զարգացող պատմությանը:

Համաձայն ռազմավարության լավատեսական սցենարի, 2030թ. ակնկալվում է ընդունել 7 մլն զբոսաշրջիկ, ստեղծել 93 հազար մշտական աշխատատեղ և ապահովել մոտ 6 մլրդ դոլար արդյունք: Իրատեսական սցենարի դեպքում այդ ցուցանիշները կլինեն համապատասխանաբար՝ 4.3 մլն այցելու, 85 հազար աշխատատեղ և 3.4 մլրդ դոլար արդյունք:

Համաձայն այդ ռազմավարության, առաջարկվող բոլոր զբոսաշրջային նախագծերում մի քանի այլ սկզբունքների հետ միաժամանակ պետք է ապահովվի շրջական միջավայրի պաշտպանությունն ու պահպանումը, որն էլ պետք է ինտեգրվի ենթակառուցվածքների ընդլայնման խնդրին:⁶⁶ Ռազմավարությունը չի ներառում ոլորտում 60 և ավելի տոկոս զբաղվածությունն ունեցող կանանց հիմնախնդիրներն ու հատուկ կարիքները:

Վերադառնալով ոլորտի ներկա իրավիճակին, պետք է նշել, որ այն կարևոր նշանակություն ունի նաև զբաղվածության ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, 2021թ. հոկտեմբերի տվյալներով ոլորտում ներգրավված աշխատողների քանակը կազմել է 31,087, ինչը բոլոր զբաղվածների 4.7%-ն է⁶⁷:

Ավելին, 2018թ. տվյալներով այս ոլորտում է գործունեություն ծավալել 4,053 տնտեսվարող կամ ամբողջի մոտ 6%-ը: Դրանք հիմնականում ներառում են ռեստորաններ, սրճարաններ, սննդի այլ կետեր, հյուրանոցներ, հյուրատներ և այլն:

Հարկ է ընդգծել, որ այդ 4,053 տնտեսվարողների ճնշող մեծամասնությունը՝ 4,048-ը ՓՄՁ-ներ են, որոնցից 3,444-ը գերփոքր են, 532-ը փոքր, իսկ 72-ը՝ միջին:

Ինչ վերաբերվում է այս ոլորտում կանաչ տնտեսության սկզբունքների մասին, այստեղ հիմնականում խոսք է գնում **Էներգառեսուրսների և ջրային ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև թափոնների կառավարման մասին**: Այս ոլորտի

⁶⁵ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

⁶⁶ ՀՀ զբոսաշրջության ռազմավարություն 2020-2030

⁶⁷ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

օբյեկտները հիմնականում ինտենսիվ կերպով էներգիա են օգտագործում իրենց բնական գործունեության ապահովման համար՝ ջեռուցում, հովացում, լուսավորություն, սննդի պատրաստում և այլն, ինչը նշանակում է, որ էներգաարդյունավետության խնդիրները դրանց համար առավել էական են:

Այս առումով վերջին տարիներին սկսել են նկատվել դրական տեղաշարժեր: Մասնավորապես, հյուրանոցային ոլորտի մի շարք տնտեսվարողներ տեղադրում են ֆոտովոլտային պանելներ կամ արևային ջրատաքացուցիչներ, ինչի շնորհիվ հնարավորություն են ստանում արտադրել իրենց կարիքների համար պահանջվող էլեկտրաէներգիան և ունենալ զգալի դրամական խնայողություններ, ինչպես նաև նպաստում են կլիմայի փոփոխության դեմ պայքարին:

Ֆոտովոլտային պանելների կիրառումը հատկապես արդիական է մարզային տնտեսվարողների համար, որոնք ունենք բավականաչափ տարածքներ դրանց տեղադրման համար: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ մինչև 500 ԿՎտ հզորությամբ արևային էներգիայից էլեկտրաէներգիա արտադրողները կարող են առաջացած ավելցուկը վաճառել բաշխիչ ցանցերին:

Նման օրինակներ կան, երբ հյուրանոցը իր կարիքների համար տեղադրած արևային կայանի հիմքի վրա ստեղծել է հզոր արևին հետևող կայան⁶⁸:

Առհասարակ, հատկապես հյուրանոցային տնտեսության մեջ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և հատկապես էներգաարդյունավետության տեսանկյունից մեծ կարևորություն ունեն խելացի լուծումները՝ լուսավորության, ջրամատակարարման, օդափոխության, հովացման համակարգերում և այլն: Բացի այդ, շատ կարևոր է ուշադրություն դարձնել կիրառվող սարքավորումների ցուցանիշներին՝ ձեռք բերելով էներգախնայող սարքեր և սարքավորումներ:

Նույնը վերաբերում է նաև հանրային սննդի օբյեկտներին, ովքեր ինտենսիվ կերպով սպառում են էլեկտրաէներգիա, բնական գազ և ջուր:

Նկարագրված լուծումների ներդրմամբ հնարավորություն է ընձեռնվում էապես բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը՝ ինչը չի կարող դրական չանդրադառնալ տնտեսության ինչպես ֆինանսական, այնպես բնապահպանական արդյունավետության վրա:

Բայց պետք է նշել, որ խելացի լուծումների առումով դեռևս ՀՀ զբոսաշրջային ոլորտի տնտեսվարողները հետ են մնում՝ իրենց նախապատվությունը տալով ավանդական ստանդարտ լուծումներին: Թերևս սա կարելի է բացատրել նման լուծումների համար պահանջվող ֆինանսական ներդրումների բացակայությամբ:

Մինևույն ժամանակ, զբոսաշրջային տնտեսվարողները գեներացնում են զգալի ծավալով թափոններ՝ մի մասը կոշտ թափոնների, մյուս մասը սննդային թափոնների տեսքով: Հայաստանյան իրականության մեջ լավագույն լուծումը թերևս կլիներ թափոնների տեսակավորումը, ինչը հնարավորություն կընձեռներ դրանց մի մասը ուղարկել երկրորդային


⁶⁸ Չեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղում գործող Թուֆենկյան հյուրանոցային ցանցի հյուրանոցը, որը տարեկան կարող է արտադրել ավելի քան 12 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա:

վերամշակման և նոր արդյունքի ստացման: Սակայն այս մասով դեռևս մեծ բաց կա, քանի որ զբոսաշրջային տնտեսության սուբյեկտները մեծամասամբ չեն տեսակավորում:

4.3.3 Արդյունաբերություն

Արդյունաբերությանը բաժին է ընկնում ՀՀ ամբողջ տնտեսության մոտ 34%-ը: Ինչպես արդեն նշվել է, այս ոլորտը ամենաքիչը տուժեց 2020թ. բացասական իրադարձություններից: Ընդհանուր առմամբ թողարկվեց 2,101 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք: Վերջինի 2/3-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը: Եվս 20% մասնաբաժին է ունեցել հանքարդյունաբերությունը:⁶⁹

Գծապատկեր 34. Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան ՀՀ-ում



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2018թ. տվյալներով ոլորտում գործունեություն է ծավալել թվով 7,387 տնտեսվարող, որոնցից 7,325-ը եղել են ՓՄՁ: Տնտեսվարողների ճնշող մեծամասնությունը՝ 6,741, ներկայացրել են մշակող արդյունաբերությունը, որոնցից 6,695-ը եղել են ՓՄՁ-ներ⁷⁰:

2021թ. հոկտեմբերի դրությամբ ոլորտում ներգրավված աշխատողների թիվը կազմել է 115,950, ինչը կազմել է ամբողջի ավելի քան 17%-ը⁷¹:

Պետք է նշել, որ ոլորտն ունի բավական մեծ բնապահպանական ազդեցություն: Մասնավորապես, 2020թ. հենց այս ոլորտին է բաժին ընկել ՀՀ-ում վնասակար նյութերի դեպի մթնոլորտ արտանետման 26%-ը՝ ներառյալ մշակող արդյունաբերությունը, հանքարդյունաբերությունը և էներգետիկան: Բացարձակ արժեքով, այս ոլորտի


⁶⁹ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե

⁷⁰ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե

⁷¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

գործունեության հետևանքով մթնոլորտ է արտանետվել մոտ 77 հազար տոննա վնասակար նյութ:⁷²

Գծապատկեր 35. Վնասակար նյութերի մթնոլորտային արտանետումների բաշխումն ըստ տնտեսության ոլորտների



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Բացի այդ, այս ոլորտին է բաժին ընկել նաև առաջացած թափոնների գերակշիռ մասը: Մասնավորապես, 2020թ. ամբողջ տնտեսության մասշտաբով առաջացել են 73,389 հազար տոննա արտադրական թափոններ, որոնցից 73,362 հազար տոննա առաջացել է արդյունաբերական կազմակերպություններում՝ 99%-ից ավելին:

Եթե խնդիրը դիտարկենք ավելի մանրամասն կերպով, ապա կտեսնենք, որ թափոնների առաջացման հիմնական աղբյուրը հանքարդյունաբերական կազմակերպություններն են: Վերջիններում 2020թ. առաջացել են ավելի քան 73,305 հազար տոննա թափոններ:⁷³

Աշխարհագրական կտրվածքով թափոնների առաջացումը դիտարկելիս, պարզ է դառնում, որ դրանք հիմնականում առաջացել են երկու մարզերում՝ Գեղարքունիքում⁷⁴ և Սյունիքում, համապատասխանաբար 42,866 հազար և 30,401 հազար տոննա: ՀՀ հանքարդյունաբերական ներուժը կենտրոնացած է այս երկու մարզերում:


Բնապահպանական տեսանկյունից մտահոգիչ է ոլորտում առաջացող թափոնների աճի միտումը: Մասնավորապես, 2016թ. համեմատ 2020թ. արձանագրվել է հանքարդյունաբերական թափոնների 33% աճ:

⁷² Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2020 թվականին: ՀՀ վիճակագրական կոմիտե

⁷³ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2020 թվականին: ՀՀ վիճակագրական կոմիտե:

⁷⁴ Չողի հանքավայրի շահագործման արդյունքում, սակայն հանքաքարը տեղափոխվում է Արարատի մարզ, որտեղ էլ գտնվում է պոչամբարը:

Գծապատկեր 36. Թափոնների առաջացման դինամիկան ՀՀ հանքարդյունաբերությունում



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Թափոնների կառավարման մասին խոսելիս, պետք է նշել, որ դրանց հիմնականը մասը՝ 68,495 հազար տոննան կամ 93%-ը, կազմակերպությունների միջոցով տեղափոխվել է տեղադրման վայրեր: Եվս 903 հազար տոննա թափոններ օգտագործվել են դրանք առաջացնող կազմակերպություններում:⁷⁵

Թափոնների արդյունավետ կառավարման խնդիրը կանաչ աճի սկզբունքների տեսանկյունից առանցքային նշանակություն ունի ՀՀ արդյունաբերության համար և իրենից ներկայացնում է մի ուղղություն, որտեղ դեռևս բազում անելիքներ կան: Ինչպես նշվեց վերևում, հանքերում առաջացող թափոնների հիմնական մասը թաղվում է հանքերին կից պոչամբարներում: Սա առաջ է քաշում դրանց անվտանգության ապահովման խնդիրը՝ հաշվի առնելով հանքերի աշխարհագրական դիրքը և ընդհանուր սեյսմիկ ակտիվ ֆոնը, ինչը ստեղծում է հնարավոր արտահոսքերի մեծ ռիսկ: Մասնավորապես, եղել են այնպիսի դեպքեր, երբ մետաղական հանքերի թափոնները արտահոսել են մոտակա գետեր՝ հանգեցնելով ջրի աղտոտվածության մակարդակի բարձրացման⁷⁶:

Մեկ այլ կարևոր խնդիր է հանքերի տեղադիրքի հարցը: Մասնավորապես, պարբերաբար կոնֆլիկտներ են առաջանում հանքարդյունաբերության հետագա ընդլայնման և անտառածածկ տարածքների պահպանման միջև, երբ հանքերի շահագործման համար հարկ է լինում իրականացնել անտառահատումներ: Դրա վառ օրինակը Թեղուտի հանքի շահագործումն էր, որի համար իրականացվեց զգալի ծավալով անտառահատում:

Վերջին տարիների թերևս ամենաքննարկվող դեպքը Ամուլսարի ոսկու հանքի շահագործման խնդիրն է: Կան մտահոգություններ կապված նրա հետ, որ հանքի պոչամբարի հնարավոր վնասման դեպքում առկա է Ջերմուկի ստորգետնյա ջրերի և Սևանա լճի անվերադարձ աղտոտման վտանգ, ինչը բացասաբար կանդադարառնա երկրի կարևորագույն

⁷⁵ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2020 թվականին: ՀՀ վիճակագրական կոմիտե:

⁷⁶ <https://www.ecolur.org/hy/news/mining/-/11275/>


Էկոհամակարգերից մեկի վրա, իր բնապահպանական, տնտեսական և սոցիալական հետևանքներով:

Նման խնդիրների հիմնական լուծումը բնապահպանական հստակ և խիստ պահանջներով օրենսդրության և մոնիթորինգի մեխանիզմների մշակումն ու ներդրումն է, որը կսահմանի հստակ կանոններ, ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար:

4.3.4 Սննդի վերամշակում

Սննդի արդյունաբերությունը ՀՀ տնտեսության մշակող արդյունաբերության կարևորագույն ուղղություններից մեկն է, որին բաժին է ընկնում վերջինի արտադրանքի գրեթե 40%-ը: Մասնավորապես, 2020թ. ոլորտի արդյունքը կազմել է 549 մլրդ դրամ, ինչը կազմում է տարվա ՀՆԱ-ի մոտ 9%-ը⁷⁷:

Գծապատկեր 37. Սննդի արդյունաբերության դինամիկան ՀՀ-ում



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ավելին, այս ոլորտը նույնքան մասնաբաժին ունի նաև արտահանման կառուցվածքում: Մասնավորապես, 2020թ. ՀՀ-ից արտահանվել է 270 մլն դոլարից ավելի արդյունք⁷⁸:

Այս ոլորտը առանձնանում է նրանով, որ իրենից ներկայացնում է գյուղատնտեսության և արդյունաբերության յուրատեսակ հիբրիդ, քանի որ վերջնական ապրանքների համար արժեշրթան սկսում է հենց գյուղատնտեսությունից:

Կանաչ աճի տեսանկյունից մեծապես կարևորվում է ամբողջ շղթան, այդ թվում նաև վերջնական արդյունքի փաթեթավորումը և առաջացող թափոնների կառավարումը: Սա նշանակում է, որ նախ և առաջ տնտեսվարողները պետք է օգտագործեն Էկոլոգիապես մաքուր հումք, այդ հումքի մշակումն ու վերամշակումն իրականացնեն ժամանակակից և արդյունավետ սարքավորումներով (այդ թվում՝ Էներգաարդյունավետ), կիրառեն բնապահպանորեն ընդունելի փաթեթավորման նյութեր և ներդնեն թափոնների կառավարման համակարգեր: Այլ

⁷⁷ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե

⁷⁸ ՀՀ ՊԵԿ

կերպ ասած, կանաչ աճը տալիս է ռեսուրսարդյունավետության և վերամշակված հումքի օգտագործման հնարավորություն:

Հատկապես կարևոր է թափոնների կառավարման խնդիրը: Քանի որ ոլորտն առնչվում է սննդամթերքի վերամշակման հետ, ակնհայտ է, որ այդ գործընթացի արդյունքում առաջանում են սննդային մնացորդներ, այդ թվում ոչնչացման ենթակա, որոնք պիտանի չեն հետագա վերամշակման: Նման իրավիճակներում առաջանում է այդ թափոնների արդյունավետ մշակման և վերացման խնդիրը:

Սա նշանակում է, որ պետք է հասկանալ, թե ինչպես.

1. նվազեցնել այդ թափոնները,
2. մնացորդային թափոններից ստանալ առավելագույն արդյունք, և
3. ինչպես չեզոքացնել ոչ պիտանի մասերը:

Սա կարևոր է ոչ միայն բնապահպանական տեսանկյունից, այլ նաև տնտեսական, քանի որ այն կարող է հնարավորություն ընձեռել ստանալ լրացուցիչ ֆինանսական օգուտներ և:

Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքով սահմանվում են ողջ շղթայի նկատմամբ համապատասխան պահանջներ և շեշտվում է, որ շղթայի մասնակիցները պետք է ապահովեն սննդամթերքի աղտոտումը կանխարգելող եղանակով վտանգավոր նյութերի ու թափոնների տեղափոխում:

Այս առումով ՀՀ-ում լուրջ բաց կա, քանի որ բացակայում է սննդի կամ օրգանական այլ թափոնների տեսակավորված հավաքման և մշակման համապատասխան ենթակառուցվածքը, ինչը նշանակում է, որ այդ թափոնները տեղափոխվում են, որպես սովորական կենցաղային աղբ՝ առանց որևէ մշակման: Հետևաբար, կարևոր է ոլորտի տնտեսավարողների շրջանում նախ և առաջ թափոնների տեսակավորման պրակտիկայի ներդրումն ու հետագա առաջխաղացումը, որը թույլ կտա հստակ տարանջատել թափոնները և հասկանալ հետագա վերամշակման հետ կապված անելիքները:

Նման պրակտիկայի օրինակ կարող է լինել որպես մնացորդ առաջացած մրգերից չրերի ստացումը և հետագա իրացումը, ինչը լրացուցիչ դրամական հոսքեր կստեղծի տնտեսավարողի համար: Այս և նմանատիպ այլ գործընթացները հատկապես կարևոր են ՓՄՁ-ների համար, որոնք ի տարբերություն խոշոր տնտեսավարողների պետք է ավելի մեծ ջանքեր գործադրեն տնտեսական կայունության ապահովման տեսանկյունից:

Կանաչ աճի առումով կարևոր է նաև փաթեթավորման համար կիրառվող նյութերի բնույթը, որպեսզի վերջինները հնարավորին քիչ բնապահպանական ազդեցություն ունենան: Այս առումով ևս որոշակի դրույթներ են առանձնացված Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքով: Մասնավորապես, սահմանվում է, որ սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի փաթեթավորումը պետք է ապահովի դրանց անվտանգությունն արտադրության և շրջանառության բոլոր փուլերում՝ համաձայն տեխնոլոգիական հրահանգի:

Սակայն, կոնկրետ նյութերի մասով որևէ պահանջ օրենքով սահմանված չէ, ինչը ևս որոշակի բացեր է ստեղծում՝ հետագա բնապահպանական ռիսկերի տեսքով:


4.3.5 Էլեկտրաէներգիայի արտադրություն

Էներգետիկ ոլորտը և հատկապես Էլեկտրաէներգիայի արտադրության բնագավառը ՀՀ ազգային անվտանգության ապահովման առանցքային բաղադրիչներից մեկն է՝ հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքը և տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացները:

Ոլորտում 2018թ. տվյալներով գործունեություն է ծավալել 249 տնտեսվարող սուբյեկտ, որոնցից 243-ը ՓՄՁ-ներ են եղել: Դարձյալ գերակշռել են գերփոքր և փոքր սուբյեկտները՝ 132 և 107, համապատասխանաբար⁷⁹:

Վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում արտադրվող Էլեկտրաէներգիայի ծավալը գտնվել է 7,000-8,000 մլն կՎտ/ժ միջակայքում: Մասնավորապես, 2020թ. արտադրվել է 7,759 մլն կՎտ/ժ Էլեկտրաէներգիա⁸⁰:

Գծապատկեր 38. ՀՀ Էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման դինամիկան



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում առավել մեծ կշիռ ունեն ջերմային Էլեկտրակայանները, որոնք 2020թ. արտադրել են ամբողջի 41%-ը: Այնուհետև գալիս է Մեծամորի ատոմակայանը՝ 35% մասնաբաժնով, որին էլ հաջորդում են հիդրոկայանները՝ 23% մասնաբաժնով: Այլընտրանքային աղբյուրներից, որոնց թվում են նաև արևային կայանները, 2020թ. գեներացվել է ընդամենը 58 մլն կՎտ/ժ Էլեկտրաէներգիա, ինչն ամբողջի 1%-ն է կազմում⁸¹:

⁷⁹ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե

⁸⁰ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրության կոմիտե

⁸¹ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 39. Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ինչպես տեսնում ենք, Էլեկտրաէներգիայի նման կառուցվածքը որոշակի հարցեր է առաջացնում կանաչ տնտեսության սկզբունքների կիրառման առումով: Նախ, պետք է նշել, որ այս ոլորտին է բաժին ընկնում ամբողջ երկրի մթնոլորտ արտանետումների 22%-ը՝ 65 հազար տոննա: Այս առումով ոլորտը զիջում է միայն շարժական աղբյուրներին⁸²:

Նման ազդեցության հիմնական պատճառներից մեկը գործող կայաններում հիմնական միջոցների մաշվածությունն է: Դրանց մեծ մասը բավական հին է և չի համապատասխանում արդի բնապահպանական չափանիշներին, ինչի հետևանքով զգալի բացասական ազդեցություն են թողնում շրջակա միջավայրի վրա: Մասնավորապես, արտադրական հզորությունների 30%-ից ավելին ունի 40 և ավելի տարվա կյանք, ջերմային էլեկտրակայանների հիմնական սարքավորումների աշխատանքի տևողությունը անցել է սահմանային 200 հազ. ժամը, խոշոր հիդրոէլեկտրակայաններում տեղակայված սարքավորումների 70%-ը շահագործվում է ավելի քան 40 տարի, իսկ 50%-ը՝ ավելի քան 50 տարի:⁸³

Բնապահպանական տեսանկյունից խնդրահարույց է նաև հիդրոկայանների, հատկապես փոքր կայանների գործունեությունը: Մասնավորապես, դրանց ցանցի ոչ համակարգված ընդլայնման հետևանքով վնաս է հասցվել երկրի ջրային պաշարներին, հանգեցնելով որոշ ջրի պակասուրդի խնդիրների: Ավելին, դա իր հերթին բացասաբար է անդրադառնում նաև ջրային ֆաունայի վրա՝ հանգեցնելով գետային ձկների քանակի նվազման: Խնդիրներ կան նաև մոնիթորինգի և դրա մեխանիզմների հետ կապված, թեպետ վերջին տարիներին այս առումով որոշակի առաջընթաց է արձանագրվել:

Կանաչ տնտեսության տեսանկյունից, Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտի բացերից է արևային էներգետիկայի փոքր մասնաբաժինը՝ հաշվի առնելով ՀՀ բարենպաստ

⁸² Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2020 թվականին և ցուցանիշների 2016-2020թթ շարժընթացը, ՀՀ վիճակագրական կոմիտե

⁸³ ՀՀ ՊՄԺԾԾ 2017-2019

բնակլիմայական պայմանները: Այդուհանդերձ, այս առումով զգալի դրական տեղաշարժեր կան վերջին տարիներին, ինչին մեծապես նպաստել է նաև վերը ներկայացված օրենսդրական արտոնությունը՝ արևային էներգիայից էլեկտրաէներգիա արտադրողների համար, որի արդյունքում մի շարք անհատներ սկսեցին տեղադրել ֆոտովոլտային պանելներ՝ սեփական կարիքների համար:

Դրան զուգահեռ, շահագործման հանձնվեցին նաև փոքր հզորության կայաններ: Բացի այդ, ընթացքի մեջ են արդյունաբերական մասշտաբի արևային կայանների կառուցման նախագծերը: Դրանցից առաջինը նախատեսվում է շահագործման հանձնել Գեղարքունիքի մարզում՝ 55 ՄՎտ հզորությամբ⁸⁴, իսկ մյուսը Արագածոտնի մարզում՝ 200 ՄՎտ հզորությամբ⁸⁵: Նախնական պայմանավորվածություններով, նախատեսվում է ևս մեկ 200 ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցում⁸⁶:

Ակնկալվում է, որ այս ծրագրերի բարեհաջող իրականացման արդյունքում զգալիորեն կնվազի ոլորտի ազդեցությունը կլիմայի վրա և կամրապնդվի նաև ՀՀ էներգետիկ անկախությունը: Սակայն, կան մտահոգություններ բնապահպանական տեսանկյունից՝ նախ և առաջ արևային վահանակների վերամշակման անհնարինության հետ կապված՝ դրանց շահագործման ավարտից հետո:

Եթե դիտարկենք էլեկտրաէներգետիկ համակարգի հզորությունը, ապա 2020թ. այն կազմել է 3,610.1 ՄՎտ, որի 51%-ը բաժին է ընկել ՋԷԿ-երին: Վերականգնվող կայանների մասնաբաժինը կազմել է 38%, որն ապահովվել է գերազանցապես ՀԷԿ-երի հաշվին⁸⁷:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ շահագործման է հանձնվել Երևանի ՋԷԿ-ի 250 ՄՎտ հզորությամբ նոր բլոկը և նախատեսվում է ևս 455 ՄՎտ հզորությամբ արևային կայանների շահագործում, 2027թ. համակարգի դրվածքային հզորությունը կհասնի 4,315.1 ՄՎտ-ի, որտեղ արդեն վերականգնվող էներգետիկայի մասնաբաժինը կլինի 42%, ընդ որում, 11% մասնաբաժին կունենան արևային ֆոտովոլտային կայանները:


⁸⁴ <https://www.ebrd.com/documents/comms-and-bis/psd-50022.pdf?blobnocache=true>

⁸⁵ <https://anif.am/2021/07/06/masdar-wins-tender-for-200-mw-solar-power-project-in-armenia/>

⁸⁶ <https://hetq.am/en/article/140321>

⁸⁷ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 40. ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի փաստացի և ակնկալվող հզորությունը



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, խորհրդատուի հաշվարկներ

4.3.6 Ծինարարություն


Ծինարարությունն ավանդաբար եղել է ՀՀ տնտեսության շարժիչ ուժերից մեկը: Մասնավորապես 2000-ականներին հենց այս ոլորտի առաջանցիկ աճն էր մեծ ավանդ ունենում երկնիչ տնտեսական աճի ցուցանիշներում: Ինչպես երևում է ստորև բերված գծապատկերում, 2000թ. կազմելով 100 մլրդ դրամ, արդեն 2008թ. ոլորտի ծավալը հասել էր 900 մլրդ դրամի: Սակայն, 2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո շինարարության ծավալը ՀՀ-ում զգալիորեն կրճատվեց:

Վերևում արդեն ներկայացվել է, որ 2021թ. կտրվածքով շինարարության ծավալը կազմել է 457 մլրդ դրամ, որը նույն ժամանակահատվածի ՀՆԱ-ի մոտ 6.5%-ն է: 2020թ. այդ ցուցանիշը կազմել է ավելի քան 430 մլրդ դրամ: Ընդ որում, այդ ծավալի գրեթե 31%-ը բաժին է ընկել էներգետիկայի ոլորտին, իսկ 16.3%-ը տրանսպորտի ոլորտին: Անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտը, որն իր մեջ ներառում է բնակարանաշինությունը, ունեցել է 24.4% մասնաբաժին:

Խոսելով բնակարանաշինության ծավալների մասին, նշենք, որ 2020թ. գործարկվել են 304 հազար քմ մակերեսով բնակելի շենքեր, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է մոտ 6%-ով: Ընդ որում, վերջին տարիներին անշեղորեն աճել է նոր բնակարանների թիվը: Եթե 2016թ. կառուցվել է 1,297 բնակարան, ապա 2020թ. այդ ցուցանիշը կազմել է 2,329:⁸⁸

⁸⁸ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 41. Շինարարության ծավալի դինամիկան ԶԶ-ում



Աղբյուր՝ ԶԶ ԿԲ

2018թ. դրությամբ ոլորտում գործունեություն է ծավալել 1,517 տնտեսվարող, որոնցից 1,508-ը եղել են ՓՄՁ-ների հետևյալ բաշխումով՝ 1,120 գերփոքր, 313 փոքր, 75 միջին: Իսկ 2021թ. հոկտեմբերի դրությամբ ոլորտում ներգրավված աշխատողների քանակը կազմել է 26,234 մարդ կամ ամբողջի մոտ 4%-ը⁸⁹:

Վերջին տարիներին ոլորտում կրկին նկատվող աշխուժության հիմնական պատճառը եկամտային հարկի մասին ԶԶ օրենքի 8.2 հոդվածն է, որով հնարավորություն է ընձեռնվում վճարված եկամտային հարկի գումարի չափով ստանալ հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսագումարները⁹⁰:

Որպեսզի լավագույնս ներկայացվի այդ դրույթի ունեցած ազդեցության ծավալը, պետք է նշել, որ եթե 2015-2017թթ. ծրագրի նոր շահառուներ են եղել տարեկան մոտ 800 մարդ, ապա 2018-2019թթ. շահառուների տարեկան քանակն աճել է և կազմել մոտ 2000-ով: 2020թ. նոր շահառուների թիվը եղել է 5,200:⁹¹

Դրան զուգահեռ կտրուկ աճել են պետական բյուջեից քաղաքացիներին վերադարձվող եկամտային հարկի գումարները: Եթե 2016-2017թթ. պետական բյուջեից ծրագրին հատկացվող ֆինանսական միջոցների տարեկան աճը կազմել է մոտ 1 մլրդ դրամ, ապա 2019թ.՝ 3.3 մլրդ, 2020թ.՝ 5,4 մլրդ դրամ, միայն 2020թ. հատկացումների մասով հանրագումարով հասնելով 13.3 մլրդ դրամի: 2021թ. առաջին կիսամյակի դրությամբ ծրագրի շահառուների քանակը գերազանցել է 17 000-ը: Տարվա կտրվածքով վերադարձվել է ավելի քան 22 մլրդ դրամ⁹²:

⁸⁹ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ԶԶ-ում 2019: ԶԶ վիճակագրական կոմիտե

⁹⁰ Եկամտային հարկի մասին ԶԶ օրենք

⁹¹ <https://hetq.am/hy/article/134466> <https://hetq.am/hy/article/134466>


⁹² ԶԶ ՊԵԿ

Նման ծավալները հաշվի առնելով նախատեսվում է այդ դրույթն աստիճանաբար չեղարկել Երևանի համար, ինչի արդյունքում 2025թ. այն հասանելի կլինի միայն մարզերում կառուցվող անշարժ գույքի համար:

Խոսելով շինարարության ոլորտում կանաչ սկզբունքների ներդրման մասին, պետք է նշել, որ այն զգալի բնապահպանական ազդեցություն ունի: Մասնավորապես, ամբողջ աշխարհում այն բնական ռեսուրսների ամենամեծ սպառողներից մեկն է և բացի այդ գեներացնում է կոշտ թափոնների 40%-ը:

Ոլորտի բնապահպանական ազդեցությունը ՀՀ-ում՝ գեներացվող թափոնների ծավալի դինամիկայի տեսքով ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 42. Շինարարության ոլորտի թափոնների դինամիկան



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ինչպես երևում է գծապատկերից, 2010-2020թթ. այդ ցուցանիշը գտնվել է 10-20 հազար տոննայի միջակայքում՝ բացառությամբ 2016-2017թթ.: Մասնավորապես, 2020թ. գեներացվել է 17.2 հազար տոննա թափոն կամ 5.7 կգ մեկ շնչի հաշվով: Հարկ է ընդգծել, որ մինչև 2020թ. թափոնների կառուցվածքում գերակշռել են ոչ վտանգավոր թափոնները, իսկ մնացած փոքր մասը կազմել են 4-րդ դասի թափոնները:

Կանաչ տնտեսության տեսանկյունից կարևոր է այդ թափոնների կառավարման խնդիրը: Երևանում, որտեղ կենտրոնացած է շինարարության զգալի մասը, միայն մեկ շինարարական աղբավայր է նախատեսված՝ 10 հա մակերեսով⁹³: Սակայն, լինում են դեպքեր, երբ շինարարություն իրականացնողները թափոնները տեղափոխում են չնախատեսված այլ վայրեր՝ դրանով իսկ մեկ ստեղծելով բնապահպանական ռիսկեր:

Խնդիրներ կան հենց անմիջապես թափոնների տեղափոխման գործընթացի կազմակերպման հետ: Չնայած տեղափոխող բեռնատարների համար նախատեսված նորմերին, հաճախ դրանք

⁹³ Աջափնյակի շինարարական աղբավայր

չեն պահպանվում, ինչի հետևանքով տեղափոխվող թափոնների մի մասը հայտնվում է մայրաքաղաքի փողոցների երթևեկելի գոտիներում:

Մարզերում խնդիրն ավելի հրատապ է, քանի որ թերևս շինարարական աղբավայրեր այնտեղ չկան, ինչը լուրջ մտահոգություններ է առաջացնում բնապահպանական առումով:

Այս խնդիրն տեղ է հատկացված նաև Աղբահանության համակարգի ռազմավարության մեջ, որտեղ սահմանվում է շինարարական աղբի հավաքման և տեղափոխման նորմերի և ընթացակարգերի մշակման, ինչպես նաև հավաքման, տեղափոխման և օգտահանման ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտությունը⁹⁴:

Կարևոր է նաև շինարարության մեջ կիրառվող նյութերի համապատասխանությունը էներգաարդյունավետության չափանիշներին: Այս առումով հատուկ շեշտադրում պետք է արվի այնպիսի նյութերի և կառուցապատման մեթոդների վրա, որոնք թույլ են տալիս ապահովել առավել ջերմակայունություն և սեյսմակայունություն: Օրինակ, աշխարհում արդեն մեծ տարածում են ստանում մոդուլար շինությունները, որոնք մի շարք առավելություններ ունեն ի դեմս շինարարության ժամկետների կրճատման, աղմուկի, փոշու և ամենակարևորը թափոնների նվազման տեսանկյունից: Մասնավորապես, մոդուլային շինությունների մասերի գրեթե 80%-ը պատրաստվում է գործարանի տարածքում, որն էլ հենց բացատրում է բնապահպանական ազդեցության ցածր մակարդակը:

Նաև լավ օրինակ է BIM (building information modeling) տեխնոլոգիան: Վերջինս 3D-մոդելավորման մեթոդ է, որը թույլ է տալիս ճշգրիտ հաշվարկել պահանջվող մատերիալների մեծությունը՝ հիմնվելով շինարարության վայրի տվյալների վրա: Նման մոդելային մոտեցման շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում խուսափել արտադրական խոտաններից, կրճատել ծախսերը, զգալիորեն բարձրացնել պլանավորման արդյունավետությունը, ինչպես նաև անմիջականորեն շինարարության արագությունը:

Այս համատեքստում նաև պետք է նշել, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից 2019թ. մեկնարկել է մոդուլային դպրոցների կառուցման նախագիծը, որով նախատեսվում է ՀՀ մարզերում կառուցել 22 նմանատիպ դպրոց: Իսկ եթե խոսենք մասնավոր հատվածի մասին, ապա այն կիրառվել է մի քանի տնտեսվարողների կողմից՝ հատկապես պահեստային տարածքների կառուցման համար: **Եթե սեյսմակայունության չափանիշները հիմնականում պահպանվում են, ապա ջերմակայունության տեսանկյունից որոշակի բացեր այնուամենայնիվ կան: Մասնավորապես, շատ դեպքերում պատերի երեսպատումն իրականացվում է այնպիսի նյութերով, որոնք այդքան էլ էներգաարդյունավետ չեն և հետագայում խնդիրներ են ստեղծելու այդ տեսանկյունից:**

Որպես դրական օրինակ կարող ենք առանձնացնել Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացված և իրականացվող էներգաարդյունավետության ծրագրերը, որոնց շրջանակներում համապատասխան աշխատանքներ են իրականացվել ինչպես բնակելի այնպես էլ հանրային շենքերում: Մասնավորապես ծրագրերից մեկով մայրաքաղաքի Ավան

⁹⁴ ՀՀ Աղբահանության համակարգի ռազմավարություն

վարչական շրջանի 6 շենքերում իրականացված միջոցառումների արդյունքում ապահովվել է տարեկան շուրջ 60% էներգախնայողություն:⁹⁵

Բացի այդ, ընթացքի մեջ է մանկապարտեզների սեյսմակայունության և էներգաարդյունավետության բարելավման ծրագիրը, որով նախատեսվում է համապատասխան միջոցառումներ իրականացնել շուրջ 3 տասնյակ մանկապարտեզում:

Համաձայն «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության 2022-2030 թվականների ազգային ծրագրի» նախատեսվում է նմանատիպ աշխատանքներ իրականացնել տարեկան 40 դպրոցում: Արդյունքում, ակնկալվում է տարեկան խնայել 5.2 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա:⁹⁶

4.3.7 Տրանսպորտ և սպասարկում

Այս ոլորտը 2021թ. առաջին 3 եռամսյակների կտրվածքով գեներացրել է շուրջ 188 մլրդ դրամ արդյունք, մինչդեռ 2020թ. ընթացքում այդ ցուցանիշը կազմել էր 135 մլրդ դրամ: Նման փոփոխությունն առաջին հերթին պայմանավորված է COVID-19 համավարակի հետ կապված սահմանափակումներով, որոնք զգալիորեն կրճատել էին տրանսպորտային հոսքերը 2020թ.:

Ինչ վերաբերվում է հիմնական ցուցանիշներին, 2020թ. ՀՀ-ում ընդհանուր ուղևորաշրջանառությանը կազմել է 891 մլն ուղևոր-կմ, ինչը նախորդ տարվա համեմատ քիչ է գրեթե 70%-ով: 2021թ. նախնական տվյալներով, ուղևորաշրջանառությունը կազմել է 1,620 մլն ուղևոր-կմ: Փոխադրումների գերակշռող մասն իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով՝ 685 մլն ուղևոր-կմ: 2021թ. ընդհանուր օգտագործման տրանսպորտով տեղափոխվել է 107.7 մլն ուղևոր, համեմատության համար 2019թ. կազմել է 194.6 մլն ուղևոր

Իսկ ինչ վերաբերում է բեռնաշրջանառության ծավալներին, ապա 2020թ. դրանք կազմել են 4,704 մլն տոննա-կմ: Այս դեպքում անկումը 2019թ. համեմատ ավելի փոքր է՝ 1.5%: 2021թ. նախնական տվյալներով բեռնաշրջանառությունը կազմել է 5,087 մլն տոննա-կմ: Փոխադրումների հիմնական մասը՝ 2,963 մլն տոննա-կմ, իրականացվել է մայրուղային խողովակաշարով⁹⁷: Բեռնափոխադրումների ծավալը 2021թ. կազմել է 17,2 մլն տոննա: Երկաթուղու փոխադրումները կազմել են 3,1 մլն տոննա, որը համարվում է ամենականաչ տրանսպորտը:

2021թ. հոկտեմբերի դրությամբ ոլորտում զբաղվածների թիվը կազմել է 20,605 կամ բոլոր զբաղվածների 3.1%-ը⁹⁸: Եթե դիտարկենք ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներին, ապա 2018թ. տվյալներով այստեղ գործունեություն է ծավալել 1,739 սուբյեկտ, որոնցից 1,728-

⁹⁵ <https://www.yerevan.am/am/development-and-investment-programs/>

<https://www.yerevan.am/am/development-and-investment-programs/>

⁹⁶ Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության և 2022-2030 թվականների ազգային ծրագրի

⁹⁷ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե


⁹⁸ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

ը եղել են ՓՄՁ-ներ: Դարձյալ գերակշիռ մասը կազմել են գերփոքր սուբյեկտները՝ 1,489: Եվս 205-ը եղել են փոքր, իսկ 34-ը՝ միջին⁹⁹:

Առհասարակ, այս ոլորտը շրջակա միջավայրի վրա առավել մեծ ազդեցություն ունեցողներից է՝ տրանսպորտային միջոցներից արտագատվող նյութերի հետևանքով: Այս խնդիրն առավել հրատապ է ՀՀ համար, քանի որ երկրում շահագործվող մեքենաների մեծ մասը բավական հին է, ինչը նշանակում է, որ դրանք չեն համապատասխանում ժամանակակից բնապահպանական չափանիշներին:

Ընդ որում, վերջին տարիներին երկրում կտրուկ ավելացել է մարդատար մեքենաների քանակը: Մասնավորապես, եթե 2015թ. ներմուծվել է ընդամենը 11.5 հազար մարդատար մեքենա, ապա 2019թ. այդ ցուցանիշն արդեն կազմել է 208.5 հազար: Նման աճը պայմանավորված է եղել 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած մաքսագերծման ԵԱՏՄ միասնական համակարգով, որը բերեց մարդատար մեքենաների ներմուծման մաքսատուրքերի բարձրացման, ինչից խուսափելու համար մի շարք ֆիզիկական անձինք շտապեցին արտերկրից ներմուծել մեքենաներ: Եթե դիտարկենք ամբողջության մեջ, ապա 2015-2020թթ. ՀՀ է ներմուծվել ավելի քան 363 հազար մարդատար ավտոմեքենա, ինչն իհարկե զգալի թիվ է կազմում երկրի համար¹⁰⁰:

Գծապատկեր 43. Մարդատար ավտոմեքենաների ներմուծման դինամիկան ՀՀ-ում



Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

Այս իրավիճակը որոշակիորեն մեղմվում է ՀՀ-ում շահագործվող մեքենաների օգտագործած վառելիքի շնորհիվ: Մասնավորապես անձնական օգտագործման մեքենաների մեծ մասը որպես հիմնական վառելիք օգտագործում է Էկոլոգիապես պակաս վնասակար սեղմված կամ հեղուկ գազ՝ բենզինի և դիզելի փոխարեն: Սեղմված գազով են աշխատում նաև հասարակական տրանսպորտում ներգրավված փոխադրամիջոցները:

Այս առումով, որոշակի դրական տեղաշարժեր կան մայրաքաղաք Երևանի հասարակական տրանսպորտի ցանցում: Մասնավորապես, վերջերս ներմուծված ավտոբուսները կրկին

⁹⁹ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում 2019: ՀՀ վիճակագրական կոմիտե

¹⁰⁰ ՀՀ ՊԵԿ

աշխատում են հեղուկ գազով և համապատասխանում են Եվրո-5 ստանդարտին: Մոտ ապագայում ևս նախատեսվում են ավտոբուսների նոր խմբաքանակներ, որոնք կրկին պետք է ունենան բնապահպանական համապատասխան չափանիշներ:

Սակայն Էլեկտրատրանսպորտի առումով դեռևս մի շարք բացեր կան: Նախ, պետք է նշել, որ ՀՀ-ում Էլեկտրատրանսպորտային ցանց գոյություն ունի միայն Երևանում, որը ներառում է տրոլեյբուսային պարկն ու մետրոպոլիտենը: Վերջին տարիներին առաջինի մասով գրեթե փոփոխություն չի կատարվել և պարկը համալրված է գերազանցապես հին տրոլեյբուսներով: Որոշակի փոփոխություններ իրականացվել են մետրոպոլիտենում՝ շարժակազմերի թարմացման և ինժեներական հզորությունների մասով: Սակայն, գլխավոր հարցը՝ ցանցի ընդլայնումը դեռևս մնում է չլուծված: Ներկայումս մշակվել է Աջափնյակ կայարանի նախագիծը և մոտ ապագայում որոշակի հստակություն է ակնկալվում կապված շինարարության հետ:

Դեռևս որոշակի բացեր կան Էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների տարածվածության հետ կապված: Միայն վերջին 1-2 տարիներին է սկսել նկատվել որոշակի աշխուժացում, ինչին մեծապես նպաստել է Եվրասիական տնտեսական միության կողմից սահմանված արտոնությունը, որով Էլեկտրական շարժիչով մեքենաների ներմուծումն ու օտարումը ազատվում է ԱԱՀ-ից: Արդյունքում, արդեն 2021թ. օգոստոսին ներմուծված մեքենաների 20%-ը կազմել են Էլեկտրական շարժիչով մեքենաները:

Բացի այդ, աստիճանաբար ավելանում են Էլեկտրական շարժիչով մեքենաների լիցքավորման կայանները: Մասնավորապես հաջողությամբ իրականացվեց plug.am ծրագիրը, որի շրջանակներում ներմուծվեց և տեղադրվեց 25 լիցքավորման կայան ամբողջ ՀՀ տարածքում:

Տրանսպորտի ոլորտի հետ կապված մեկ այլ խնդիր, որն առնչվում է կանաչ տնտեսության սկզբունքներին, հին մեքենաների ուտիլիզացիան է: Ինչպես արդեն նշվեց, ՀՀ-ում շահագործվող մեքենաների մեծ մասի տարիքը գերազանցում է 10 տարին և պարբերաբար շատ մեքենաներ պարզապես շարքից դուրս են գալիս և վերածվում են մետաղի ջարդոնի, ինչի հետևանքով ամբողջ երկրի տարածքում կարելի է հանդիպել մի շարք լքված մետաղակույտեր: Այսինքն, առաջանում է շարքից դուրս եկած մեքենաների վերջնական ուտիլիզացիայի խնդիր, որով մասնագիտորեն զբաղվող կազմակերպություններ առանձնապես ՀՀ-ում չկան:

4.3.8 Անտառային տնտեսություն

Հայաստանի Հանրապետության անտառները ստեղծում են մի շարք կարևոր տնտեսական, բնապահպանական և սոցիալական օգուտներ, ներառյալ ջրային հաշվեկշռի պահպանումը, հողի էրոզիայի կանխումը, կենսաբազմազանության պահպանումը, աղետների ռիսկի նվազեցումը, ռեկրեացիոն ծառայությունները, ի թիվս այլոց: Անտառը նաև հանդիսանում է Էներգիայի աղբյուր հատկապես սահմանամերձ համայնքների բնակչության և սոցիալապես խոցելի խմբերի համար:

Հայաստանի անտառածածկը կազմում է երկրի մակերեսի ընդամենը 11 տոկոսից մի փոքր ավել,¹⁰¹ (331,331.0 հա) իսկ անտառների մեծ մասը կենտրոնացած է Հանրապետության

¹⁰¹ <https://data.worldbank.org/indicator/AG.LND.FRST.ZS?locations=AM>

հյուսիս-արևելքում, որտեղ առկա են զգալի մարդածին ճնշումներ: Անտառների 70 տոկոսը գտնվում է դեգրադացված վիճակում, պայմանավորված ապօրինի ծառահատումներով, անասունների արածեցումով, հիվանդություններով և հրդեհներով:

2020թ. իրականացվել է 0.8 հա մակերեսով անտառվերականգնում, ինչը զգալիորեն զիջում է 2019թ. ցուցանիշին՝ 126.3 հա: Առհասարակ, 2019թ.-ին իրականացվել է վերջին տարիների ամենամեծ ծավալով անտառվերականգնումը, ընդ որում ամբողջը նոր անտառի տնկում: Այս առումով ակտիվություն են դրսևորում նաև մասնավոր ընկերությունները (Էյ-Թի-Թի, Մայ Ֆորեսթ Արմենիա), որոնք պարբերաբար կազմակերպում են անտառապատման աշխատանքներ:

Անդրադառնալով ոլորտի տնտեսական գործունեությանը, պետք է նշել, որ այն 2021թ. գեներացրել է 1,537 մլն դրամի արդյունք, ինչը նախորդ տարվա համեմատ ցածր է 25.9%-ով:¹⁰²

Հաշվի առնելով նշված վտանգները և դրանց հետագա հնարավոր ահազնացումը կլիմայի փոփոխության արդյունքում, Հայաստանի Հանրապետությունը Փարիզյան համաձայնագրի ներքո հանձն է առել մինչև 2050թ. անտառածածկը հասցնել 20.1 տոկոսի,¹⁰³ ինչը կպահանջի մոտ 265 հազար հեկտար լրացուցիչ անտառածածկի ստեղծում: Բացի բնապահպանական նշանակությունից, նման մեծածավալ ծրագրի իրականացումը կստեղծի հազարավոր աշխատատեղեր, այդ թվում առավել խոցելի գյուղական համայնքներում: Ծրագրի իրականացումը նաև կպահանջի մեծ թվով մասնագետների ուսուցում և վերապատրաստում, նոր և ժամանակակից տնկարանային տնտեսությունների ստեղծում և գոյություն ունեցողների վերազինում, ինչը ևս կենթադրի աշխատատեղերի ստեղծում և մարդկային կապիտալի զարգացում:

Անտառածածկի ընդլայնման տեսակետից նաև մեծ նշանակություն կարող են ունենալ քամապաշտպան, ճանապարհների եզրերով տնկվող և ջրային մարմինների ափամերձ անտառաշերտերը: Սա, մասնավորապես, կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության և ջրային ռեսուրսների համար, քանի որ կարող է նպաստել բերքատվության բարձրացմանը, ջրի որակական և քանակական ցուցանիշների բարելավմանը:¹⁰⁴ Գնահատականների եզրերով տնկվող անտառաշերտերը նաև կարող են կրճատել սպասարկման հետ կապված ծախսերը: Մինևույն ժամանակ պտղատու տեսակների օգտագործման պարագայում, նման միջոցառումների իրականացումը կարող է նաև ստեղծել լրացուցիչ եկամտի աղբյուր տեղաբնակների համար:

Ներկայում մշակվող անտառի նոր տասնամյա ազգային ծրագիրը հիմք կդառնա անտառածածկի ընդլայնման ծրագրի մանրամասն պլանավորման և իրականացման համար,

¹⁰² ՀՀ վիճակագրական կոմիտե

¹⁰³ Intended Nationally Determined Contributions of the Republic of Armenia under the UN Framework Convention on Climate Change, <https://www4.unfccc.int/sites/ndcstaging/PublishedDocuments/Armenia%20First/INDC-Armenia.pdf>

¹⁰⁴ Ministry of Nature Protection of Armenia, 2015, Technology Needs Assessment Report: Adaptation Technology Prioritization, <https://tech-action.unepdtu.org/wp-content/uploads/sites/2/2016/09/tna-report-of-armenia-adaptation.pdf>

որտեղ տեղ կգտնեն բոլոր առկա հնարավորությունները, բացերը և վերջինների վերացման համար անհրաժեշտ քայլերը:

Յարկ Է նշել, որ անգամ անտառի ազգային ծրագրի բացակայության պարագայում, վերջին տարիներին նախաձեռնվել են որոշ կարևոր քայլեր անտառածածկի ընդլայնման ուղղությամբ: Մասնավորապես շրջակա միջավայրի նախարարության խնդրանքով Համաշխարհային Բանկի կողմից իրականացվում է անտառային լանդշաֆտների վերականգնման հնարավորությունների ուսումնասիրություն, որը ևս հիմք կծառայի հետագա աշխատանքների համար:¹⁰⁵

Շրջակա միջավայրի նախարարության և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվում է Կանաչ կլիմայական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի անտառների դիմակայություն, հարմարվողականության և գյուղական կանաչ աճի ուժեղացում մեղմման միջոցով» ծրագիրը, որի շրջանակներում ութ տարիների ընթացքում նախատեսվում է անտառների կոնցեսիայի և վառելիքայտի, շինափայտի և ոչ բնափայտային արդյունքի արտադրության բարելավված կառավարման միջոցով բարձրացնել բնական ռեսուրսների կառավարման մեջ համայնքների դերը: Որպես Հայաստանի համար համեմատաբար նոր մոտեցում, այն կարող է մոդել դառնալ ողջ երկրի համար: Նախատեսվում է բարձրացնել էներգաարդյունավետ սարքերի օգտագործման մակարդակը մասնավոր հատվածում և գյուղական տնային տնտեսություններում՝ այդպիսով նվազեցնելով ճնշումը բնական Էկոհամակարգերի վրա:¹⁰⁶

Փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցությունը անտառային տնտեսության վարմանը Հայաստանում բավական սահմանափակ է, հատկապես 2019թ. հետո, երբ որոշում կայացվեց օրինական անտառհատումների ողջ ծավալն իրականացնել «Հայաստան» ՊՈԱԿ-ի ուժերով՝ ապօրինի անտառհատումների դեմ պայքարի շրջանակներում: ՓՄՁ-ներն ունեն սահմանափակ մասնակցություն շինափայտի վերամշակմանը, քանի որ վերջինի օրինական ծավալները Հայաստանում խիստ սահմանափակ են, կազմելով տարեկան մոտ 3,000 մ³:

Մինևույն ժամանակ, ոլորտում կա մեծ ներուժ ՓՄՁ-ների զարգացման համար, մասնավորապես անտառվերականգնման աշխատանքների ծավալի մեծացման, որակյալ տնկիների արտադրության, զբոսաշրջության զարգացման, ոչ փայտանյութային ապրանքների օգտագործման և այլ ուղղություններով, որոնց հետ կապված լավագույն փորձն ունեն Եվրոպայի և Հյուսային Ամերիկայի զարգացած երկրները:

4.3.9 Առևտուր


Իր ծավալով առևտուրը խիստ առանցքային տեղ է զբաղեցնում ՀՀ տնտեսության կառուցվածքում: Մասնավորապես, եթե դիտարկենք առանց ԱԱՀ-ի ու անուղղակի հարկերի,

¹⁰⁵ World Bank, 2021, Preserving Forests is Key to Armenia’s Climate Goals and Economic Sustainability, <https://www.worldbank.org/en/news/feature/2021/06/07/preserving-forests-is-key-to-armenia-s-climate-goals-and-economic-sustainability>

¹⁰⁶ FAO, 2020, Approved funding proposal, Forest resilience of Armenia, enhancing adaptation and rural green growth via mitigation, <https://www.greenclimate.fund/sites/default/files/document/sap014-fao-armenia.pdf>

2020թ. առևտրի շրջանառությունը (մեծածախ, մանրածախ, ավտոմեքենաներ) կազմել է 2,919 մլրդ դրամ, ինչը տարվա ՉՆԱ ավելի քան 47%-ն է¹⁰⁷:

Գծապատկեր 44. Առևտրի շրջանառության դինամիկան ԶԶ-ում



Աղբյուր՝ ԶԶ վիճակագրական կոմիտե

Չենց այս ոլորտում են ներգրավված ամենամեծ թվով տնտեսվարողները ԶԶ-ում: Մասնավորապես, 2018թ. տվյալներով ոլորտում գործունեություն է ծավալել 44,093 սուբյեկտ կամ ամբողջի 64%-ը: ՓՄՁ-ների թիվը կազմել է 44,071, որից 42,940-ը եղել են գերփոքր, 998-ը փոքր, իսկ 133-ը միջին:¹⁰⁸

Ոլորտում այդ տարի գեներացվել է 585 մլրդ դրամի ավելացված արժեք, որի 76%-ը կամ 444 մլրդ դրամը ստեղծվել է ՓՄՁ-ների կողմից: Հարկ է ընդգծել, որ 2021թ. հոկտեմբերի տվյալներով ոլորտում ներգրավված է եղել 115,090 աշխատող, ինչը կազմում է բոլոր զբաղվածների 17%-ը:¹⁰⁹

Կանաչ աճի սկզբունքներն այս ոլորտի կտրվածքով ամռնչվում են առևտրի կազմակերպման գործընթացին: Այս համատեքստում կարևոր է մասնավորապես ոլորտում կիրառվող փաթեթավորման նյութերի բնապահպանական ազդեցությունը: Գրեթե բոլոր առևտրի կետերում, հատկապես մթերային, մշտապես անվճար հասանելի են եղել տարբեր հաստության պոլիէթիլենային պարկեր, որոնք, ինչպես հայտնի է մեծ վնաս են հասցնում շրջակա միջավայրին՝ քայքայման երկար ցիկլի պատճառով:

Այս բացի լրացման առումով, որոշակի քայլեր են ձեռնարկվում պատկան մարմինների կողմից: Մասնավորապես, 2022թ. հունվարի մեկից արգելվել է մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի վաճառքն ու իրացումը՝ որոշ բացառություններով: Սակայն օրենքի

¹⁰⁷ ԶԶ վիճակագրական տարեգրքեր, ԶԶ վիճակագրական կոմիտե
¹⁰⁸ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ԶԶ-ում 2019: ԶԶ վիճակագրական կոմիտե
¹⁰⁹ ԶԶ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ԶԶ վիճակագրական կոմիտե

ուժի մեջ մտնելուց հետո խոշոր սուպերմարկետների ցանցերում սկսեցին առաջարկվել ավելի հաստ պարկեր՝ ավելի բարձր գնով:

Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ սա կազդի սպառողների վարքագծի վրա՝ դրդելով վերջիններին կիրառել բազմակի օգտագործման պարկեր՝ խնայելով դրամական միջոցներ և չավելացնելով ավել բեռ բնության համար:

Մյուս խնդիրն առնչվում է թափոնների կառավարմանը, ինչը հատկապես առանցքային նշանակություն ունի սննդամթերքի առևտրով զբաղվող տնտեսվարողների մոտ, քանի որ նրանց մոտ առաջանում են ինչպես սննդային, այնպես էլ պլաստիկ թափոններ: Սննդային թափոններն առաջանում արագ փչացող սննդամթերքի պահման ժամկետների լրացման կամ առհասարակ վնասման դեպքում: Եթե դիտարկենք փոքր չափի տնտեսվարողներին, որոնք կազմում են ոլորտի զգալի մասը, ապա նրանք այդ հարցը լուծում են մոտակա աղբամանի միջոցով: Նույն կերպ են վարվում նաև պլաստիկ և այլ թափոնների հետ՝ պարկեր, արկղեր:

Վերը նկարագրվածը խոսում է նրա մասին, որ առևտրի ոլորտում թափոնների կառավարման տեսանկյունից ևս կան բացեր՝ շատ քիչ տնտեսվարողներ են իրականացնում թափոնների տեսակավորում: Խնդրի լուծումը կարող է լինել տեսակավորման պրակտիկայի ընդլայնումը, ինչը կարևոր է ոչ միայն առևտրով զբաղվող կազմակերպությունների, այլ առհասարակ բոլոր ոլորտների համար:

Ոլորտում ևս կան Էներգաարդյունավետության հետ կապված հարցեր: Դա հատկապես առնչվում է առևտրի կետերի, ինչպես նաև պահեստային տնտեսության կողմից Էներգիայի սպառմանը: Հատկապես սառնարանային պահեստներում կա Էներգաարդյունավետ սարքավորումների ներդրման պահանջ, քանի որ նրանց բնականոն գործունեությունը պահանջում է զգալի ծավալի Էներգիայի սպառում:


4.3.10 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում տնտեսության ամենաարագ աճող ոլորտներից մեկն է: Միայն 2020թ. տվյալներով ոլորտի ընկերություններն արձանագրել են մոտ 300 մլն դոլարի հասույթ: Ավելին, վերջին տարիներին, այդ ցուցանիշի աճը մշտապես երկնիշ է եղել:¹¹⁰

Հատկապես վերջին տարիներին կտրուկ մեծացել է հայկական կապիտալով ՏՏ ընկերությունների կողմից ներգրավվող ներդրումների ծավալը: Մասնավորապես վերջին 5-6 տարիների համար այդ ցուցանիշը կազմում է գրեթե 2 մլրդ դոլար, որից մոտ 1.1 մլրդ դոլարը ներգրավվել միայն 2021թ.: Արդյունքում ՀՀ-ում գործող և ՀՀ քաղաքացիների կողմից հիմնադրված երկու ընկերություններ ունեն 1 մլրդ դոլարը գերազանցող շուկայական արժեք:

¹¹⁰ ՀՀ վիճակագրական տարեգրքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 45. ՀՀ ՏՏ ոլորտի ընկերությունների հասույթի դինամիկան



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ոլորտում ներգրավված աշխատողների թիվը տարբեր աղբյուրների համաձայն կազմում է մոտ 20 հազար:¹¹¹¹¹²

Կանաչ աճի տեսանկյունից կարևոր է, թե ՏՏ ոլորտը ինչ լուծումներ է առաջարկում դրա սկզբունքների առաջխաղացման և ներդրման համար: Նախ և առաջ, ՏՏ ոլորտի դերը առանցքային է ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման, արտադրողականության բարձրացման և ծախսերի կրճատման տեսանկյունից: Ընդ որում, ՏՏ-ն այս դերը կարող է խաղալ ինչպես ընդհանուր տնտեսական արդյունավետության բարձրացման, այնպես էլ շրջակա միջավայրի բարելավման առումով:

Մասնավորապես, ՏՏ ոլորտը, լինելով նորարարությունների առաջամարտիկ, մշակված ծրագրերի, հավելվածների և տեխնոլոգիաների միջոցով հնարավորություն է ընձեռում զգալի բարելավումներ արձանագրել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական ռեսուրսների օգտագործման տեսանկյունից: Սա հատկապես կարևոր է ՓՄՁ-ների համար, ովքեր մշտապես փնտրում են ծախսերի օպտիմալացման տարբերակներ՝ առավել մրցակցային լինելու համար:

Կան հաջողված հայկական ընկերություններ, որոնք զբաղվում են հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման արդյունավետության բարձրացման ծրագրերով և հավելվածներով: Կան ընկերություններ, որոնք մշակում են հավելվածներ և ծրագրային ապահովում ֆինանսական ոլորտի համար:

Վերջին շրջանում նկատվում է տվյալների վերլուծությամբ, արհեստական բանականությամբ և մեքենայական ուսուցմամբ զբաղվող ընկերությունների թվի մեծացում, ինչը չի կարող դրական չանդրադառնալ կանաչ աճի վրա, քանի որ տվյալների վերլուծությունը թույլ է տալիս

¹¹¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

¹¹² ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

կատարել որակական և քանակական գնահատումներ՝ հիմք ստեղծելով գործընթացների օպտիմալացման համար:

Սակայն, ոլորտի դինամիկ աճը առաջ է քաշում հենց այդ ընկերություններում կանաչ աճի սկզբունքների ներդրման անհրաժեշտությունը տեսանկյունից: Նախ և առաջ, SS ընկերությունների գործունեությունը առնչվում է զգալի ծավալով էներգիայի սպառման հետ: Դա կապված է ինչպես մարդաշատ գրասենյակների առօրյա էներգիայի սպառմամբ, այնպես էլ տվյալների մշակման համար կիրառվող սերվերների աշխատանքով: Սա առաջ է քաշում էներգաարդյունավետ լուծումների ներդրման պահանջ, ինչն առաջին հերթին բխում է հենց այդ ընկերությունների տնտեսական շահերից և սոցիալական պատասխանատվությունից:

Բայց պետք է նշել, որ SS ոլորտը բավական լավ դիրքեր էլ ունի ներառականության՝ հատկապես գենդերային հավասարության տեսանկյունից: Գնալով շատ անում է ոլորտում ներգրավված իգական սեռի ներկայացուցիչների թիվը, ինչը դրական է անդրադառնում ընկերությունների գենդերային հաշվեկշռի վրա՝ ինչը ևս կանաչ աճի բնութագրիչներից մեկն է:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ հայկական SS ընկերությունների հիմնական մասը զբաղվում է այնպիսի խնդիրներով (գրաֆիկական դիզայն, խաղերի մշակում, վեբ ծրագրավորում և այլն), որոնք որևէ կապ չունեն կանաչ տնտեսության և կանաչ աճի սկզբունքների հետ: Իսկ մնացած ընկերությունների հիմնական հաճախորդներն ու թիրախային խմբերը գտնվում են ՀՀ տարածքից դուրս: Սա ոլորտի կարևոր խնդիրներից և բացերից մեկն է, որը առաջ է քաշում փոփոխությունների պահանջ:

5 ՀՀ կառավարության քաղաքականությունը և ռազմավարությունը

5.1 Ընթացիկ քաղաքականություն և գործողություններ

ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի կետերից մեկը նվիրված է կայուն զարգացմանը և կանաչ տնտեսությանը:¹¹³ Մասնավորապես, արձանագրվում է, որ «Էներգետիկա» սեկտորի (Էներգակիրների այրման արդյունքում՝ Էներգիայի արտադրության, փոխանցման և սպառման, ներառյալ տրանսպորտի համար) արտանետումների մասնաբաժինը Հայաստանի Հանրապետության ածխածնային արտանետումների կառուցվածքում կազմում է շուրջ 70 տոկոս, որի առանցքային բաղադրիչներից է Էլեկտրաէներգիայի արտադրությունը, իսկ արդյունաբերության մասնաբաժինը մոտ 5 տոկոս է:

Հաշվի առնելով, որ Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում բնական գազի մասնաբաժինը կազմում է 41 տոկոս, իսկ Էլեկտրաէներգիայի ներքին սպառման գամբյուղում՝ 29 տոկոս, տևալի տնտեսությունների 90 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում է որպես ջեռուցման և սննդի պատրաստման միջոց, իսկ անձնական օգտագործման ավտոմեքենաների 80 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում է որպես **վառելիք, կարևորվում են գալիք 45-55 տարիների ընթացքում բնական գազի համաշխարհային պաշարների սպառման վերաբերյալ կանխատեսումները, քանի որ բնական գազի հասանելիության անկումը, իսկ հետագայում նաև վերացումը հանգեցնելու են գազի շուկերի տնտեսության բոլոր ոլորտներում:**

Այս առումով, մասնավորապես, ուշադրություն է դարձվում այն հանգամանքներին, որ տաքացման և սննդի պատրաստման գազահենք համակարգերը փոխարինվելու են Էլեկտրականություն սպառող համակարգերով, բարձրանալու են մարդատար փոխադրումների գները հանրային և անձնական տրանսպորտային միջոցներ օգտագործողների համար, ինչը կհանգեցնի Էլեկտրական շարժիչներ օգտագործող ավտոմեքենաների մրցունակության բարձրացմանը: Արդյունաբերության ոլորտի Էներգատար ձեռնարկությունների մրցունակության պահպանման համար անհրաժեշտ կլինի անցում կատարել Էլեկտրականություն օգտագործող տեխնոլոգիական գործընթացներին, ինչը կբարձրացնի Էլեկտրական Էներգիայի պահանջարկը, որի բավարարումն հնարավոր կլինի վերականգնվող, ատոմային և ջրային Էներգետիկայի միջոցով:

Ծրագրով արձանագրվում է, որ կանաչ տնտեսություն ձևավորելու առաջնահերթ նպատակն է նոր, ցածր ածխածնային Էներգետիկ իրականությանը տնտեսության պատրաստվածության ապահովումը, ինչի համար անհրաժեշտ է լինելու նվազեցնել բնական գազի դերը Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում՝ այն փոխարինելով վերականգնվող և այլընտրանքային Էլեկտրական Էներգիայի աղբյուրներով, պատրաստվել Էլեկտրաէներգիայի փոխանցման ենթակառուցվածքը պահանջարկի աճի և կառուցվածքի փոփոխությանը, նախապատրաստել ենթակառուցվածքների անցումը դեպի այլընտրանքային տրանսպորտ,

¹¹³ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագիր, <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

ինչպես նաև նպաստել բնակչության կողմից սննդի պատրաստման և ջեռուցման էլեկտրական համակարգերի ձեռքբերմանը:

Վերջապես, ծրագրում ընդգծվում է, որ Հայաստանի սահմանափակ բնական պաշարները թելադրում են բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության և տնտեսական գործընթացներում առավելագույնս պահպանման հրամայականը, ինչից ելնելով կանաչ տնտեսության ձևավորման երկրորդ նպատակն է տնտեսական ցիկլում բնական ռեսուրսների առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծումը:

Կանաչ և կայուն տնտեսական զարգացման, այդ թվում վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի արտադրությունում 50 տոկոսի, իսկ էլեկտրական շարժիչով մեքենաների մասնաբաժինը 10 տոկոսի հասցնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակը մշակել կանաչ և կայուն տնտեսության զարգացման ռազմավարություն, որտեղ պետք է հստակ արտացոլված լինեն կանաչ և կայուն տնտեսության զարգացման ուղղությունները և նախատեսվող գործողությունների շրջանակը, ինչպես նաև կանաչ տնտեսության խթանման և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների իրագործման մեխանիզմները: Ռազմավարության մշակումն իրականացվելու է Էկոնոմիկայի, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների կողմից:¹¹⁴:

2021թ. ապրիլին հաստատված Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030թթ. **ազգային մակարդակով սահմանված գործողությունները** հիմնված են կանաչ տնտեսություն սկզբունքի վրա և համատեղելի են Կայուն Չարգացման Նպատակների հետ, որոնք արտացոլված են Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներում:¹¹⁵ ԱՍԳ կարևորագույն բաղադրիչներից մեկն է ՀՀ հանձնառությունը մինչև 2030թ. ապահովել ջերմոցային գազերի 40 տոկոսային նվազեցում՝ 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության առումով նախատեսվում է սահմանափակել կլիմայի փոփոխության ազդեցություններն այնպիսի ժամանակահատվածով, որը թույլ կտա ապահովել Էկոհամակարգերի բնականոն հարմարեցումը կլիմայի փոփոխություններին:

Հարմարվողականության ազգային ծրագրի գործընթացի նպատակներից ելնելով սահմանվել են առաջնահերթություններ՝ ելնելով կլիմայի փոփոխության նկատմամբ տարբեր ոլորտների խոցելիության աստիճանից: Այդպիսով առաջնահերթություն է տրվել հետևյալ ոլորտներին՝ բնական Էկոհամակարգեր (ջրային և ցամաքային, ներառյալ անտառային Էկոհամակարգեր, կենսաբազմազանություն և հողածածկույթ), մարդու առողջություն, ջրային

¹¹⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր, <https://www.gov.am/files/docs/4685.pdf>

¹¹⁵ փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030թթ. ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին ՀՀ կառավարության 22 ապրիլի 2021 թվականի N 610-L որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=151985>

ռեսուրսների կառավարում, գյուղատնտեսություն, ներառյալ ձկնաբուծություն և անտառային տնտեսություն, էներգետիկա, բնակավայրեր և ենթակառուցվածքներ, ինչպես նաև զբոսաշրջություն:¹¹⁶

Հայաստանի Հանրապետությունն ընդունում է կլիմայի փոփոխության հարմարվողականության էկոհամակարգային մոտեցումը, որն ակնկալվում է ընդգրկել յուրաքանչյուր ոլորտի քաղաքականության կառուցվածքում, ինչը հնարավորություն է ընձեռում ոլորտային և տեղական մակարդակում իրականացվող գործողություններում ներառել այնպիսի քաղաքականություն և մեխանիզմներ, որոնք նպաստում են կենսաբազմազանության և էկոհամակարգերի սպասարկման բարելավմանը, եկամուտների ստեղծմանը, աղքատության կրճատմանը, ենթակառուցվածքների հարմարվողական զարգացմանը կամ դիմակայունությանը և ածխածնային արտանետումների մեղմման հարակից օգուտների ստացմանը:

ՀՀ կառավարության կողմից իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք տեղավորվում են կանաչ տնտեսության հայեցակարգի սահմանման մեջ: Մասնավորապես, 2019թ. Հարկային օրենսգրքում լրացում է կատարվել, որով բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների՝ մեծ, միջին և փոքր ավտոբուսների, մարդատար տրանսպորտային միջոցների, մոտոցիկլետների և մոպեդների ներմուծման և օտարման համար մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը գրոյացվել է ավելացված արժեքի հարկը, ինչի շնորհիվ 2019թ. հուլիսի 1-ից 2021թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 5291 էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոց, մինչդեռ 2017 և 2018թթ. ներմուծվել էր, համապատասխանաբար, 29 և 12:¹¹⁷ Տվյալ արտոնությունը երկարաձգվել է մինչև 2024թ. հունվարի 1-ը:

2020թ. Կառավարության կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման 15-րդ ծրագրի շրջանակներում Հայաստանի մի շարք գետերի ափերին տնկվեցին ուռենու շուրջ երկու միլիոն կտրոններ, այդպիսով պայմաններ ստեղծելով ափերի հետագա էրոզիան կանխարգելելու համար: Բացի դրանից, ճգնաժամի պայմաններում հնարավոր եղավ եկամուտի լրացուցիչ աղբյուր ստեղծել հարյուրավոր քաղաքացիների համար:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից արգելվել է մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակների վաճառքը, ինչպես նաև դրանց անվճար տրամադրումն առևտրի օբյեկտներում, առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերում, շրջածախ առևտրի կետերում, ինչպես նաև բացօթյա առևտուր իրականացնելիս: Արգելքը չի վերաբերում՝ կշռափաթեթավորման համար նախատեսված տոպրակներին և երկրորդային հումքից արտադրված տոպրակներին:

Էներգետիկայի մասին ՀՀ օրենքով նախատեսվում է, որ բացառապես սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման

¹¹⁶ Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 13 մայիսի 2021 թվականի N 749-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152612>
¹¹⁷ <http://www.mnp.am/news/news-transport-aah-azatvel>

գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5.8 ՄՎտ, մինչև 150 կՎտ (ներառյալ) հզորությամբ արևային էլեկտրակայանների արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում, բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, ինչպես նաև դիզել գեներատորային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը, և բացառապես սեփական կարիքների համար, ինչպես նաև մինչև 150 կիլովատ դրվածքային հզորությամբ ինքնավար արտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում ենթակա չեն լիցենզավորման:

Գյուղատնտեսության կանաչ աճի տեսանկյունից կարևոր են ոլորտի աջակցության պետական ծրագրերը: Ինչպես արդեն ներկայացվել է, ՀՀ Կառավարության կողմից նախաձեռնվել են գյուղատնտեսության աջակցման մի քանի ծրագրեր, որոնք ունեն նաև կանաչ սկզբունքների շեշտադրում, քանի որ աջակցություն ստացողները պետք է անցում կատարեն ինտենսիվ գյուղատնտեսության՝ կիրառելով կաթիլային ոռոգում, կառուցելով խելացի անասնազոմեր, ջերմոցներ և այլն:

Բացի այդ, գործում է լիզինգի պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում գյուղատնտեսական կազմակերպությունները կարող են արտոնյալ պայմաններով ձեռք բերել մինչև 1 մլրդ դրամ արժեքով սարքավորումներ: Համաձայն ծրագրի պայմանների, տարեկան փաստացի տոկոսադրույքը 12% է, որից 10%-ը սուբսիդավորվում է պետության կողմից: Սա իհարկե զգալի աջակցություն է գյուղատնտեսության ոլորտին և կարող է խթանել կանաչ տեխնոլոգիաների աստիճանական ներդրմանը:

Ինչպես երևում է վերը ներկայացվածից, ՀՀ-ում պետական մասշտաբով որոշակի քայլեր են ձեռնարկվում ցածր ածխածնային միջավայր ունենալու, բնական գազից կախվածությունը թուլացնելու ուղղությամբ: Այս առումով կարևորվում է էլեկտրական շարժիչով մեքենաների դերը: Բացի այդ, առանձին ծրագրեր են մշակվում կանաչ սկզբունքների ներդրումը տարբեր ոլորտներում խրախուսելու նպատակով, որոնց թվում են գյուղատնտեսությունը, էներգետիկան, առևտուրը, տրանսպորտը և այլն:

5.2 Ակնկալվող զարգացումներ

Բացի մինչև 2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակը կանաչ և կայուն տնտեսության զարգացման ռազմավարության մշակման ծրագրից, պլանավորվում են մի շարք այլ գործողություններ, որոնց իրականացումն ուղղակի կապ կունենա կանաչ տնտեսության զարգացման հետ:

Մասնավորապես, համաձայն Հարմարվողականության ազգային ծրագրի, մինչև 2025թ. նախատեսվում է մշակել կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրեր ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության, էներգետիկայի, առողջապահության, զբոսաշրջության, անտառների կառավարման, տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտներում, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզերի համար: Բացի այդ, պլանավորվում է իրականացնել կլիմայի

փոփոխության գործոնների ինտեգրում «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մեջ և հարմարվողականության միջոցառումների ներդրում¹¹⁸:

Պինդ կենսավառելիքի արտադրության և գործածության խթանման նպատակով շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել ջեռուցման նպատակով պինդ կենսավառելիքի օգտագործման կայուն զարգացման ռազմավարությունը և ճանապարհային քարտեզը, ինչը, բացի ոլորտի զարգացման ուղղություններից, ֆինանսական վերլուծությունից, միջազգային փորձի ուսումնասիրությունից ներառում է նաև պետական կառավարման մարմինների կողմից իրականացվելիք հստակ միջոցառումներ և դրանց իրականացման ժամկետներ:

Ռազմավարության և ճանապարհային քարտեզի ընդունումն ուղղակիորեն բխում է ԱՍԳ ներքո մինչև 2030թ. ջերմոցային գազերի արտանետումները 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ 40 տոկոսով նվազեցնելու մասին ՀՀ պարտավորության իրականացման ապահովման անհրաժեշտությունից, քանի որ կենսավառելիքը համարվում է կլիմայի վրա չեզոք ազդեցություն ունեցող էներգիայի աղբյուր: Կենսավառելիքի այրումը դեպի մթնոլորտ է բաց թողնում ճիշտ այնքան ածխածնի երկօքսիդ, որքան կլանվել է բույսերի աճի ընթացքում:

5.3 Բացեր և հնարավորություններ

Կանաչ տնտեսության ազգային հայեցակարգային փաստաթղթի բացակայությունը թույլ չի տալիս լիովին հիմնավորված եզրակացություններ անել Հայաստանում դրա զարգացման հեռանկարների վերաբերյալ: Վերևում նկարագրված առանձին քայլերը և միջոցառումները, հիմնականում տեղավորվելով կանաչ տնտեսության տրամաբանության մեջ, այնուամենայնիվ պակաս ուշադրություն են դարձնում, մասնավորապես, սոցիալական հարցերին, իսկ հիմնական շեշտը դրված է տնտեսական և բնապահպանական բաղադրիչների վրա:

Այս առումով, տարբերվում է կառավարության կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման 15-րդ ծրագիրը, որի իրականացումն ունեցավ ուղղակի բնապահպանական և սոցիալական արդյունքներ՝ գետերի էրոզացված ափերի վերականգնման հնարավորության ստեղծման և համավարակի պայմաններում քաղաքացիների համար եկամտի այլընտրանքային՝ թեև կարճաժամկետ, բայց բավարար եկամտի աղբյուրի ստեղծման տեսքով: Նման՝ բնության վրա հիմնված ավելի մեծածավալ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և իրականացումը կարող է զգալի ազդեցություն ունենալ կանաչ տնտեսության զարգացման համար:

Կանաչ տնտեսության զարգացման ուղղությամբ ակնկալվող զարգացումները պետք է լինեն առավել շրջահայաց, հավասար ուշադրություն դարձնելով կանաչ տնտեսության հիմքում ընկած բոլոր բաղադրիչներին: Վերականգնվող էներգետիկայի զարգացման հրամայականն անվիճելի լինելով, այնուամենայնիվ, խնդրահարույց է որպես կանաչ տնտեսության զարգացման հիմքում ընկած գործոն դիտարկելու առումով, քանի որ սահմանափակ

¹¹⁸ ՀՀ կառավարության որոշումը կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը եվ 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152612>

ազդեցություն ունի սոցիալական առումով, իսկ դրա ուղղակի տնտեսական արդյունքները հասանելի են սահմանափակ թվով շահառուների:

Մեկ այլ խնդիր է կանաչ տնտեսության և դրա տրամաբանության մեջ տեղավորվող տարբեր նախաձեռնությունների վերաբերյալ հանրային իրազեկման պակասը: Երկարաժամկետ արդյունքներ ապահովելու համար անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել այս բաղադրիչին, որպեսզի ապահովվի հնարավորին մեծ թվով շահառուների ներգրավում, իսկ օրենսդրական և քաղաքականությունների փոփոխություններն ապահովեն ցանկալի արդյունքները:

Վերջապես, հատուկ ուշադրություն է պետք դարձնել կանաչ տնտեսության զարգացման գործընթացում ՓՄՁ-ների առավել ակտիվ ներգրավմանը: Կառավարության կողմից մշակվելիք կանաչ տնտեսության զարգացման հայեցակարգում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տնտեսության այս հատվածին, հասկանալ դրանց կարիքները և կանաչ տնտեսության զարգացման գործում դրանց առավել մեծ նպաստն ապահովելու համար անհրաժեշտ քայլերը, ներառյալ հնարավոր խոչընդոտների վերացումը:

• **Հավելված Ա – Բացատրական բառացանկ**

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՎՁԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
մլրդ.	Միլիարդ
մլն	Միլիոն
տ	Տոննա
նհ	Նավթի համարժեք
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
խմ	Խորանարդ մետր
քմ	Քառակուսի մետր
կգ	Կիլոգրամ
հա	Հեկտար
ԿԳՄՍ	Կրթություն, գիտություն, մշակույթ և սպորտ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՋԷԿ	Ջերմային էլեկտրակայան
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ԱԷԿ	Ատոմային էլեկտրակայան
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՊՄԺԾԾ	Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՀԱՊ	Հարմարվողականության ազգային պլան
ԿԿՀ	Կանաչ կլիմայի հիմնադրամ